



Մանկապատանեկան
ընթերցանության
ոսկե ֆոնդից

📄 էջ 32



Սյունեցի գրողները
մանուկների
համար

📄 էջ 35



Հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ
Նախարարի տեղակալ Արա
Խզմալյանի հետ

📄 էջ 4



Կապանի գեղարվեստի
մանկական դպրոցում նոր
ժամանակներ են

📄 էջ 29

Սյունյաց երկիր մշակութային

ՈՒՐԲԱԹ
10 ՄԱՐՏԻ 2023Թ.
№ 9

www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴՐՈՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱԾԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ
ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

📍 3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
☎ (+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
✉ syuniacyerkir@mail.ru 🌐 www.syuniacyerkir.am



2022 թ. օգոստոսի 8-15-ը կայացած «Պրահայի
աստղեր» միջազգային մրցույթ-փառատոնում Կապանի
Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի
աշակերտն արժանացավ Grand Prix մրցանակի:

Նարեկ

Սարգսյան



2022 թ. դեկտեմբերի 15-19-ը կայացած «Պրահայի աստղեր»
խորագրով Արվեստի միջազգային փառատոնում Սիսիանի
Է. Ասյանի անվան մանկական երաժշտական դպրոցի
վոկալ բաժնի աշակերտուհին իր հիասքանչ կատարմամբ
«Ակադեմիական երգեցողություն» անվանակարգում
արժանացավ Grand Prix մրցանակի:

Անիկ

Սահակյան

**Սյունիք. դրվագներ մեր
մանուկների գեղարվեստական
ինքնադրսևորումներից**

Երեխաների դաստիարակության տեսլականը

Սյունիքի քանդակագործական նմուշներում




«Սիրո մեղեդի» գործը՝ Ռ. Մելիքյան փողոցում,
երաժշտական ուսումնարանի մոտակայքում
(հեղինակ՝ Բաղդասար Սարգսյան)




Կապանի հիվանդանոցի
(ծննդատան) մուտքի
քանդակը




Ջաջարան, «Հավեր-
ժության գաղտնիք»,
հեղինակ՝ քանդակագործ
Աշոտ Ասատրյան, 2013թ.



Դավիթ Բեքանյան,
«Կուլայով տղան» Ջա-
ջարանի կենտրոնական
պուրակում



Այցելությունն սյունեցի փոքրիկների զարմանահրաշ մոլորակ



ԱՄԱՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի սույն համարով տեղափոխվում ենք փոքրիկների մոլորակ...

Երեխաների գեղարվեստական ինքնադրսևորումների առանձին դրվագներին անդրադառնալը, անշուշտ, համարի հիմնական առանցքն է։ Բայց քանի որ գեղարվեստական գործունեությունը գեղագիտության կարևոր հիմնասյուղներից է՝ նպատակահարմար գտանք թեմային մոտենալ համակողմանիորեն։

Մասնավորապես անդրադառնում ենք գեղարվեստագեղագիտական կրթությանն ու դաստիարակությանն առնչվող և մեր օրերում հրատապություններ կայացնող ու կիրառական նշանակություն ունեցող որոշ հարցերի։

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, արվեստագիտության թեկնածու Արա Խզմայանի հետ քննարկում ենք ոլորտում որդեգրված պետական ռազմավարությունը, այդ ուղղությամբ իրականացվող կրթամշակութային ծրագրերի ընթացքը, ինչպես և աճող սերնդի լիարժեք ձևավորման գործում գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության դերը։

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի հետ գրուցում ենք մանկական գրականության, մանկական մամուլի ներկա վիճակի և այն առաքելության մասին, որ ունի մանկական գրականությունը երեխաների գեղարվեստական կրթության ու գեղագիտական դաստիարակության գործում։ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Յուրի Յուզբաշյանն անդրադարձ է կատարում հայ երաժշտամանկավարժական մտքին և հայ դպրոցում երաժշտական կրթության խնդիրներին։

Կոմպոզիտոր Էդմոնդ Մակարյանի հետ քննարկում ենք մանկական երաժշտությանն առնչվող մի քանի հարց, այդ թվում՝ երաժշտական կրթության դրվածքը մեզանում։

Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գեղանկարիչ Արա Հակոբյանի հետ գրույցում անդրադառնում ենք գեղարվեստական կրթության վիճակին, ինչպես և կերպարվեստի ու հատկապես գեղանկարչության դերին՝ երեխաների գեղագիտական դաստիարակության գործում։

Համարի առանցքը, ինչպես նշեցինք,

սյունեցի երեխաների գեղարվեստական գործունեությունն է. տարիքային ընդգրկումը՝ մանկապարտեզի ավագ տարիքի երեխաներից մինչև 14-15 տարեկան դպրոցականներ։ Ժամանակային ընդգրկումը. հիմնականում ներկայացվում են ներկայիս կատարողները կամ գործող համույթներն ու խմբակները, նաև այն անհատները, ովքեր գեղարվեստի որևէ ոլորտում ինքնադրսևորվել են ոչ վաղ անցյալում, և որոնց կատարողական արվեստը մինչև հիմա մարդկանց հիշողության մեջ է։ Մի խոսքով՝ առաջին անգամ փորձ արվեց հայտնաբերելու մարզի շնորհաշատ, տաղանդավոր և կարող երեխաներին, ովքեր աչքի են ընկել գեղարվեստական գործունեությամբ կամ այդ ճանապարհին են։

Համարի պատրաստման ընթացքում վերստին ակնհայտ դարձավ, որ Սյունիքում ունենք առանձնահատուկ կարողությունների և հմտությունների տեր երեխաներ նաև գեղարվեստի ոլորտում։

Հանդիպեցինք երաժշտական լսողությամբ, ռիթմի զգացողությամբ ու կատարողական բարձր վարպետությամբ փոքրիկների, տեսողական հիշողությամբ և տարածական պատկերումներով աչքի ընկնող նկարիչների, կերպարի մեջ ներթափանցելու ու մարմնավորելու կարողությամբ օժտված դերասան երեխաների։

Վերստին բացահայտեցինք հաճելի մի իրողություն. Սյունիքում հետաքրքիր ավանդույթներ կան զարդարվեստի, ինչպես և գեղարվեստական խեցեգործության ոլորտում։ Կապակի արվեստի մանկական դպրոցի օրինակը բավարար է դրանում համոզվելու համար։

Ամենակարևորը՝ այդ ամենի հիմքում ոգեշնչվածությունն է, որի օգնությամբ բազմաթիվ երեխաներ նվաճել են գեղարվեստական գործունեության բարձունքներ, հեղինակավոր մրցանակների արժանացել միջազգային մրցումներում և փառատոներում։

Եվ նրանցից յուրաքանչյուրը հպարտություն է բերել սյունեցիներին...

Իրոք, ինչպես կարելի է չհիանալ ու չհպարտանալ...

Կապակի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի սան, տասնամյա սրնգահար Նարեկ Սարգսյան, ով «Պրահայի աստղեր» միջազգային մրցույթ-փառատոնում 2022-ին արժանացավ «Գրան Պրի» մրցանակի։

15-ամյա Դավիթ Հարությունյան, ում կատարումներն ունկնդրելուց հետո Գորիս անունը Չեխիայում բռնե ծափահարությունների արժանացավ։

Մարի Էլյան աղջնակը Կապակից, ով ասես ճախրում է բեմում։

Քաջարանցի Սառա Ստեփանյան, ով 2022-ին «Պրահայի աստղեր» փառատոնում «Ակադեմիական երգեցողություն» անվանակարգում արժանացավ առաջին կարգի մրցանակի։

Սիսիանի հրաշալի դուստր Անիկ Սահակյան, ում կատարումներից լույս է ծորում, ով Չեխիայի Հանրապետության մայրաքաղաքում «Պրահայի աստղեր» մրցույթում «Ակադեմիական երգեցողություն» անվանակարգում արժանացավ «Գրան Պրի» մեծ մրցանակի։

Շնորհալի գեղանկարչուհի Անժելիկա Ենգիբարյան, ով Մոսկվայի հեղինակավոր փառատոնում լավագույնս ներկայացրեց ոչ միայն Քաջարանի արվեստի դպրոցի, այլև Հայաստանի անունը։

Այս թվարկումները կարելի է շարունակել, բայց բավարարվենք ասվածով և մյուս անուններին ծանոթանանք համարի էջերում։

Երեխաների գեղարվեստական գոր-

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխաների դաստիարակության տեսլականը Մյունիքի քանդակագործական նմուշներում..... 2

Ξ ԽՄԲԱԳՐԱԿՆ

Այցելությունն սյունեցի փոքրիկների զարմանահրաշ մոլորակ (Սամվել Ալեքսանյան)..... 3

Ξ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ և ՀՈՂՎԱԾՆԵՐ

Մարգերի մասնակցությունը՝ կարևորագույն սկզբունք և ռազմավարական առաջնահերթություն կրթամշակութային ծրագրերում (հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմայանի հետ)..... 4

Հարցազրույց Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի հետ 7

ԷՂՄՈՆԴ ՄԱԿԱՐՅԱՆ. «Մենք հիմա, քան երբևէ, ունենք ազգային գաղափարախոսությունը և հայրենասիրությունն էլ ավելի սերմանելու խնդիր» 9

Հայ երաժշտամանկավարժական միտքը և երաժշտական դաստիարակությունը հայ դպրոցում (Յուրի Յուզբաշյան) 11

ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ. «Ժամանակները փոխվել են, միջոցները՝ նույնպես, սակայն հետաքրքրությունը, որ առկա է երեխաների մեջ՝ կերպարվեստի հանդեպ, ապշելու է» 12

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՊԱՐԱՐՎԵՍ

Քաջարանցի պարուհու տպավորիչ հաղթանակը (Վահրամ Օրբեյան)..... 14

Այս աղջնակը չի պարում, այլ ասես ճախրում է բեմում (Արթուր Գաբրիելյան) 14

«Լիլի Նարինյան» պարային ստուդիան մնայուն հետք է թողնում (Միլենա Բախշյան)..... 15

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ԵՐԳԱՐՎԵՍ

.... Եվ Չեխիայում հնչեց Գորիս անունը (Վաչե Մկրտչյան) 16

Արեն Պետրոսյան տենորը (Գայանե Հարությունյան) 17

Լույսի ծնունդ գագցինք քո երգերում (Էվելինա Թադևոսյան) 17

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ԲԵՄԱՐՎԵՍ

Քաջարանի արվեստի դպրոցի ելքայական բեմերը (Արթուր Գաբրիելյան)..... 18

Թատերական տոն ոչ միայն երեխաների համար (TATRON-DRAMA.AM) 18

Կապանի արվեստի մանկական դպրոցի սաները՝ միջազգային փառատոներում (Արթուր Գաբրիելյան)..... 19

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՆՎԱԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՎԵՍ

Եվա Մանգասարյանը՝ Սիսիանից, ումից տաղանդ ու շնորհ է հորդում (Էվելինա Թադևոսյան) 20

Տասնամյա դափնեկիր սրնգահարը (Վահրամ Օրբեյան)..... 20

Կախարդական ֆլեյտայի նվիրյալը 21

Սիսիանցի շնորհաշատ աղջկա՝ քանոնահարուհի Անի Միմոնյանի երազանքների հեքիաթը (Էվելինա Թադևոսյան) 21

Գորիսի 30-ամյա փողային նվագախումբը համալրված է երեխաներով (Վաչե Մկրտչյան)..... 22

Շահանե Գասպարյան ջութակահարը (Գայանե Հարությունյան) 23

Կապանցի շվիահարն ու դուդուկահարը (Գայանե Հարությունյան) 23

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ԽՈՍՔԱՐՎԵՍ

ՎԻԳԵՆ ԱՂԱՅԱՆ. «Պատիվ ունեմ ներկայանալ...» 24

Ես՝ Քրիստինե Ադամյանս 25

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Փոքրիկ նկարչուհին Մեդրիից (Միրուն Մարգարյան)..... 26

Այվանք գյուղի սկսնակ նկարչուհի Վարդուհի Դանիելյանը (Արվի Ադամյան) 26

Շնորհալի գեղանկարչուհին, ով Մոսկվայում բարձր պահեց մեր հանրապետության անունը (Արթուր Գաբրիելյան) 27

Գունաշխարհի թարգմանը՝ Սիսիանից (Էվելինա Թադևոսյան) 27

Ξ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ԿՐԹՕՁԱԽՆԵՐ

Կապանի գեղարվեստի մանկական դպրոցում նոր ժամանակներ են (Վահրամ Օրբեյան)..... 29

«Շուշիի ավերված Մուրք Դազանչեցոցը կվերականգնվի իմ նախագծով», - երագում է Գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղի սան Հայկ Շեգունցը (Վաչե Մկրտչյան)..... 30

Ξ ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ՖՈՆԴԻՑ

Ներսես Շնորհալի, հանելուկներ 32

Միսիթար Գոշ, առակներ 33

Վարդան Այգեցի, առակներ 34

Ξ ՍՅՈՒՆԵՑԻ ԳՐՈՂՆԵՐԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՎՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ. ինքը «Աղվեսագիրքը» փոխադրեց աշխարհաբարի..... 35

«Հիմար մարդը», հեքիաթ, Ակսել Բակունց 35

Մարի Առաքելյան..... 36

Էդուարդ Չոհրաբյան 37

Մերո Խանգաղյան..... 38

Ξ ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈԱՒԼՈՒՐ39

Ξ ԼԵԳԵՆԴՆԵՐ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Օխտն օրորոցի լեգենդը (Քարահունք)..... 40

Ինը մանուկ աղբյուրը (Արկադի Ծատուրյան)..... 40

Մարգերի մասնակցությունը՝ կարևորագույն սկզբունք և ռազմավարական առաջնահերթություն կրթամշակութային ծրագրերում

Սյունիքի մարզի մանուկների մշակութային ինքնադրսևորումներին անդրադառնալու մեր նախաձեռնությունն ինքնանպատակ կլինի, եթե լույս չսփռենք (հանրապետության մասշտաբով) երեխաների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը, այդ նպատակով ձեռնարկվող քայլերի, մանուկների մասնագիտական կողմնորոշման, շնորհալի երեխաներին ի հայտ բերելու ջանքերի և նրանց ցուցաբերվող աջակցության վրա: Այդ հարցերը պարզաբանելու և լուսաբանելու նպատակով էլ գրուցեցինք ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմայանի հետ:

Արոն Խզմայան, նախ շնորհակալություն՝ մեր հանդեսի հարցերին (այս անգամ ևս) պատասխանելու կամեցողության համար: Նորություն ասած չենք լինի, եթե փաստենք՝ երեխաների ամբողջական և լիարժեք դաստիարակության համար չափազանց մեծ նշանակություն ունեն գեղագիտական դաստիարակությունը և ընդհանրապես մանուկներին մեր մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելը, փոքրիկների մեջ մշակույթի հանդեպ հետաքրքրություններ առաջացնելը, նրանց գեղարվեստական ընդունակություններն ի հայտ բերելն ու զարգացնելը:

Ակնհայտ այդ ճշմարտությունը, միևնույն տարբեր ընկալումներ ունի և իրականացման տարբեր ուղղություններ: Խնդրո առարկայի վերաբերյալ Ձեր պատկերացումը կուզենայինք իմանալ, կամ գուցե այսպես ձևակերպենք հարցը՝ երեխաների գեղագիտական դաստիարակության տեղն ու դերն աճող սերնդի ձևավորման համակարգում: Ենթադրում ենք՝ Ձեր պատասխանում կարտացոլվեք պետության որդեգրած տեսլականն ու քաղաքականությունն այդ ոլորտում:

– Մշակույթի պահպանման և զարգացման ռազմավարության կարևոր դրույթներից ու գաղափարներից, թի-



րախային ցուցիչներից մեկը մշակույթի ոլորտում համախառն ընդգրկվածության ապահովումն է ըստ սեռի, տարիքի, մարզերի, հաշմանդամության, սոցիալական խմբերի և այլն: Այսինքն՝ մշակույթը պետք է լինի առավելագույն ընդգրկուն, առավելագույնս ներառական, և այս գաղափարի մեջ, բնականաբար, կարևորագույն տեղում անչափահասներն են, մեր պատանիներն ու աղջիկները, աշակերտները, ովքեր ոչ միայն մեր ապագան են ու մեր երկրի վաղվա տերերը, այլև՝ մշակույթի վաղվա սպառողները: Այդ մոտեցմամբ, նաև մեր կրթական-մշակութային նախագծերով նախ՝ ձևավորում ենք մշակութային պահանջարկ, ասել է թե՛ մշակույթը պետք է դառնա պահանջ: Մարդը պետք է լիարժեք չհամարվի առանց մշակույթի և այնքան պետք է վաղ տարիքից ընդգրկված լինի մշակութային հարաբերությունների մեջ, մշակութային հաղորդակցության մեջ, այնքան պետք է նրա առօրյան լցված լինի մշակույթով, որ դա պարզապես դառնա բնական պահանջ, ինչպես քաղցն է, ծարավը... Ջրի բացակայության դեպքում մարդն անհանգստանում է և ձգտում դեպի ջուրը, այդպես էլ մշակույթի բացակայության դեպքում պետք է ազդանշանները, ազ-

դակները սկսեն աշխատել ու անհանգստացնել մարդուն: Ու որքան վաղ սկսենք աշխատանքը, այդ պահանջարկի ձևավորումը, այնքան ավելի ընդգրկուն է լինելու վաղվա մշակութային շուկան: Կրթական-մշակութային նախագծերն էլ, որոնք իրականացվում են, բնականաբար, կոչված են ձևավորելու գեղագիտական ճաշակ ու չափանիշ երեխաների շրջանում: Եվ, ի վերջո, նպաստելու մասնագիտական կողմնորոշմանը:

Բազմաթիվ դեպքեր ունենք, երբ երիտասարդը չգիտակցված, ինքնաբերաբար, անպատրաստ ու ակամա հայտնվում է որևէ բուհում և 4-5 տարի սովորելով այդ բուհում՝ ավարտում է այն ու այլևս չի զբաղվում տվյալ մասնագիտությամբ, որովհետև դա իր կոչումը չէ, դրանից ինքը հաճույք չի ստանում: Այսինքն՝ իր կարողությունները բոլորովին այլ տեղ պետք է դրսևորվեն: Այդպես են շատ հաճախ մարդիկ ընդունվում Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա կամ այլ բուհեր: Եվ եթե վերլուծենք ու տեսնենք, թե ավարտողներից քանիսն է զբաղվում իր մասնագիտությամբ, կգիտակցենք՝ մասնա-

գիտական կողմնորոշման հարցում մեծ բացթողում է եղել...

– Եվ ի՞նչ ճանապարհով, եղանակով կամ միջոցով են Ձեր նկատառումները կյանքի կոչվում: Կա՞ պետական ռազմավարություն, և նշանակալից ի՞նչ ծրագրեր կամ նախագծեր կան՝ միտված երեխաների գեղագիտական դաստիարակությանը, մշակույթ-մանուկներ ողջամիտ հաղորդակցության ապահովմանը:

– Ունենք աննախադեպ ծավալի կրթամշակութային նախագծեր, ունենք շարունակական նախագծեր, նոր նախաձեռնություններ՝ «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիր, «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա», «Քույր դպրոցներ», «Դասարան+Դասական», «Արվեստանոց», «Դպրոցականի ֆիլհարմոնիա», «Չարդագիր», «ԴասԱրվեստ» և այլն... Դրանցով մեր արվեստագետները հնարավորություն են ունենում անմիջապես շփվել աշակերտների հետ: Աշակերտներն էլ հնարավորություն են ունենում հարցեր ուղղել մասնագետներին, այսինքն՝ հսկայական տեղեկատվական միջավայր է ձևավորվում հենց աշակերտի համար, որպեսզի նա վաղ տարիքից գիտակցի իր հետաքրքրությունների իրական շրջանակը: Ավելին՝ այդ կրթական-մշակութային նախագծերով, ըստ էության, բարձրացնում ենք մշակույթի և մշակութային գործի հանրային հեղինակությունը, ճանաչելիությունը, վարկանիշը, և մշակույթը դառնում է մի լուրջ ոլորտ:

Տեսնեք՝ թատրոնի մասին մեր երեխաները շատ հաճախ պատկերացում են կազմում զվարճալի կատակախոսություններից, կատակաբանություններից, հաղորդումներից, տնազներից, նմանակումներից՝ կարծելով՝ դա է թատրոնը: Իրականում, միևնույն, թատրոնը շատ ավելի բարդ ինստիտուտ է, շատ ավելի բարդ կառույց, որն ունի և՛ արտադրական հատված, և՛ բարդ ստեղծագործական հարաբերությունների դաշտ, որը մի քանի շերտից է կազմված:

«Դասարան+Դասական» նախագծով ցույց ենք տալիս ոլորտի ամբողջ բարդությունը և լրջությունը, որ դա մասնագիտություն է և ոչ պակաս լուրջ մասնագիտություն, քան, ասենք, բժշկի, իրավաբանի: Այսինքն՝ չկան լուրջ և պակաս լուրջ մասնագիտություններ, լրջությունը որոշվում է մեր վերաբերմունքով: Եվ ինչով էլ զբաղվելու լինի վաղվա քաղաքացին՝ պետք է զբաղվի լրջորեն, ու ինչպես ֆրանսիացիներն են ասում՝ «Սեփական անձի հանդեպ՝ հուժմորով, աշխատանքի հանդեպ՝ լուրջ»: Հենց նախընտրած մասնագիտության հանդեպ լրջությունն ենք ուզում ներարկել երեխաների մեջ:

– Դուք թվարկեցիք մի շարք ծրագրեր, որոնք իրականացրել և շարունակում է իրականացնել պետական լիազոր մարմինը՝ նախարարությունը: Ի՞նչ ընդգրկվածություն ունեն այդ ծրագրերը Սյունիքում:

– Գրեթե բոլոր կրթամշակութային նախագծերն իրականացվում են նաև մարզերում: Հանրապետության բոլոր մարզերն ընդգրկված են նախագծերում...

Սյունիքում իրականացվել են «Քո արվեստը դպրոցում», «Չարդագիր», «Քույր դպրոցներ» նախագծերը: «Փոքրիկ երգիչները» համատեղ հանդես են եկել Սյունիքի պատանի երգիչների և մանկական երգչախմբերի հետ՝ փառատոների շրջանակում: Այնպես որ՝ մարզերի մասնակցությունը հռչակված է որպես կարևորագույն սկզբունք և ռազմավարական առաջնահերթություն կրթամշակութային մեր ծրագրերում:

Մենք մեր ռազմավարության մեջ ունենք մշակույթի ապակենտրոնացման միտում: Եթե նայեք անգամ դրամաշնորհային հայտերը, ապա կտեսնեք՝ նախագծերը համայնքներում մասնակիորեն կամ ամբողջությամբ իրականացնելը խրախուսվում է: Եվ վստահաբար ասում եմ՝ երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ



այսքան նախագծեր իրականացվեն նաև համայնքներում: Ըստ Էուքայան այն, ինչ տեղի է ունենում մայրաքաղաքում, տեղափոխվում է նաև մարզեր, և մարզ-մայրաքաղաք մշակութային համագործակցության ձևաչափերն աստիճանաբար դառնում են ավելի բազմազան: Սա չի սահմանափակվում միայն պատրաստի նախագծերը մարզեր տանելով, մենք կապ ենք ստեղծում կառույցների միջև՝ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն-Համազգային թատրոն, Վանաձորի կամերային նվագախումբ և դիրիժոր՝ մայրաքաղաքից, Վանաձորի տիկնիկային թատրոն-Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն: Խառը ստեղծագործական կազմ, հրավիրված ռեժիսորներ, այսինքն՝ միջհամայնքային կապեր:

Այլ Սպենդիարյանի անվան օպերային և բալետի ազգային ակադեմիական թատրոնն իր 90-րդ թատերաշրջանի բացումն առաջին անգամ իրականացրեց մարզում Լոռիում, Վանաձոր քաղաքում, Հովհաննես Աբեյանի անվան թատրոնում, որը նաև ուղերձ էր ամբողջ դաշտին ու հանրությանը: Այնպես որ՝ մարզերի ընդգրկվածությունը, կարելի է ասել, մեր կրթամշակութային ծրագրերի կարևոր բաղադրիչներից է:

- **Մևուշտ, գնահատելի է ԿԿՄՍ նախարարության դրամաշտրիային քաղաքականության՝ դեպի մարզեր ունեցած ուղղվածությունը: Եվ ուրեմն՝ ի՞նչ պետք է անեն համայնքներում, որ կարողանան գործնականում օգտվել այդ քաղաքականությունից:**

- Պետք է ուշադիր լինել պետական դրամաշտրիային հայտարարություններին, մրցույթներին, ծրագրերին և պարզապես գրագետ կերպով լրացնել հայտը: Ոչ ավել, ոչ պակաս: Այսինքն՝ պետք է շատ ակտիվ լինել, գերակտիվ լինել:

Օրերս նախարարությունում ռազմավարության քննարկում էր. ազգային փոքրամասնություններից մեկի ներկայացուցիչը հարց բարձրացրեց՝ ի՞նչ է արվում ազգային փոքրամասնությունների համար: Ես սասցի՝ արվում է այն, ինչ արվում է Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար:

2019 թվականին, երբ նշանակվեցի փոխնախարար, առաջին բանը, որ չեղարկեցի՝ ազգային փոքրամասնություններ անվանակարգն էր, որովհետև համարում եմ՝ դա արհեստական տարանջատում է, դա խտրականություն պարունակող երևույթ էր, քանզի ազգային փոքրամասնության ներկայացուցիչը բացարձակորեն նույն իրավունքներն ունի և նույն հնարավորությունները, ինչ Հայաստանի Հանրապետության այլ ազգերի և հայ ազգի որևէ այլ ներկայացուցիչ: Այնպես որ՝ իրավունքները և հնարավորությունները թե՛ ազգային պատկանելության, թե՛ բնակության վայրով պայմանավորված, բացարձակապես նույնն են: Չպետք է մտածել՝ եթե մարդն ապրում է, օրինակ, Չինարի գյուղում, ապա ինքն իրավունք չունի մասնակցելու Երևանում հայտարարվող դրամաշտրիային մրցույթներին: Որևէ սահմանափակում չկա, կա ակտիվության, ուշադրության, հետաքրքիր գաղափարներ գեներացնելու և գրագիտության անհրաժեշտություն:

- **Արդյո՞ք Ձեր նշած ծրագրերը շարունակական են լինելու 2023 թվականին, և ի՞նչ նոր ծրագրեր կարող են ավելանալ, նկատի ունենք նախնառաջ Սյունիքի մարզում:**

- Ի դեպ, «Դասկրվեստ» նախագիծը նույնպես իրականացվել է Սյունիքի մարզում. սա մի նախագիծ է, որը վարչապետի անմիջական ուշադրության և հետաքրքրության կենտրոնում է: Այդ նախագծի շրջանակում Հայաստանի ազգային պատկերասրահի կտավները՝ մեծանուն արվեստագետներ Սարյանի, Մինասի, Բաշինջադյանի և այլոց գործերը, գրաֆիկական աշխատանքները տարվել են համայնքներ ու ներկայացվել, վարպետության դասեր են կազմա-



“ Ես շատ բարձր կարծիք ունեմ մեզնից հետո եկող սերնդի մասին, դժվար թե մենք այդ տարիքում այդքան խելոք հարցեր կարողանայինք տալ և այդքան ուշադիր կարողանայինք հետևել մշակութային բովանդակությանը, այդքան ուշադիր լսելնք Նկարչի խոսքը, կոմպոզիտորի խոսքը, դիրիժորի խոսքը, այդքան մեծ հետաքրքրություն ցուցաբերեինք այդ ամենի հանդեպ...”

կերպվել, կրթական ծրագրեր իրականացվել: Եվ կարծում եմ՝ այդ ծրագրին այս տարի ևս կգործի Սյունիքում:

Տվյալ ծրագրի կարևորությունը հետևյալ սկզբունքն է՝ նախ՝ կարևորել, ապա՝ հասկանալ, ինչը նույնիսկ վերածվեց նշանաբանի: Այն ամբողջ «անտուրաժ»-ը, որով պարուրված էր «Դասկրվեստ» նախագիծը՝ չափազանց ուշագրավ է և ուսուցողական. ուսուցանական մեթոդների ուղեկցում, հատուկ մեթոդներ՝ փոխադրման համար, Հայաստանի ազգային պատկերասրահի ղեկավար անձնակազմ, որ գնում է մարզ, և մարզում տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների ղեկավարները՝ աշակերտների հետ, դիմավորում են կտավը: Եվ ամբողջ այդ արարողությունը՝ աշակերտին նախ ստիպում է ուշադրությամբ համակվել օբյեկտի հանդեպ: Այսինքն՝ մեթոդն անհատական է, ձեռնոցներով հատուկ մասնագետներն արկղերը հանում են, մեծ ուշադրությամբ և զգուշությամբ տեղափոխում են հատկացված վայր, բացում են արկղերը... Եվ եթե տեսնեիք երեխաների հիացական բացականչությունները, երբ կտավները դուրս էին բերվում արկղերից, կհասկանայիք, որ մեր նպատակն հասել ենք: Չարմանք, ապա բովանդակային աշխատանք... Այ դա կարևոր պայմաններից մեկն է, մի խոսքով՝ շատ հաջողված ծրագիր: Հայաստանի ազգային պատկերասրահի ղեկավարությունը փայլուն աշխատեց. անգամ ճանապարհների վիճակն էր ուսումնասիրվել, թե որ համայնքում ճանապարհային ինչ խնդիրներ և ինչ ենթակառուցվածքներ կան, ինչ պայմաններ կան այս կամ այն դպրոցում, և ըստ այդմ որոշվել է՝ որ կտավը տանել, որը՝ ոչ: Այնպես որ՝ ամեն ինչ համադրվել է: Այդ ծրագիրը կլինի շարունակական...

Ես մոռացա նշել՝ նաև «Ակունք»-ը եղավ Սյունիքում, մեր ազգագրական համույթը, ընդ որում եղավ շատ բարդ շրջանում, երբ մտածում էին՝ իմաստ ունի՞ր՝ գնալ, թե՛ ոչ, բայց փորձը ցույց է տալիս, որ կյանքը, որքան էլ դժվարություններով լեցուն լինի, դարձյալ պետք է ապրվի, և մեզ չիջիչ չպետք է կանգնեցնի կամքից ու այն գիտակցումից, որ պետք է, այո՛, ցույց տալ և ամեն կերպ ընդգծել՝ կյանքը շարունակական է, ու ամեն ինչ չէ, որ ավարտված է: Ուստի և պետք է ակտիվացնել այդ կապերը,

առավել ևս սահմանամերձ համայնքներում: Լեվի-լեցուն դալիլները, դալիլների արձագանքը մեր ազգագրական մշակույթի նկատմամբ, կարծում եմ, դրա լավագույն ապացույցն են:

- **«Թիկունքը՝ մշակույթ, սահմանը՝ կենտրոն» ծրագրի շրջանակում էր, որ բազմաթիվ խմբեր այցելեցին սահմանամերձ վայրեր, այդ թվում՝ Սյունիք: Ենթադրում ենք՝ սահմանապահ կամ սահմանամերձ բնակավայրերի հանդեպ ուշադրությունն ավելի կակտիվանա նաև այդ առումով:**

- Այո, բազմաթիվ խմբեր, ստեղծագործողներ անընդմեջ, ամեն տարի այցելել են սահմանամերձ համայնքներ՝ կազմակերպելով միջոցառումներ, փառատոներ: «Տիկնիկների հեքիաթային ճանապարհորդություն» խորագիրը կրող կրթական ծրագիրը՝ դերասանիկնիկավար Ադասի Մեյրոնյանի նախաձեռնությամբ, ներկայացումներով հանդես եկավ սահմանամերձ բնակավայրերում...

Ուզում եմ շեշտել՝ առանձին համերգաշար ենք սկսել հենց երաժշտական դպրոցի սաների համար, դեկտեմբերին՝ տոներից առաջ. Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի «Ամռն Բաբաջանյան» համերգասրահում հանդես եկան մեր պատանի երաժիշտները, կատարողները, այդ թվում Սյունիքից:

- **Մի խնդիր էլ կա. բազմաթիվ երեխաներ ունենք, ովքեր, այնուամենայնիվ, լավագույնս են դրսևորվում արվեստի այս կամ այն ոլորտում, նաև միջազգային հարթակներում են ելույթներ ունենում և մրցանակային տեղեր զբաղեցնում: Հետաքրքիր է՝ կա՞ մեխանիզմ շնորհիվ, տաղանդավոր երեխաներին հետագայում տեղ կանգնելու և մեծ մշակույթի անդաստանում նրանց «բնակեցնելու» համար:**

- Հիմա ուշադրության կենտրոն են բերվում արվեստի և երաժշտական դպրոցների խնդիրները՝ սկսած ուսուցիչների որակավորումից, վերապատրաստման հարցերից և ավարտված աշխատավարձերի բարձրացմամբ: Ու հիմա համալիր միջոցառումներ են իրականացվում, այդ թվում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություն, չափորոշիչների մշակում, երաժշտական դպրոցների ուսուցիչների առեստավորում, գովազդատեղեկատվական

աջակցության ծրագիր՝ արվեստի և երաժշտական դպրոցների համար:

Համերգաշարերը... Երբ մեր պատանիները դուրս էին գալիս բեմ, ընդ որում շատ օժտված պատանիներ, բոլորի մեջ կա մի մեծ բացթողում՝ կաշկանդված են, մռայլ են, անժպիտ, և ստիպված վերջում մի փոքրիկ դաս կարդացի պատանիների համար այն մասին, որ բեմական մշակույթը պահանջում է նաև ժպիտի մշակույթ ունենալ: Երբ դուրս ես գալիս բեմ, դու բեմի տերն ես, դու պետք է ժպտաս, ինքնավստահությունը քո գործիքն է, քո զենքն է, և հիմա դուրս ես եկել, որ հաղթես հանդիսատեսին: Վախեցած ներկայություն, անժպիտ ներկայացում, մոլորված վիճակ և այլն. այդ բաները պետք է չլինեն, բայց որպեսզի մեր պատանիները սովորեն այդպես բեմ դուրս գալ, նրանք պետք է հաճախ դուրս գան բեմ: Եվ մեր համերգաշարի ընթացքում, որ սկսել ենք ու տարին մի քանի անգամ պետք է կազմակերպենք նման համերգներ, կձգտենք ամրագրել մեր ռեսուրսը, գնահատել պատանի տաղանդների ներուժը, որից հետո համապատասխան միջոցառումներով կհետևենք նրանց կարիերայի ընթացքին ու համակողմանիորեն աջակցություն կցուցաբերենք: Ընդ որում համերգներին ներկա են լինելու և՛ Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, և՛ երաժշտական դպրոցների տնօրեններ, և՛ ճանաչված մտավորականներ:

Ի վերջո եկեք չմոռանանք՝ գրեթե ամեն զորակոչի ժամանակ շուրջ մեկ տասնյակից ավելի երիտասարդներ են ստանում տարկետման հնարավորություն, և դրանով հնարավորություն ենք տալիս նաև կրթությունը շարունակելու, միջազգային հարթակներում ներկայություն ապահովելու: Դրանց արդյունքները կան... Տարկետումից հետո՝ հաջորդ տարկետման ժամանակ, տեսնում ենք, թե ինչքան մեղալներ, մրցանակներ, ինչ միջազգային մասնակցություն ենք ունեցել: Այսինքն՝ դա ռեսուրսը զարգացնելու կարևորագույն մեխանիզմներից մեկն է, և նման մոտեցումը պետք է լինի նաև մինչև տարկետումը, այսինքն՝ պետությունը պետք է իմասա իր տաղանդի տեղը և իրագրված լինի իր տաղանդի զարգացման ընթացքի մասին, ավելին՝ պետք է պայմաններ ստեղծի այդ տաղանդի զարգացման համար:

- **Մեր կրթական-դաստիարակչական համակարգի առանցքային օղակը, անկասկած, հանրակրթական դպրոցն է: Եվ, որքան տեսնում ենք, հանրակրթական դպրոցների սաներն իրականացվող կրթամշակութային ծրագրերի հիմնական շահառուներն են:**

- Ընդամենը մի քանի թիվ. 17 կրթամշակութային նախագծի շրջանակում մասնակցություն է ունեցել 661 դպրոց, 19 հազար աշակերտ: Սա ընդամենը 17 կրթամշակութային նախագծում, բայց միայն դա չէ, տարաբնույթ այլ միջոցառումներ նույնպես կան: Բայց



Մարզերի մասնակցությունը՝ կարևորագույն սկզբունք և ռազմավարական առաջնահերթություն կրթամշակութային ծրագրերում

ՍԿԻՉԲԸ՝ ԷՁ 5

շատ նախագծերի դեպքում չենք կարող անսահմանափակ թվով աշակերտներ ընդգրկել, որովհետև կրթական պրոցես պարունակող և կրթական-մշակութային նախագծեր ունենք, որտեղ շատ մարդ չի կարող ընդգրկվել, ասենք՝ մեկ դասարան կամ 50-70 հոգի: Դրանից ավելիի դեպքում՝ բովանդակային առումով, վնասներ կունենանք, կկորցնենք թիրախային աշխատանքի հնարավորությունը: Մյուս կողմից՝ կարծում եմ վատ ցուցանիշ չէ՝ 661 դպրոց, 19 հազար աշակերտ: Նրանք հնարավորություն են ունեցել շփվելու մեր լավագույն արվեստագետների, կոմպոզիտորների, դիրիժորների, դերասանների, ռեժիսորների, գրողների, նկարիչների հետ: Դա մշակույթի հանդեպ պատանիների վերաբերմունքը փոխելու տեսակետից կարևոր լծակ է:

- Մեզ հետաքրքրող հարցում անգերազանցելի է արվեստի և երաժշտական դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների դերը...

Մրդյո՞ք գյուղական բնակավայրերի երեխաներն իրենց գեղագիտական նախասիրությունները լիարժեք դրսևորելու հնարավորություն ունեն:

- Համարձակորեն կարող ենք ասել՝ մարզերում երեխաներն իրենց գեղարվեստական, կրթամշակութային պահանջները կարողանում են գոնե կիսով չափ, եթե ոչ ավելի՝ բավարարել: Արձագանքները նաև գրավոր են հասնում մեզ, արձագանքները՝ երեխաների, ամբողջական են, տեսանկարահանվում, և ոչ թե բանավոր լսում ենք, թե ինչ լավ է անցել տվյալ միջոցառումը: Ունենք տեսագրված կադրեր. ինչ խելոք հարցեր են տալիս աշակերտները, ինչ լրջմիտ սերունդ կա, և բոլոր նրանք, ովքեր վատ են խոսում աճող սերնդի մասին ու թերահավատ են, ուրեմն չեն ճանաչում այդ սերնդին:

Ես շատ բարձր կարծիք ունեմ մեզինք հետո եկող սերնդի մասին, դժվար թե մենք այդ տարիքում այդքան խելոք հարցեր կարողանայինք տալ և այդքան ուշադիր կարողանայինք հետևել մշակութային բովանդակությանը, այդքան ուշադիր լսեինք նկարչի խոսքը, կոմպոզիտորի խոսքը, դիրիժորի խոսքը, այդքան մեծ հետաքրքրություն ցուցաբերեինք այդ ամենի հանդեպ. դրանք բոլորը նկարահանվել են, հաղորդումնե-



րի են վերածվել և ցուցադրվում են տարբեր հեռուստաալիքներով՝ «Շողակաթ» հեռուստաալիքներով, «armedu.am» կայքից սկսած և վերջացած մարզային, տեղական հեռուստաալիքներով: Այսինքն՝ իսկապես արձագանքը շատ մեծ է, մնում է՝ այնքան շատ լինեն այդպիսի շփումները, որ դա դադարի լինել իրադարձություն և լինի ուղղակի առօրյա: Այ դա է կարևորը...

- Երեխաների միջավայրում արվեստի հանդեպ պահանջարկի ձևավորման հարցում, արդեն նշեցինք, մեծ բեռ է դրված երաժշտական և արվեստի դպրոցների վրա: Բայց, անկեղծ լինենք, երաժշտական ու արվեստի դպրոցներն էլ երբեմնի պահանջարկը չունեն: Գնեք ուզում նախորդ տասնամյակների հետ համեմատություններ անել, բայց և չենք կարող չասել՝ Սյունիքի երաժշտական դպրոցներ ընդունվելու համար ժամանակին թե՛ մրցակցություն էր լինում, իսկ հիմա՞...

- Ես իմ ամենամեծ առավելություններից մեկը համարում եմ այն, որ ստացել եմ յոթնամյա երաժշտական կրթություն: Թեպետ հիմա մեկ նոտա անգամ չեմ հիշում, քանի որ տարիներ շարունակ դաշնամուրին մոտ չեմ եկել: Բայց այն ազդեցությունը, որ իմ հոգեկերտվածքի, մտածողության, ճաշակի վրա կամա թե ակամա թողել է դասական երաժշտությունը սովորելը, նվագելը, նոտա հնչեցնելը, անգնահատելի է: Եվ որևէ մեկը չի կարող ժխտել, թե իր ստացած երաժշտական կրթությունը որքան մեծ ազդեցություն է ունեցել իր նկարագրի վրա: Դրա համար, եթե հիշում եք, հորիորդային Միության օրոք

իրեն կիրթ համարող յուրաքանչյուր ընտանիք ձգտում էր, որ իր երեխան պարտադիր ստանա երաժշտական կրթություն: Եվ դրա համար այդքան շատ էին երաժշտական դպրոցները, ու գործիքներ կային:

Մենք 30 տարի շարունակ վարկաբեկել ենք գեղարվեստական կրթությունը, 30 տարի շարունակ անտեսել ենք դրա կարևորությունը և այսօր ունենք ավերված ժառանգություն կամ մի ժառանգություն, որն ավերակ է, ավերակ՝ կադրային առումով՝ արվեստի և երաժշտական դպրոցներում, ավերակ՝ գործիքների առումով, ավերակ՝ տեղեկատվական դիրքավորման առումով: Կարևորագույն այդ ոլորտն ըստ եուրյան փյուզվել է... Հիմա փորձում ենք աստիճան առ աստիճան, քայլ առ քայլ վերականգնել, վերականգնել նոր մոտեցումներով, նոր ձևաչափերով:

- Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության հետ կապված ազգային մեր ծրագրերը, բնականաբար, սպասվող արդյունքները չեն կարող տալ, եթե ուսումնամթողական գրականության մշակման և հրատարակման գործընթացը պատշաճ մակարդակի վրա չլինի: Նկատի ունենք հատկապես երաժշտական և արվեստի դպրոցների ուսումնական գործընթացը:

- Մենք հասկանում ենք, որ այսօր կրթությունը չի կարող չլինել գրավիչ երիտասարդների, աշակերտների համար: Գրավչությունը շատ կարևոր է նաև դասագրքերի առումով: Ուստի և հրատարակում ենք այնպիսի գրքեր, որոնք լինեն գրավիչ, լինեն շատ հաս-

կանալի երեխաների համար: Օրինակ, առաջին անգամ հայոց լեզվով կերպարվեստի պատմության դասագիրք ենք հրատարակել: Ոչ թարգմանական, ինքնուրույն, հայոց լեզվով շարադրված դասագիրք՝ անտիկ շրջանից, նախադարից մինչև ժամանակակից արվեստ: Դրանք ուղղված են արվեստի դպրոցի սաներին, որոնցով նաև պարապում են, օրինակ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա ընդունվող դիմորդները: Հարուստ իլյուստրացիոն նյութեր, QR կոդեր, որոնցով կարող են մուտք գործել և թեմային վերաբերող տեսանյութեր դիտել:

Երկրորդ հատորը լույս տեսավ, նախապատրաստվում է երրորդ հատորը, այսինքն՝ նույնիսկ մեր պետական լեզվով դասագրքերի խնդիր ունենք գեղարվեստական կրթության ոլորտում: Եվ մեծ ուշացումով, մեծ բացթողումներից հետո, այդ հարցերով շատ լուրջ ենք զբաղվում:

2008 թվականից նախարարության աջակցությամբ իրականացվել է «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամթողական գրականության մշակում և հրատարակում» ծրագիրը: Այն մասնագետների կողմից գնահատվել է որպես բարձր արդյունավետություն ունեցող ծրագիր և իրականացվում է հատուկ այդ նպատակով կազմված մասնագիտական հանձնախմբի օժանդակությամբ: Ծրագրի շրջանակում 2008-2022 թվականներին պետական պատվերով հրատարակվել է 325 անուն գրականություն:

Ծրագրի իրականացումը պայմանավորված է մշակութային կրթության որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համահունչ ուսումնամթողական ձեռնարկների, առարկայական ծրագրերի, աշխատանքային տետրերի, դասագրքերի, ժողովածուների և ուղեցույցների մշակման ու կիրառման, արտադրողական ուսումնական հաստատությունների գրքային ֆոնդի համալրման անհրաժեշտությամբ: Այն միտված է նաև գեղարվեստական կրթության ոլորտում ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ մասնագիտական շրջանակների իրազեկմանը, դասական և ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների ու պրակտիկ նյութերի տարածմանն ու հանրահռչակմանը: Ծրագրի իրականացմամբ լուծվում է նաև հայալեզու մասնագիտական գրականության հրատարակման և տարածման խնդիրը, ապահովվում են նոր դասագրքերի, ուսումնամթողական ձեռնարկների, ժողովածուների և գրականության հասանելիությունն ու մատչելիությունը:

«Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամթողական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի շրջանակում 2022 թ. հրատարակվել է 7 ուսումնամթողական ձեռնարկ. Արարատ Աղայան, «Արվեստի պատմություն. Կերպարվեստ (Գիրք 2)», Նաիրա Հովհաննիսյան, Մարիա Դիվանյան, Սրբուհի Բաբայան, Աշխեն Բոյաջյան, «Պատմական-գեղարվեստական պարեր, Դասական պար, Հայկական ժողովրդական պար, Ժողերոտոշ պար» (առարկայական ծրագրեր)», Անահիտ Կիրակոսյան, «Հայ ժողովրդական նվագարաններ», Ջեննի Ասատրյան (կազմող), «Հայ կոմպոզիտորների մանկական երգեր», Նունե Պողոսյան (կազմող), «Քրեատումատիա կիթառի համար» (1-7 դասարաններ), Սուրեն Խորոզյան (կազմող), «Քրեատումատիա կլարնետի համար» (1-7 դասարաններ), Արամի Հովակիմյան, «Քրեատումատիա սանթուրի համար» (2-5 դասարաններ):

Նշեմ, որ հրատարակված ձեռնարկներն անվճար կտրամադրվեն հանրապետության արտադրողական ուսումնական հաստատությունների գրադարաններին: Տեղեկացնեմ նաև, որ 2023 թվականին նախատեսվում է հրատարակել 11 ուսումնամթողական ձեռնարկ:

**ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**

Հարցազրույց Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի հետ

Երեխաների գեղագիտական դաստիարակության գործում մեծ է մայրենի լեզվի և գրականության դերը: Առավել կարևոր է մանկական գրականության, մանկական պարբերականների դերն ու նշանակությունը: Խնդրո՞ւ առարկայի շուրջ է գրույց Հայաստանի գրողների միության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Էդվարդ Միլիտոնյանի հետ:

Պարոն Միլիտոնյան, մեր ավագ սերունդը ստեղծել է հիմնադրամանկական գրականություն, որին բնորոշ են եղել մարդասիրական բարձր իդեալները, բարոյական մաքրությունը, երեխայի անհատականության նկատմամբ հարգանքի զգացումը, նրա հոգեբանության, երգանքների խոր արտացոլումը: Եվ այդ ամենը՝ ստեղծագործական բազմազան ձևերի, արտահայտչամիջոցների, ոճական կատարյալ հնարքների օգտագործմամբ: Իսկ այսօր... Ներկայացրե՞ք, խնդրեմ, մանկական գրականության վիճակը մեզանում:

Երևի նկատի ունեք դասականներին... Չուտ մանկագիրների մասին կարելի է խոսել Աբովյանի, Ղազարոս Աղայանի ժամանակներից, ովքեր և՛ դասագիրք են ստեղծել, և՛ ստեղծագործություններ հորինել: Կայական դպրոցներում հիմնականում այդ դասագրքերով էին ուսուցանում: Այա Հովհաննես Թումանյան, ով «Լուսաբեր» դասագիրքը ստեղծեց, և փոխադրություններ, թարգմանություններ, մշակումներ, նաև հորինվածքներ գեղեցիկ այդ դասագրքում: Մի խոսքով, մեր մանկագրության հիմքը դա է, ապա, իհարկե, կարելի է հիշել որոշակի անուններ՝ Խնկո Ապեր՝ իր մշակումներով, գրվածքներով, Դերենիկ Դեմիրճյան՝ «Քաջ Նազար»-ով, որ շատ հետաքրքիր գործ է: Իսահակյանն ունի պատմվածքներ և, իհարկե, Վահրանգ Անանյանի դերը շատ մեծ էր բնության ճանաչողության առումով՝ «Սևանի ափին», «Հովազածորի գերիները» և այլն, որոնք թարգմանվում էին աշխարհի տարբեր լեզուներով ու հրատարակվում:

Մեր մանկագիրների մեջ ուրիշ հիշատակելի շատ անուններ էլ կան՝ Խաչիկ Հրաչյան, Հայրապետ Հայրապետյան, Ռուբեն Ղարիբյան, Հենրիկ Սևան, Յուրի Սահակյան, Երվանդ Պետրոսյան, Արսեն Միքայելյան, Սուրեն Մուրադյան...

Համենայնդեպս մանկագիրներն ունեցել են հաջողություններ: Ցավոք, կյանքից հեռանում են ավագները և փոխարինողները: Մի քանի տարի առաջ կյանքից հեռացան Դուկաս Սիրունյանը, Արմեն Շեկոյանը, Լիպարիտ Սարգսյանը, ովքեր լավ գրքեր էին գրել երեխաների համար: Այսօրվա գրողներից նշեմ Ռոլանդ Շառոյանի, մարգերից՝ Ստեփան Միքայելյանի, Սամվել Կոսյանի անունները: Արցախից՝ Վարդան Հակոբյանն էր գրում, հրաշալի մանկագիր էր Գուրգեն Գաբրիելյանը, բայց մի ցավալի բան կա՝ պրոֆեսիոնալ գրող-մանկագիրների առումով մենք այսօր պակաս ենք զգում: Աշխարհում շատ ստեղծագործություններ արագ թարգմանվում ու մուլտֆիլմերի, կինոների են վերածվում, և մեր երեխաները հիմնականում դրանք են դիտում: Այդ ոլորտում և՛ անգլիական, և՛ եվրոպական ժողովուրդների գրական հերոսներն են շրջանառվում:

Դուք հաստատեցի՞ք մեր տեսակետն առ այն, որ հայ գրականությունը հնարավոր չէ պատկերացնել առանց մանկական գրականության: Որքանո՞վ



Էդվարդ Միլիտոնյան, ծնվել է 1952 թ. Երևանում: 1974 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է «Պիոներ», «Ծիծեռնակ», «Գարուն» ամսագրերում: Հայաստանի գրողների միության անդամ է 1977 թվականից: Եղել է ՀՀ տեղեկատվության և գրահրատարակչության վարչության պետի առաջին տեղակալ, ապա վարչության պետ, Հայաստանի ռադիոյի տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության և քարոզչության վարչության պետ: 2013 թվականից՝ Հայաստանի գրողների միության նախագահն է:

Ե ներկայումս մանկական գրականությունը տեղ գտել դպրոցական դասագրքերում, հանրակրթության ծրագրերում:

Մեր պայքարը միտված է այն բանին, որ մանկական գրականության կարևոր նմուշները տարրական դասարանների դասագրքերում որոշակիորեն ընդգրկված լինեն: Բայց ասեմ շատ ավելի կարելի էր անել և՛ գործերի ընտրության առումով, և՛ այսօրվա կյանքի արժանաշուն արտացոլող գործերով: Հիմա նաև ստեղծում են «այտերևափոխ» դասագրքեր, որոնք, իհարկե, շատ լուրջ քննարկման նյութ են դառնում: Մենք

վերջերս մանուկների համար հրատարակեցինք «Օդապարիկ արևը» անթոլոգիան, որում ժամանակակից գրողներ են ընդգրկված: Ես խորհուրդ եմ տալիս, որ այդ գիրքն ընթերցեն հատկապես մանկագրության ուսուցիչները, դասագիրք պատրաստողները և տեսնեն՝ ժամանակակից մանկագրությունից ինչ կարելի է ընտրել: Կարծում եմ շատ լուրջ ասպարեզ է, ամենաբարդ ասպարեզն է, որովհետև գրողը, եթե իր մեջ մանուկ չունի, եթե մանկական մտածողություն չի կրում իր մեջ, դժվար թե լավ ստեղծագործություններ հեղինակի: Համենայն

դեպս՝ այն, ինչ-որ այսօր արվում է, մենք փորձում ենք որոշ չափով օգտակար լինել դրանց հրատարակմանը:

Մանկական մամուլի մասին. այս դեպքում ևս սկսենք պատմության խորքերից...

Դեռևս 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ունեցել ենք մանկական պարբերականներ՝ «Աղբյուր» (1883-1918 թթ., Թիֆլիս), «Բուրաստան մանկանց» (1882-90 թթ., Կ. Պոլիս), «Հասկեր» (1905-16 թթ., Թիֆլիս)...

Մեր հասակակիցներն էլ հիշում են «Պիոներ կանչը», «Ծիծեռնակը», «Աղբյուրը» և մյուս մանկական պարբերականները, որոնք, իսկապես, մեծ դեր են խաղացել մանուկների կրթության և դաստիարակության գործում: Անդրադարձե՞ք, խնդրեմ, մանկական մամուլի մերօրյա վիճակին:

Մի քիչ անձնական բան է... Մեր ընտանիքի միջոցներով «Ծիծեռնակ» ամսագիրն ենք հրատարակում:

«Աղբյուրը», «Ծիծեռնակը», «Կանչը» մի քանի տարի առաջ փաստորեն դուրս մնացին պետական աջակցությունից, երկար տարիներ կար այդ աջակցությունը, հրատարակվում էին, բայց դուրս մնացին... Մեր գրողները տպագրվելու տեղ չունեն: Թյուր կարծիքներ կան, թե էլեկտրոնային միջավայրում երեխաները կարող են գտնել իրենց սրտի ուզած նյութերը: Դա շատ սխալ մոտեցում է, քանզի համացանցում երեխաներն ամեն ինչի մեջ կարող են խորանալ: Շատ երկրներում որոշ արգելանքներ կան երեխաների համար սոցցանցերի փնտրույքի տեսակետից: Եվ երեխաներին հանձնել սոցցանցերին՝ համարում եմ ոչ ճիշտ գաղափար: Իսկ մանկական մամուլ կոչվածը ոչ միայն գեղարվեստական գրականություն է մանկական աշխարհի համար, այլև մանուկների ստեղծագործությունների հրատարակման, ստեղծագործող մանուկներին քաջալերելու ասպարեզ: Մի խոսքով՝ մանկական մամուլի հրատարակման ոլորտում լուրջ բացթողում ունենք: Անհրաժեշտ է պետական հոգածություն, որովհետև սահմանադրորեն մանուկների համար պետական հոգածությունն անպայման պետք է դրսևորվի մշակույթի ոլորտում: Ինչու երաժշտական, նկարչական դպրոցներ կան, որոնք պետականորեն աջակցություն են ստանում, իսկ գրականությունը... Գրականությունն էլ այդպիսի հոգածություն պիտի ունենա հատկապես հրատարակչական իմաստով, ինչը երկար տարիներ կար, բայց 2016 թվականին՝ մի Նախարարի թեթև ձեռքով, դադարեցվեց:

Արդեն անդրադարձանք մանկական գրականության ներկա վիճակին: Գեղարվեստական և գիտահամալսարանների ստեղծագործությունները, որոնք հատկապես գրվում են Նախադպրոցականից մինչև դպրոցական բարձր տարիքի երեխաների համար, գաղափարական-թեմատիկ ի՞նչ հենքի վրա են հիմնականում կառուցվում:

Մանկական գրականության գաղափարական հիմք ասելով պետք է հասկանալ մարդասիրությունը, հայրենիքի հանդեպ սերը, մարդու հանդեպ վերաբերմունքը: Գրականության օգնությամբ երեխան պետք է իր կյանքն ընկալի, ճանաչի միջավայրը, տիեզերքը, կենդանական աշխարհը, աստղային աշխարհը... Այդ ամենը գաղափարներ են, որ կարող են դառնալ մանկագրության նյութ, բայց մանկագրությունը միայն գաղափարախոսության ու դաստիարակչական աշխատանքներով չէ, որ պետք է արժևորվի: Մանկագրությունն իր մեջ երեխային ձգելու շատ թելեր ունի, դա հումորն է, գվարժախոսությունը, հանելուկները... Նույնիսկ կարելի է ասել մտածողության մի բարդ աշխարհ է, որը կարող է շատ մեծերի խրտուեցնել անգամ, որովհետև դրա մեջ կան հետաքրքիր, պարադոքսալ իրավիճակներ, ինչպես մեծ մանկագրական վեպերում ու բանաստեղծություններում: Այնպես որ՝

Հարցազրույց Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի հետ

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏ 7

Միայն սևեռվել, թե պետք է երեխային դաստիարակենք՝ մեծի մտածողություն է։ Այո, դաստիարակենք, բայց գրականությունն ինքը մենակ այս ուղղությունը չի կրում իր մեջ, ու այդպես տանն էլ են անում, դպրոցում էլ են անում, գրակա-նությունն ավելի լայն ու հետաքրքիր առաքելություն ունի՝ մտածողական, որը պիտի ձևավորվի գիրք ընթերցելով։

- Փորձե՛ք ծանոթանալ կամ ուսումնասիրել՝ ի՞նչ են ընթերցում մեր երեխաներն այսօր։

- Երեխաներն այսօր հիմնականում, ցավալիորեն, մտել են «հեռախոսների մեջ», և այդտեղ իրենք խաղեր են նա-յում, ծրագրեր են նայում և այլն, բայց պիտի ընթերցանությունը խրախուս-վի դպրոցից, ընտանիքից։ Մանկական գրքերը, նաև մեր ժամանակակից գրող-ների, նույնպես պիտի հետաքրքրեն ուսուցիչներին։ Գերմանիայում հանդի-պումներ են ունեցել տարբեր դպրոցնե-րում, և այնտեղ ուսուցիչը ծնողներին ասում է՝ ահա նոր գիրք է լույս տեսել, ժամանակակից գրողի գիրք, կարո-ղացեք ծանոթացնել երեխային։ Մեր գրախանութները նույնպես պիտի այդ աշխատանքն անեն։ Աշխարհահռչակ «Հարրի Փոթեր»-ներով չէ միայն, որ պիտի ուրախանաս, այլ նաև ժամա-նակակից գիրքը պիտի ներկայացվի, հայ գրողի գիրքը, որը ոչ ՉԼՄ-ներն են պատշաճ անում, ոչ հանդիպումներ են լինում դրանց հեղինակների հետ։ Մնացել է միակ էլքը, որ մենք դպրոցնե-րում հանդիպումներ կազմակերպենք գրողների հետ։ Մի ուրիշ բան էլ ասեմ՝ Նորվեգիայում, օրինակ, ամեն հայտնի գրող, հատկապես մանկագիր, տարե-կան ծրագիր ունի, որի համաձայն պար-տավոր է գնալ դպրոցներ՝ երեխաների հետ հանդիպման։ Դրա համար քաղա-քապետարաններն են վճարում, դրանք վճարովի հանդիպումներ են. հրաշալի ծրագիր է։ Ես այդ ծրագիրը տարիներ առաջ ներկայացրել եմ նաև մեր քա-ղաքապետերին, բայց շատերին թվում է, թե գրողն անվճար, անվարձ երգիչ է, պիտի անվարձ ման գա և այդպես գրա-կանություն քարոզի։ Նաև այն գաղա-փարը, թե լավ գիրքը կառնեն ու գրողը կապրի՝ ոչ մի քննադատության չի դի-մանում։ Հայաստանում և ընդհանրա-պես փոքր հանրապետություններում գիրք տպագրելով՝ հեղինակը դժվար թե կարողանա ապահովել իր կեցությունը։ Եվ եթե խորհրդային տարիներին, ես իմ օրինակով ասեմ, «Շաքարավազ արքա-յազնը» արձակ գիրքը տպագրվել է 1990 թվականին՝ 20 հազար օրինակով, մի շաքար՝ հետո չկար գրախանութներում, բայց հիմա «Շաքարավազ արքայազնը» դպրոցներում, արտադասարանական ընթերցման մեջ կա և քրքրված վիճա-կում է բոլոր գրադարաններում։ Իսկ եթե փորձեմ կրկին տպագրել, գումավոր գիրք է, ապա մեծ գումար է անհրաժեշտ լինելու։ Եվ չգիտեմ՝ այդ գիրքն այդպիսի մեծ տպաքանակով կարո՞ղ է վաճառ-վել. իրավիճակն այն է, որ եթե 500 կամ 1000 օրինակ վաճառվում է՝ դա համար-վում է արդեն «բեսթսելլեր»։

- Թարգմանական գրականու-թյուն... Երբ հետադարձ հայացք ենք ձգում մանկական գրականության ան-ցած ճանապարհին, տեսնում ենք՝ հա-մաշխարհային մասշտաբով մանկական գրականության լավագույն նմուշները ժամանակին փոխադրել ենք հայերենի և դրել մեր երեխաների սեղանին։ Ի՞նչ ենք այսօր թարգմանում համաշխարհա-յին մանկական գրականությունից։

- Մանկական գրականությունից հիմնականում մեր հրատարակիչները

քաջածանոթ հեղինակներին են թարգ-մանում։ Նրանք նաև նայում են տարբեր երկրների դեպպանատներին՝ հնարա-վո՞ր է նրանց միջոցով իրենց գրողների գրքերը հրատարակել։ Եվ մեր երկիրը պիտի այս փորձն ընդունի ու իր ճանաչ-ված գրողներին ներկայացնի այլ երկր-ների հրատարակիչներին, որպեսզի մեր գրողները կամ այլ երկրների գրող-ները տպագրվեն ու ճանաչելի դառնան։ Միայն դրսից թարգմանելով... Հասկա-ցանք՝ թարգմանեք մեծ գումարներով ու վաճառեք, ընդ որում՝ թանկ գնով։ Բայց մեր գրողների գրքերն այդպես թանկ չեն վաճառվում։ Այսօր խաթարվել է չափո-րոշիչների աշխարհը. ով ասես՝ երեխա-ների համար գիրք է գրում. եթե գումար ունեն՝ տպագրում են, ու գրախանութնե-րը վաճառում են։ Դրանց գեղարվեստա-կան մակարդակը գրականագետները և գրողները պիտի որոշեն։ Մենք քա-նիցս անդրադարձել ենք այդ խնդրին, սակայն դա մի աշխարհ է, որը մասնա-գիտական, գրականագիտական լուրջ քննախոսության պիտի ենթարկվի։

- Հրատարակչական գործի մասին...

Ի՞նչ համակարգ գոյություն ունի այդ ոլորտում և ի՞նչ մոտեցումներ կան ման-կական գրականության հրատարակման հարցում։ Նկատի ունենք ոչ միայն թե-մատիկ-գաղափարական ուղղվածու-թյունը, այլ նաև պետպատվերը։

- Ոչ, չկա նման բան, կա 20 գրքի դրամաշնորհ, որը նաև թարգմանա-կան գրքերի համար է նախատեսված։ Վերջին տարիներին, եթե մանուկների համար մեկ-երկու գիրք հրատարակվել է՝ լավ է։ Իսկ ես մշտապես պնդել եմ, որ դա պետական հոգածության առարկա պետք է լինի։ Մանկական գիրքը, երե-խաներին ուղղված գրականությունը պետությունը պետք է վերցնի իր հոգա-ծության ներքո։ Որևէ հրատարակիչ սի-րով կհրատարակի, բայց հեղինակին մի քանի օրինակ կտան ու իրենք կվաճա-ռեն, թե չեն վաճառի՝ դա իրենց խնդիրն է, դրանով գրողը ոչ կապրի, ոչ էլ այդ գրականությունը կարող է զարգանալ։

- Մենք խոսեցինք մանկական պար-բերականների ներկայիս վիճակի մա-սին։ Կուզենայինք իմանալ նաև՝ իսկ ի՞նչ ունենք (մանկական) համացան-ցում, ռադիոյում և հեռուստատեսու-թյունում։

- Եթե առաջ որոշ հեռուստաընկե-րություններ մանկական հաղորդումներ էին անում, ապա հիմա գրականութ-յունը դուրս է մնացել ուշադրությունից։ Երեխաները չեն էլ ճանաչում գրողնե-րին, մենք գնում ենք դպրոցներ՝ հանդի-պումների, երեխաները հարց են տալիս՝ բա Դուք մեռած ե՞ք։ Որովհետև երե-խաները եթե կարդում են ու տեսնում, որ դասագրքում կանք, կարծում են, թե մահացած ենք։ Եվ սա վերաբերում է նաև ունկնդիրների այլ շերտերին, որով-հետև Սփյուռքում մանկական գրող հազվադեպ կգտնես, ու մեր հեռուս-տաընկերությունները, որոնք շփումներ ունեն Սփյուռքում, իրենք պիտի մտա-ծեն՝ ժամանակակից լավ գրականութ-յունը, հատկապես մանկագրությունը պիտի լսելի, ճանաչելի լինի նաև իրենց մոտ։

- Ձևնարկեցինք հրատարկչությանն առնչվող հարցեր, բայց... Երեխայի հետ տարվող աշխատանքում շատ կարևոր է մանկական գրքերի ձևավորումը։ Դուք նաև նկարիչ եք, և Ձեզ համար դյուրին կլինի անդրադառնալ գրքարվեստի այդ ոլորտին, խնդրեմ։

- Մանկական գրականության ձևա-վորումն ուրույն աշխարհ է, ոնց որ մանկագրությունը։ Ամեն գրքին համա-պատասխան նկարազարդման մտածո-ղություն է պետք, գրողի ոճի ընկալում...

Մենք այսօր մեծ պակաս ունենք լավ ձևավորողների։ Առաջ բուհերի ամբիոն-ներում կային նկարչական, ձևավորում-ների (գրքերի ձևավորումը՝ հատկա-պես) մասնագետներ, դասընթացներ էին անցկացվում, իսկ հիմա... Այդքանով հանդերձ՝ չեմ ասի, թե այդ դաշտը ցա-մաք է, կան նաև լավ ձեռք ունեցող նկա-րիչներ...

- Տարածված տեսակետ կա՝ երե-խան օրվա մեծ մասը, ցավոք, համա-ցանցում է, ուրեմն և գիրք ընթերցելու մշակույթից հեռացած։ Նախ՝ համա-ցանցը, հեռուստատեսությունը կարո՞ղ են փոխարինել գրքին, և ի՞նչ ընթացք կունենա (ըստ Ձեզ) գիրք-համացանց մրցակցությունը։

Այդ համատեքստում կուզենայինք իմանալ նաև՝ աշխարհի այն երկրնե-րում, որտեղ համացանցն ավելի տա-րածված ու զարգացած է, որքանո՞վ են պահպանվել տպագիր մամուլը և հատ-կապես մանկական մամուլը։

- Տպագիր մամուլը կա... Թող այն կարծիքը չլինի, թե համացանցը կերել է տպագիր մամուլին։ Բնավ ոչ։ Այդ առու-մով սխալ կարծիքներ են տարածվում... Թողթային գիրքը շատ հզոր թափ ունի, իսկ էլեկտրոնայինը... Մի պահ բարձր էր, հետո քիչ-քիչ ընկավ, որովհետև ման-կական գիրքն ախր ուրիշ մի տեսակ է։ Երեխան իր ձեռքի տակ է ունենում, այդ-տեղ շատ ավելի ուրիշ խնդիրներ կան... Անվերջ երեխային թողնել համացանցի մեջ, անվերջ հեռախոսների մեջ, այդ կախվածությունը նաև հիվանդություն է առաջացնում։ Այսօր կա բժշկության մի ճյուղ, նաև հոգեբանության, ուսումնա-սիրում են այդ խնդիրը։ Երեխան առանց հեռախոսի չի կարողանում ոչ մի տեղ գնալ, դա լուրջ պրոբլեմ է։

- Մենք ծանոթ ենք Ձեր հեղինակած երկերի մատենագիտությանը, որոնցից մի քանիսն ընթերցել ենք հետաքրք-րությամբ։ Եթե Ձեզ առաջարկվեր առանձնացնել դրանցից մեկ-երկուսը, ո՞ր ստեղծագործությունները նկատի կունենայիք։

- Ինձ ներքաշեցիք այնպիսի տա-րածք, որ ստիպված մի երկու բան պի-տի ասեմ, որի ցանկությունն առանձնա-պես չունեի, որովհետև դուրս կգա, թե նստած ինքս ինձ գովում եմ։ Իմ գրքերը թարգմանվել են տարբեր լեզուներով, նաև վերահրատարակվել. «Հնարա-միտ բաղի ճամփորդությունը», օրինակ, արտասահմանում երկու անգամ հրա-տարակվել է, «Վահագն Վիշապաքաղի արկածները» տարբեր լեզուներով հրա-տարակվել է, չեմ ասում «Արեգ տղայի և Զիպո կրիայի» տարօրինակ պատմութ-յունը, որը հինգ լեզվով թարգմանվել, հրատարակվել և վերահրատարակվել է։ Այդ գրքերն արդեն իմը չեն։ Ես միայն 36 մանկական գիրք եմ հրատարա-կել, այն էլ՝ հայերեն, իսկ մնացածները, որ տպագրվել են տարբեր լեզուներով, 50-ից ավելի են։ Գրքերը, որ գրում եմ և ավարտում այլևս իմը չեն, դրանք ըն-թերցողին են, եթե չընթերցի՝ Աստված իր հետ։

Գիտե՞ք, մեր թատրոններն էլ ուշա-դիր չեն մանկական ստեղծագործութ-յունների հանդեպ։ Մի անգամ քննա-դատություն էի ինչեցրել այդ առումով, ԿԳՄՍ-ում հավաքեցին ռեժիսորների. ի՞նչ են ասում նրանք՝ մենք համաշ-խարհային գրականությունը թողնենք և այսօր ստեղծվող՝ դեռ իրեն չարդարաց-րած գրականություն՝ բեմադրենք։ Ահա այսպիսի պատասխան... Ինչ արեցինք մենք՝ ստեղծեցինք հարթակ «Դրամա-տուրգիա» ամսագրին կից և մանկա-կան ստեղծագործությունների հեղի-նակներն այդտեղ հավաքվեցին։ Ճիշտ է, հիմա «Պատանի հանդիսատես»-ում

իմ մի գործը քննարկման նյութ է, բայց խնդիրն իմ ստեղծագործությունների մեջ չէ։ Կարծում եմ թատրոնների ռեժի-սորները, թատրոնների բաժնի վարիչ-ները, սցենարների հեղինակներն իրենք պիտի ուշադիր հետևեն այդ դաշտին։ Կիրգիզիայում բեմադրել էին իմ «Արեգ տղայի և Զիպո կրիայի» պատմություն-նը, և ինձ հրավիրել էին այնտեղ, գնալ-գալը խնդիր էր, բայց բեմադրել են։ Ես ասում եմ՝ մենք ունենք լավ մանկա-գիրներ, արձակագիրներ և պոետներ, որոնց ստեղծագործությունները կարող են նաև բեմականացված ներկայացվել մեր երեխաներին։ Շատ լավ երգահան-ներ ունենք, ովքեր մեր ստեղծագոր-ծություններով երգեր են ստեղծել, օրի-նակ իմ «Տեղեկատու կատու»-ն մյուզիքլ արեց մի երիտասարդ կոմպոզիտոր։ ԿԳՄՍ-ն հրատարակեց դա՝ եզակի մյու-զիքլ էր։ Հայաստանում չեն եղել մանկա-պատանեկան մյուզիքլներ, որ գրված լի-նեն Հայաստանում։ Մի խոսքով՝ ավելի կենտրոնացված, ճշգրիտ աշխատելու դեպքում երեխաներին ավելի օգտա-կար կլինենք։

- Արդյո՞ք շարունակում եք ստեղ-ծագործել մանկական գրականության ոլորտում։ Եթե այո, ապա ինչի՞ միա եք հիմա աշխատում։

- Ես պիտի ինձ ուրախացնեմ մի բա-նով, որ առաջիկայում կհրատարակվի իմ մանկական բանաստեղծություննե-րի գունավոր գիրքը՝ «Մեր տան կրկե-սը», որը վերջին ութ տարվա իմ անտիպ ստեղծագործություններն է ամփոփել։ Տարբեր գրքեր կան, նաև արտերկրի հրատարակություններում, որ հրատա-րակման են պատրաստվում։

- Եվ համառոտ անդրադարձ, եթե կարելի է, Սերո Խանդադյանի, Էդիկ Զոհրաբյանի մանկական ստեղծագոր-ծություններին։

- Սերո Խանդադյանի հետ շատ մտերիմ ենք եղել։ Գրողների միության անդամ դառնալու համար ինձ երաշ-խավորել է Սերո Խանդադյանը։ Ինքը «Ծիծեռնակ» ամսագրում տպագրում էր մանկական գրվածքներ՝ հատկա-պես որոշ պատմական հիմքով, փոքր, սիրուն գործեր էին դրանք... Եվ նրա տարբեր գրքեր նույնպես ունեն պատա-նեկան ուղղվածություն։ Նրա «Մատյան եղելությանցը» ևս շատ հաճույքով կա-րող են պատանիները կարդալ՝ Գորիսն ընկալելու համար։

Ես նաև հետևել եմ Էդիկին, նրա հետ ընկերներն ենք եղել։ Բայց մեկ-երկու մանկական բանաստեղծությամբ շատ դժվար է գրողին մանկագիր համարել։

Համո Սահյանը մի օր զանգահարեց, թե արի մեր տուն, գնացի. ես նվիրել էի նրան իմ «Ամպե որսորդը» գիրքը, ման-կական երկրորդ գիրքս էր՝ 1979 թվա-կանին հրատարակված, պարզվեց գրա-խոսական և գրել և ասաք՝ որտեղ ուզում ես՝ տուր թող տպագրեն։ Ինքը գրել էր իր կարծիքը։ Ես մտածեցի տանել «Գր-քերի աշխարհ» (այնտեղ տպագրվել է 1980 թվականին), բայց Մոսկովյան-Տեղյան խաչմերուկում, հիշում եմ, հան-կարձ մի ամիռ համակեց ինձ՝ այդպիսի տաղանդավոր, մեծ ճանաչում ունեցող գրողը ժամանակ է գտել կարդացել ու գրախոսական գրել։ Ամաչեցի և ինչո՞ւ. հասկացա, որ մանկագրության հան-դեպ մեծ պատասխանատվություն ու-նեմ... Դրանից հետո այդ ամիթը նաև ինձ ստիպեց խորանալ, կենտրոնանալ, ուսումնասիրել այդ աշխարհը, երեխա-ներին, գրականությունը և 36 գիրք հրա-տարակեցի միայն մանուկների համար։ Ասել է թե՛ եթե պատասխանատվություն ունենանք մեր մեջ՝ մեր գրածը գնահա-տելու, մեր գրածն ընկալելու համար, ապա խթան կհանդիսանա, որ ավելի լավ գրականություն ստեղծվի։ Երեխա-ների համար ամեն բան չէ, որ պիտի գրես, մենք նաև պիտի մեզ նայենք՝ արդյո՞ք այդ գրվածքն արժանի է, մենք մեզ քննադատենք, մի քիչ ամաչենք մեր գրածից, մի քիչ էլ ամաչենք, որ քիչ ենք գրել երեխաների համար...

ՀԱՐԱՋԱՐՈՒՅՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ԷԴՄՈՆԴ ՄԱԿԱՐՅԱՆ. «Մենք հիմա, քան երբևէ, ունենք ազգային գաղափարախոսությունը և հայրենասիրությունն էլ ավելի սերմանելու խնդիր»



Էդմոն Մակարյան, «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի հերթական համարը նվիրում ենք մեր երկրամասի մանուկների գեղարվեստական ինքնադրսևորումներին: Այդ կապակցությամբ կուզենայինք Ձեզ հետ քննարկել մանկական երաժշտությանն առնչվող մի քանի հարց:

Նախ, միգուցե մեր հարցադրումը տարօրինակ թվա, բայց հետաքրքիր է իմանալ՝ հանրապետությունում ունենք երեխաներ, ովքեր երգահան դառնալու ունակություններ ունեն և արդեն իսկ երաժշտական ստեղծագործությունների հեղինակ են: Խոսքը պատանի կոմպոզիտորների մասին չէ, այլ երեխաների, եթե, իհարկե, նման ընդունակություններով երեխաներ կան:

Երեխաների մոտ ստեղծագործելու ունակությունները սովորաբար բացահայտվում են վաղ տարիքից, բայց բացառություններ էլ են լինում: Հարցի մեկ այլ կողմն է՝ երեխան երգե՞ր է ստեղծում, թե՞ ուղղակի գործիքային այլ ստեղծագործություններ: Ամենակարևորը ստեղծագործելու ունակություններն են, որոնք զարգանում են շնորհիվ այն ուսումնական հաստատությունների մասնագետների, որտեղ նրանք սովորում են, և, իհարկե, ամենակարևորը, ընտանիքի ուղղորդողումից: Այն, որ Հայաստանի ու Արցախի երաժշտական և արվեստի դպրոցների մեծ մասում կարող ենք հանդիպել թեկուզ փոքրիկ ստեղծագործություն կամ մեղեդի ստեղծող երեխաների, դա հենց տալիս է Ձեր հարցի գլխավոր պատասխանը: Թող մեծամտություն չհամարվի, բայց, իրապես, մեր ազգը տաղանդավոր ազգ է:

Հիմա՝ պատանի կոմպոզիտորների մասին: Որքան տեղյակ ենք՝ 2008-ին Դուք կազմակերպել եք պատանի կոմպոզիտորների «Մարո» մրցույթը: Փորձե՞ք հետադարձ հայացք ձգել այդ մրցույթին:

Դա իմ և ինձ հավատող ու երաժշտության հետ ոչ մի կապ չունեցող ընկերների քանքերով ստեղծված նախագիծ էր: Երբ փոքր էի, չափազանց մեծ էր ստեղծագործական նմանօրինակ նախագծերին մասնակցելու ցանկությունը,

սակայն Հայաստանում դրանք, ցավոք սրտի, հաճախ չէին անցկացվում կամ գրեթե բացակայում էին, ուստի որոշեցի մրցույթը կյանքի կոչել: Նախագիծն իմ առաջին փորձն էր, դրանով էլ ամբողջապես պարզ եղավ մրցութային մեխանիզմը, ինչը հետագայում ներդրեցի Եղվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթի կազմակերպման ակունքներում:

Դուք նաև գեղարվեստական դեկավարն եք Եղվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների համահայկական ամենամյա մրցույթի: Ներկայացրե՞ք, ինդդեն, այդ մրցույթի հետ կապված տեղեկություններ, ինչը մեզ նույնպես հետաքրքրում է:

Մրցույթը հիմնադրվել է 2014 թ. մայիսին, երբ այդ ժամանակ արդեն կոմպոզիտորների միության նախագահն էր Արամ Սաթյանը: Կոմպոզիտորների միությունը լինելով ոլորտի միակ պրոֆեսիոնալ կառույցը՝ պետք է ունենար նմանօրինակ պատանեկան-կոմպոզիտորական նախագիծ, որն իրավամբ պետք է հարթակ ստեղծեր պատանի կոմպոզիտորների համար, խրախուսեր ու աջակցեր: Կարևոր է, որ երեխաները զգան պետական աջակցություն, գիտակցեն, որ պետությունը, կոմպոզիտորների միությունը նրանց կողքին են և նրանց ստեղծագործությունները դարակը դնելու կամ միայն բարեկամական նեղ շրջանակում ցույց տալու համար չեն: Կա պրոֆեսիոնալ ժյուրի, կա երաժշտասեր հանրություն, որոնց պետք է ներկայացնել սեփական ստեղծագործությունը, և կա հետմրցութային ընթացք, որով և կարևորվում են մեր բոլոր մասնակիցները:

Արդյո՞ք հանրապետությունում, նշված մրցույթից զատ, ուրիշ մրցույթներ և փառատոներ էլ են անցկացվում երեխաների և պատանի կոմպոզիտորների շրջանում:

Փառատոների առումով միայն ողջունելի կլինեք, եթե դրանցում ընգրկվելիս մեր պատանի ստեղծագործողները՝ իրենց ստեղծագործություններով, և այդ առումով երկու կարծիք լինել չի կարող: Իսկ ինչ վերաբերում է մրցույթներին, ապա պետք է հասկանալ ի՞նչ

“

Մենք ֆանտաստիկ ժամանակակից կոմպոզիտորական սերունդ ունենք, և՛ ավագ սերնդի, և երիտասարդ, ովքեր ստեղծել և շարունակում են ստեղծել երեխաների համար ստեղծագործություններ: Դրա վառ ապացույցը վերջին մեկերկու տարում Հայաստանի կոմպոզիտորների միության կողմից հրատարակված Նոր ժողովածուներն են ինչպես երգերի, այնպես էլ գործիքային ստեղծագործությունների:

“

“

ԱՅՑԵՔԱՐՏ

Ծնվել է Երևանում: 2001 թ. ավարտել է Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոցը, 2003 թ.վականին՝ Երևանի թիվ 197 միջնակարգ դպրոցը: 1996-2001 թթ. կոմպոզիցիայի դասերի է հաճախել Ս. Շաքարյանի, Ա.Սաթյանի, Ռ.Ասատրյանի, Մ.Ավանեսովի մոտ: 2003-2007 թթ. ուսանել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» կապի ճյուղում՝ ֆակուլտետում՝ ստանալով տնտեսագետի որակավորում, 2007-2011 թթ.՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵԿԿ) կոմպոզիցիայի բաժնում (ղեկ.՝ Ա. Սաթյան): 2012 թ. ավարտել է ԵԿԿ մագիստրատուրան (ղեկ.՝ Ա. Սաթյան): 2008 թ. կազմակերպել է պատանի կոմպոզիտորների «Մարո» մրցույթը: Հանդիսանում է Եղվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների համահայկական ամենամյա մրցույթի գեղարվեստական ղեկավարը (անցկացվում է 2014 թ.վականից): 2013 -2018 թթ. վարել է Հայաստանի կոմպոզիտորների միության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարի պաշտոնը: 2018 թ.վականից նույն կազմակերպության համերգային-կազմակերպչական բաժնի ղեկավարն է: 2013 թ.վականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է: 2015-2016 թթ. եղել է Հայ մշակութային, կրթության և գիտության զարգացման հիմնադրամի տնօրենը: 2019 թ.վականից դասավանդում է Հայկական պետական մանկավարժական համալսարանում: Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր է:

”

են տալիս երեխաներին նմանօրինակ մրցույթները: Առաջին հերթին պետք է հասկանալ յուրաքանչյուր մրցույթի հոգեբանական կողմը, չէ՞ որ մենք գործ ունենք երեխաների հետ, նրանց փխրուն հոգեբանության հետ, ուստի պետք է լինել չափազանց զգույշ՝ չմոռանալով ուշադրության կենտրոնում պահել յուրաքանչյուր մասնակցի: Ահա հենց սա է այն գրավականներից մեկը, որի շնորհիվ մեր մրցույթն արդեն 10 տարեկան է: Ամենահին չթերազնահատելով կատարողական արվեստը, բայց և այնպես, ստեղծագործական բնագավառում պետք է ավելի զգույշ լինել, հնարավորինս բացառել բոլոր այն տեսակի «մրցույթները», որտեղ երեխան մասնակցում է հանուն անհասկանալի և դպրոցի համար ինչ-որ անհարժեշտ միավորների, իսկ վերջում անգամ մեկ պատվոգրի չի ար-

ԷԴՄՈՆԴ ՄԱԿԱՐՅԱՆ. «Մենք հիմա, քան երբևէ, ունենք ազգային գաղափարախոսությունը և հայրենասիրությունն էլ ավելի սերմանելու խնդիր»

ՍԿԻՉԲԸ՝ ԷՁ 9

Ժամանում։ Այո, պետք է խոսել այդ մասին, պետք է հստակ բարձրաձայնել։ Չի՛ կարելի մեկ հարթությամբ գնահատել երաժշտական և արվեստի դպրոցների առաջին դասարանցուն, ով նոր-նոր իր առաջին քայլերն է անում ու արդեն դպրոցն ավարտող երեխային։ Իսկ նմանօրինակ դեպք, այն էլ պետական կառույցներից մեկի նախաձեռնությամբ, անցնող տարում արդեն եղել է։ Մեզանում, առավել ևս մեր երեխաների հետ կապված, պետք է «շփ-թփ» անելը կամ «անել ուղղակի անելու համար»՝ վերացնել։ Այ սա է հարցի կարևորությունը՝ չվնասելու հոգեբանությունը, միևնույն ժամանակ օգտակար լինելու առաքելությունը վաղվա սերնդի ճիշտ զարգացման և առաջընթացի համար։ Իսկ առիթաբար, հանրապետությունում, հենց մանկապատանեկան տարիքային խմբերի համար, եթե չեմ սխալվում, այս պահին որևէ կոմպոզիտորական այլ մրցույթ չկա, չնայած տարբեր տարիներին մեկ-երկու փորձեր եղել են։

- Իսկ Միրզոյանական մրցույթի առանձնահատկությունը։

- Ինչպես նշեցի՝ մեր մրցույթում կարևորագույն տեղ են զբաղեցնում պրոֆեսիոնալիզմը և հոգեբանական կողմը. նախ մասնակիցները բաժանվում են տարիքային 2 խմբի, բացի այդ, բոլոր մասնակիցները պարտադիր պարգևատրվում են խրախուսական նվերներով, պատվոգրերով, ստանում հնարավորություն մարզային համերգների, պրոֆեսիոնալ ծայնագրության, մրցանակային հորիզոնական զբաղեցրած մասնակիցները՝ նաև անվանական գավաթներով, իսկ հաղթողները՝ նաև դրամական պարգևներով։ Դրամական խրախուսանք են ստանում նաև ուսուցիչները, չէ՞ որ ահռելի մեծ աշխատանք են կատարում, իսկ այսօր, ցավոք, ուսուցիչների աշխատավարձն իրենց արած տիտանական աշխատանքի համեմատ, մեղմ ասած, քիչ է։ Ինչ վերաբերում է մրցույթին, ապա 2023 թվականին կայանալիք հոբելյանական 10-րդ մրցույթը կլինի աննախադեպ. բոլոր մասնակիցները կհանգրվանեն Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տանը, որը հնարավորություն է մի քանի օր շփվելու, հաղորդակցվելու միմյանց հետ՝ մեծագույն արժեքներ կրող ու հենց եղևորդ Միրզոյանի անունը կրող համալիրում, որտեղ նրանց հետ, նրանց կողքին են լինելու նաև իրենց ուսուցիչները, ժյուրիի անդամները։ Չեմ վախենա նշել, որ սա ոչ միայն Հայաստանում, այլ եթե ոչ ամբողջ աշխարհում, ապա տարածաշրջանում մանկապատանեկան մրցույթների պրակտիկայում նման մասշտաբայնությունը, ձևաչափը կիրառվում է առաջին անգամ։

- Մանկական երաժշտության մասին. նախ՝ այն կոմպոզիտորների մասին, ովքեր այսօր մանկական երաժշտություն են ստեղծում հանրապետությունում։

- Մենք ֆանտաստիկ ժամանակակից կոմպոզիտորական սերունդ ունենք, և՛ ավագ սերնդի, և երիտասարդ, ովքեր ստեղծել և շարունակում են ստեղծել երեխաների համար ստեղծագործություններ։ Դրա վառ ապացույցը վերջին մեկ-երկու տարում Հայաստանի կոմպոզիտորների միության կողմից հրատարակված նոր ժողովածուներն են ինչպես երգերի, այնպես էլ գործիքային ստեղծագործությունների։ Ապացույցն էլ նաև երաժշտական, արվեստի դպրոցներում ուսումնական ծրագրերում ընդգրկված հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններն են։ Այս առիթով պետք է ընգծել նաև ՀԿՄ Երիտասարդական թևի ղեկավար Լիլիթ Արտեմյանի համակարգմամբ տեղի ունեցող կրթական «12 հնչյուն» նախագիծը։



Ժագործությունների։ Ապացույցն էլ նաև երաժշտական, արվեստի դպրոցներում ուսումնական ծրագրերում ընդգրկված հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններն են։ Այս առիթով պետք է ընգծել նաև ՀԿՄ Երիտասարդական թևի ղեկավար Լիլիթ Արտեմյանի համակարգմամբ տեղի ունեցող կրթական «12 հնչյուն» նախագիծը, որի շնորհիվ 2022-ին մեկ տասնյակից ավել երաժշտական և արվեստի դպրոցներում ներկայացվեցին երիտասարդ հեղինակների ստեղծագործություններ՝ գրված հենց պատանիների համար, ովքեր աստիճանաբար տեղ են գտնում ուսումնական ծրագրերում։

- Մանկական երաժշտությունը հատկապես ո՞ր ժանրերով և ստեղծվում կամ ո՞ր ժանրերն են առավել պահանջված մեր ժամանակներում, իսկ ավելի կոնկրետ՝ ի՞նչ են երգում մեր երեխաները։

- Եթե խոսքը երգարվեստի մասին է, ապա տարբեր, երգում են տարբեր թեմաներով։ Ցավով պետք է արձանագրեմ, որ կան նաև երեխաներ, ովքեր երգում են իրենց տարիքին չհամապատասխանող ու «անխմաստ» թեմաներով երգեր, թե ինչ է իրենց ծնողները դա են ուզում կամ համարում կոմերցիոն։ Ցավոք, 21-րդ դարում մեծացել է ձևի, այլ ոչ՝ բովանդակության նկատմամբ վերաբերմունքը։ Իսկ ինչ վերաբերում է ակադեմիական երաժշտությանը, ապա մեր պատանիների մոտ կարող ենք գտնել ամենապարզ պատկերավոր ստեղծագործությունից, օրինակ՝ արջի կամ վարդերի մասին, վերջացրած բարդ ֆորմայով, ատոնալ ստեղծագործություններ։

- Ինչնեղ գիտեք, թե որքան կարևոր է մանկական երգերի թեմատիկան.

կուլտուրային իմանալ՝ ազգային, հայրենասիրական թեմատիկան որքանով է տեղ գտնում մեր ժամանակներում ստեղծվող երգերում կամ մանկական համույթների երգացանկերում։

- Ոչ բավարար չափով։ Մենք հիմա, քան երբևէ, ունենք ազգային գաղափարախոսությունը և հայրենասիրությունն էլ ավելի սերմանելու խնդիր։ Ամեն ինչի եվրոպական ինտեգրացիան չէ լավ։ Եթե կա խոսք՝ հայրենիքը սկսվում է սահմանից, ապա կարելի է լրացնել՝ հայրենիքը սկսվում է սեփական սրտում, որի կառուցմանը նպաստում է ընտանիքը։

- Ծանոթ ենք Ձեր երաժշտական ստեղծագործությունների ցանկին, որ հրապարակված է՝ ակադեմիական երաժշտություն, երաժշտություն ֆիլմերի համար, էստրադային երգեր և այլն։ Հետաքրքիր է՝ ի՞նչ ունեք այդ ցանկում երեխաների համար ստեղծված։

- Իմ ուշադրության կենտրոնում մշտապես եղել են երեխաները, անգամ մի շրջան կար, որ զբաղվում էի երեխաների երաժշտական պրոդյուսերությամբ։ Տարիներ առաջ նկարահանվեց ֆիլմ «Կանչ»՝ Եր կոչվում Ցեղասպանության ժամանակահատվածում հայի պայքարող պատանու տեսակը նկարագրող պատմության, որի սաունդթրեքը գրել եմ հենց պատանիների կատարման համար. երգչուհի Դալիթայի և հրաշալի դուդուկահար Թաթուլ Համբարձումյանի շնորհիվ ստեղծագործությունը գեղեցիկ երանգ ստացավ։ Իսկ առհասարակ, այո, շատ են էստրադային երգերը, որոնք գրել և շարունակում եմ գրել երեխաների համար։ 2023թ. հատուկ երեխաների կատարման համար կիրառարակվի իմ «5-ի 50» գործիքա-

յին ստեղծագործությունների ժողովածուն, որտեղ կլինեն իմ պատանեկան 50 ստեղծագործությունները՝ գրված հինգ տարվա ընթացքում։

- Ըստ Ձեզ՝ ի՞նչ է պակասում մեր օրերում ստեղծվող մանկական երաժշտությանը։

- Հենց իրական մանկություն։ Երեխաները շտապում են մեծանալ։

- Մանկական երաժշտության փառատներ, մրցույթներ, նախագծեր, որ անցկացվում են հանրապետությունում։

- Կան, հրաշալի աշխատանք են տանում երաժշտական և արվեստի դպրոցները, կան կատարողական արվեստի բնագավառի նախագծեր, այդ թվում «Նոր անուններ», «Մեկնարկ» զարգացման ծրագիրը, «Արտմուզիք», վերջին շրջանում նաև Վաղարշապատի «Փոքրիկ քայլ» մրցույթ-փառատունը և այլն, որոնցից յուրաքանչյուրն էլ մեր մշակութային իրականության մեջ իր ներդրումն ունի, և լիափոք եմ ավելի օգուտ կբերեն մեր երեխաներին։

- Մանկական երաժշտական համույթներ... Ունե՞նք մանկական երաժշտական համույթներ, որոնք նշանավոր են և ճանաչված նաև մեր հանրապետության սահմաններից դուրս։

- Իհարկե կան, արդեն նշեցի՝ մեծ աշխատանք են տարվում երաժշտական և արվեստի դպրոցներում, այնտեղ ձևավորվում են երգչախմբեր, գործիքային խմբեր։ Պետք է առաջին տեղում միշտ դնել ուսումնական հաստատությունները, չէ՞ որ ճիշտ և որակյալ կրթությունն է աշխատասիրության ու տաղանդի հաջողությունների գրավակալը։ Երգարվեստում կան հրաշալի պատանեկան խմբեր, օրինակ՝ «Փոքրիկ երգիչները», «Արևիկը», «Արևները»... Կան նաև անհատներ, այդ թվում մեր մրցույթի դափնեկիրները, ովքեր արդեն իսկ հայտնի են մեր երկրի սահմաններից դուրս՝ շնորհիվ իրենց կատարողական վարպետության և տաղանդի։

- Իսկ մանկական երաժշտական հեռուստահաղորդաշարեր, ռադիոհաղորդաշարեր, պարբերականներ, համացանցային էջեր... Ի՞նչ ունենք հանրապետությունում այդ առումով։

- Դե, կան, նաև հանրային ռադիոյով, բայց քիչ են։ Ժամանակին կար հեռուստատեսություն՝ «Հայրենիք» էր կոչվում, եթե չեմ սխալվում, իր տեսակի մեջ եզակի և ուսուցողական։ Ու ամենակարևորը՝ հայալեզու։ Ցավոք, փակվեց։ Իհարկե կարող ենք ասել, որ համացանցը լայն հանրավորություն է տալիս, սակայն միևնույն ժամանակ պետք է նաև գիտակցենք այն մեծ «աղբը», որը գալիս է համացանցից։ Պետք է լինի պետական մտածողություն, մշակվեն ճիշտ ստրուկտուրաներ՝ էլ ավելի շատացնելու մանկապատանեկան հաղորդաշարերը, նախաձեռնությունները։

- Ինչպե՞ս եք գնահատում մանկական երաժշտական կրթության դրվածքը հանրապետությունում, ինչո՞ւ է (նախորդ տասնամյակների համեմատությամբ) նվազել երեխաների հետաքրքրությունը երաժշտական դպրոցների հանդեպ։

- Կարծում եմ մոտեցումներն են փոխվել։ Հիմա ընտանիքների մի մասում մտածում են՝ «թող մի քիչ նվագել իմանա կամ ուղղակի նվագել իմանա, հերիք է, մեկ ա, էտ իրեն պետք չէ» (հենց միանգամից վճռում են երեխայի ապագան, որ երաժիշտ դառնալը պիտանի բան չէ), ինչպես նաև տանուլ տալիս երեխայի՝ «անվերջ հեռախոսի մեջ մտնելու» ցանկությունների հետ պայքարը։ Եվ նորից գալիս ենք սկզբնակետին. ընտանիք, որի հայելին հենց երեխաներն են։ Դրա համար հանրության հետ պետք է ճիշտ աշխատանք, ամենակարևորը՝ պետական ճիշտ մոտեցում՝ ազգային ու համամարդկային բարձր պահելու համար, թե չէ ապառիկով գնված լավ հեռախոսով աննպատակ «վիդեոներ» անող մարդիկ, քանի հեռախոսները կան, միշտ էլ փորձելու են իրենց ցածր մակարդակը պրոպագանդել։

**ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆԴՐ**

Հայ երաժշտամանկավարժական միությունը և երաժշտական դաստիարակությունը հայ դպրոցում

ՅՈՒՐԻ ՅՈՒՐԵՆԿՆԱՆ

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ

Հագարամյակների խորքից եկած հայ մշակութային ժառանգության անբաժանելի մասն է կազմում երաժշտությունը, որը միշտ կարևոր դերակատարում է ունեցել հայ ազգի դաստիարակության գործում:

Սահակ-Մեսրոպյան առաջին դպրոցներում սակավաթիվ առարկաներից մեկը եղել է երաժշտությունը:

Քերթողահայր խորենացու շնորհիվ մեզ հասած տեղեկությունները խոսում են այն մասին, որ առաջադասված առանձին բանասացների կողմից ոչ միայն պատմվել են, այլև առանձին հատվածներ երգվել: Հայաստանում երաժշտական արվեստը որոշակի զարգացում է ապրել: Հատկապես զարգանում են գուսանական, թատերական, երաժշտական արվեստը:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց (301) և հատկապես հայկական գրերի ստեղծումից հետո (405) սկզբնավորվում և զարգանում է հայ հոգևոր երգը՝ իր լեզվաոճական կողմով հիմնվելով հայ ժողովրդական երաժշտության վրա: Հայաստանում սկսում են գործել քրիստոնեական դպրոցներ, որոնցում ուսուցումը տարվում է հայերեն լեզվով:

Մ. Խորենացին նշում է, որ Մեսրոպը բերելով մեր լեզվի նշագրերը, թագավորի և կաթողիկոսի հրամանով. «Ընտրությամբ երեխաներ հավաքեց, ուշիմ, առողջակազմ, լավ ծայնով և երկար շնչառությամբ»: (7, 365)

Հայ իրականության մեջ առաջին անգամ երեխաների ուսուցման կազմակերպման համար ստեղծվում են նրանց երաժշտական ունակությունները: «Աշակերտելու համար ընտրված երեխաները բացի ուշիմ ու առողջակազմ լինելուց, պետք է լինեին նաև փափկաձայն և երկար շնչառությամբ: Վերջին երկու հատկությունները հասկանալի կդառնան, երբ նկատի առնենք, որ այդ աշակերտներից պետք է պատրաստվեն եկեղեցու սպասավորներ, որոնք հայերեն լեզվով ժամերգություն պետք է կատարեն, և երգեցիկ լինելը պարտադիր էր նրանց համար»: (3, 365)

Այսպիսով, Մ. Մաշտոցի կողմից բացված հոգևոր դպրոցում լուրջ ուշադրության է արժանանում երաժշտական կրթության և դաստիարակության գործը:

Հայ հոգևոր երգիչ Մ. Մաշտոցի և Ս. Պարթևի կործն շարունակում են նրանց ազդեցությունը, երաժշտության հարցերին: Քերականը, Դավիթ Անհաղթը, Ստեփանոս Սյունեցի Առաջինը, Հովհան Մանուկյանը, Մովսես Խորենացին և այլք:

Դավիթ Անհաղթը բազմաթիվ եկեղեցական եղանակներ հորինելուց բացի, իր փոխադասական աշխատություններում, մասնավորապես «Սահմանք իմաստասիրութեան» ուսումնասիրությամբ, կանխորոշում է երաժշտագիտական մտքի զարգացման ընթացքը:

Վերոհիշյալ աշխատության մեջ Դավիթ Անհաղթը բազմիցս անդրադառնում է արվեստի, երաժշտության հարցերին:

Արդիական հնչեղություն ունեն նրա երաժշտության հուզականության և ներգործման ուժի վերաբերյալ մտքերը, ինչպես նաև երաժշտատեսական գաղափարները, որոնք օրգանապես միաձուլվեցին վաղ միջնադարյան Հայաստանի գեղագիտական հայացքների համակարգին և մեծ ազդեցություն գործեցին նրա հետագա զարգացման վրա:



7-րդ դարում հայ երաժշտական մշակութային կյանքում սկզբնավորվեց վերելքի երկրորդ մեծ շրջանը. Կոմիտաս Աղեցցին, Բարսեղ Ճոնը, Ասանիա Ծիրակացին զարգացման բարձրակետին հասցրին երգարվեստը:

Ասանիա Ծիրակացին վաղ միջնադարյան Հայաստանի ականավոր գիտնական, բանաստեղծ, երաժիշտ, տեսաբան է: Այսպիսով՝ Ծիրակացին իր ստեղծագործություններում զարգացնում է Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի, Մ. Խորենացու և ուրիշ շարականագիրների դրական հատկանիշները, իսկ մանկավարժական աշխատանքում կիրառում է ժամանակի առաջավոր մանկավարժահոգեբանական պահանջները:

Լինելով իր ժամանակի ամենահեղինակավոր վարդապետներից մեկը՝ Ստեփանոս Սյունեցին գիշողականությամբ է վերաբերվել աշխարհիկ երաժշտության նկատմամբ և իր «Մեկնություն քերականին» աշխատության մեջ, բացի եկեղեցական երգերի դասակարգումից, անդրադառնում է նաև ժողովրդական լայն խավերում տարածված երգերի տեսակներին, գուսանական արվեստին: Հոգևոր ինքնուրույն երգերի և աշխարհիկ երգարվեստի փոխներգործությունը նպաստեց հայ մասնագիտացված երգարվեստի զարգացմանը:

Ստեփանոս Սյունեցու քրոջ՝ Սահականուհու երաժշտամանկավարժական գործունեության մասին գրում են. «Չնայած կաշկանդիչ սովորություններին, այդ հայ կինը առաջադիմական այնպիսի քայլեր արեց, որոնք դրանից շատ դարեր հետո, ինչպես Հայաստանում, այնպես էլ բազմաթիվ այլ երկրներում կնոջ համար երազանք ու անմատչելի էին մնում» (3, 425-426): Նա վարագույրի հետևից էր երեխաներին երգ սովորեցնում, քանզի այդ ժամանակաշրջանում կնոջը չէր թույլատրվում մարդկանց ներկայությամբ երգել:

10-րդ դարում վարդապետարաններում կատարելագործվում է երաժշտական դասավանդումը: Այդ են վկայում Ախթամարի, Սևանի, Սանահինի, մանավանդ Անիի, Տաթևի դպրոցների վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները: Թվարկված դպրոցներում զարգանում է մասնագիտական երգարվեստը, հայ մշակույթը նոր վերելք է ապրում, իսկ նրա շրջանավարտները Հայաստանի տարբեր վայրերում հանդես են գալիս որպես երաժիշտ-կատարողներ,

ստեղծագործողներ, գիտնականներ, դասախոսներ և երաժիշտ-մանկավարժներ:

10-13-րդ դարերում իրենց մանկավարժական գործունեությունն են ծավալել երաժիշտները, որոնց մի մասը հիշատակվել է որպես փիլիսոփաներ:

Անհրաժեշտ ենք համարում հատուկ ուշադրություն դարձնել միջնադարյան Հայաստանի ականավոր բանաստեղծ և երաժիշտ Գրիգոր Նարեկացու, մեծագույն երգահան Ներսես Շնորհալու, հեղինակավոր գիտնական և բանաստեղծ-երաժիշտ Խ ա չ ա տ ու ը Ր Տարոնեցու և երաժիշտ-տեսաբան, շարականագիր և տաղասաց Հ ո Վ Խ ա ն Ն ե ս Ե Ր Վ Ն Կ ա ց Ի

Պլուզի, հասարակական գործիչ, գիտնական և ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու երաժշտամանկավարժական գործունեությանը:

Գրիգոր Նարեկացին «Ողբերգության մատյանի» 92-րդ գլխում խորհրդածել է երաժշտագեղագիտական հարցերի շուրջ: Մատենագիտության մեջ առաջին անգամ այստեղ Նարեկացին խոսում է կոչնակի («սրինգ») և ընդհանրապես գործիքային արվեստի մասին: Հիշյալ գլխում Նարեկացին տարբեր առիթներով խոսում է պղնձե զանգակի, փողի, բամբիռի, տավիղի, քնարի, ջութակի և ուրիշ նվագարանների մասին:

Գրիգոր Նարեկացին գրել է 20-ից ավել տաղ, որոնցից մի քանիսի մեղեդիները ծառայել են որպես չափանիշներ: Կոմիտասի ծայնագրությամբ մեզ հասած «Հավիկը», «Անեղ ծայն», «Սայլն այն իջաներ», «Հավուն-հավուն» և այլ տաղերի շնորհիվ Նարեկացին նոր լիցք հաղորդեց հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստին:

Ամփոփելով միջնադարյան հայ դպրոցում երաժշտական կրթության և դաստիարակության վերաբերյալ սեղմ շարադրանքը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ հատկապես 10-15-րդ դարերում երաժշտամանկավարժության մեջ կատարվել են զգալի տեղաշարժեր, երաժիշտ-մանկավարժները հաշվի են առել սովորողների տարիքային, երաժշտական, մանկավարժահոգեբանական պահանջները, երաժշտական պարապմունքների ընթացքում ուսուցումը կազմակերպել են հետաքրքիր և մատչելի ձևով, օգտագործել են դիդակտիկ նյութեր մասնավորապես խաղերի ուսուցման ընթացքում ակտիվացման միջոցներից՝ երաժշտական խաղեր և հանելուկներ, իսկ մեզ հասած քառյակ լուսանցքագրությունները, որոնց մի մասը խաղավորված է, իրենցից ներկայացնում են երաժշտական ստեղծագործությունների կատարման համար գրված մեթոդական ցուցումներ:

Հայ երգը, երաժշտությունը գրելու համար հայ մտավորականները փորձում են ստեղծել նոր համակարգեր: 18-19-րդ դարերում փորձ է արվում ստեղծել նոր նոտագրություն: Այդ ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարել Գրիգոր Գապասաքայանը (1740-1808 թթ.): Նա փորձ է արել ստեղծել խաղային բնույթի նոտագրության նոր համակարգ:

Սակայն հայկական նոր նոտագրության ստեղծման հեղինակությունը պատկանում է Համբարձում Լիմոնջյանին (1768-1839 թթ.):

Նա հենվելով հայ երաժիշտների և եվրոպական նոտագրության փորձի վրա ու հաշվի առնելով հայկական երգի առանձնահատկությունները՝ միաձայնությունը, ոչ հավասար տեմպերացիան, քառալար բնույթը, ստեղծեց «հայկական նոր ձայնագրության համակարգը (1913-1915 թթ.):»:

Երաժշտությունը, որպես դպրոցական առարկա

Հայ դասական կոմպոզիտորների երաժշտամանկավարժական գործունեությունը, նրանց կողմից երաժշտական ծրագրերի, դասագրքերի, ուսումնամեթոդական գրականության ստեղծումը մեծապես նպաստեցին հայ դպրոցում ու դաստիարակության վիճակի բարելավմանը: Ստանալով մասնագիտական բարձրագույն կրթություն Ռուսաստանի և արևմտյան Եվրոպայի մշակութային կենտրոններում, հայ կոմպոզիտորները վերադառնալով հայրենիք, բացի ստեղծագործական աշխատանքից զբաղվում են նաև մանկավարժությամբ և իրենց գործունեության ընթացքում օգտագործում երաժշտամանկավարժական առաջավոր սկզբունքներ, հաշվի առնում սովորողների երաժշտական, տարիքային, մանկավարժահոգեբանական յուրահատկությունները:

20-րդ դարի առաջին երկու տասնամյակի ընթացքում դպրոցներում երաժշտություն են դասավանդել հայ անվանի կոմպոզիտորներ Կոմիտասը, Ա. Տիգրանյանը, Ռ. Մելիքյանը, Ա. Մանուկյանը, Գր. Սյունին, Սպ. Մելիքյանը, Ան. Մայիլյանը, Մ. Միրզայանը, Դ. Դազարյանը, Ե. Սարգսյանը, Ն. Գալանտեյանը, Մ. Մազմանյանը և ուրիշներ:

«Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՛ք ե սովորե՛ք նրանից» (Կոմիտաս)

Ժողովրդական երգարվեստը մեր ազգի նվաճումներից մեկն է, որը ձեռք է բերվել դարերի ընթացքում: Այս արվեստն այնքան հին է, որքան հայ ժողովուրդը:

Հայ ժողովրդական երգի հիմնական ճյուղերից են գեղջկական երգը, գուսանաշուրական արվեստը և քաղաքային երգը: Առանձնակի տեղ են զբաղվում նաև տաղերն ու հոգևոր երգերը:

Ժողովրդական երգարվեստի ճյուղերն իրենց գոյատևման ընթացքում անցել են զարգացման մեծ ու անհարթ ճանապարհ, խորացել և փոխվել իրենց ներսում, ապրել տարբեր փուլեր: Օրինակ՝ գեղջկական երգի զարգացման ընթացքում ստեղծվել են բազմաթիվ ժանրեր՝ աշխատանքային երգեր, հայ ժողովրդի կամքն ու ուժը, հոգևոր հարստությունն ընդհանրացնող վիպերգեր, ծիսական երգեր, ողբեր և այլն:

Ժողովրդական երգարվեստը բանավոր արվեստ է, այն ծնունդ է առել դեռևս հին ժամանակներում: Այդ է պատճառը, որ ժողովրդական երգն ունի բազմաթիվ տարբերակներ: Այն սերնդեսերունդ բանավոր ձևերով փոխանցվելով ենթարկվել է որոշ փոփոխությունների:

Բանավոր լինելու հետևանքով ժողովրդական երգի ստեղծման ընթացքը տարբերային է. մեկը հորինում է երգը, մյուսը՝ հարստացնում այն, երրորդը՝ հղում, չորրորդն էլ հիշում և փոխանցում է սերունդներին:

Ժողովրդական երգի միջոցով ծանոթանում ենք տվյալ ժողովրդի կյանքին, մշակույթին: Այս երգերում դրսևորված են նաև ժողովրդի ինքնությունը, վերաբերմունքն ու մոտեցումը կյանքի հասարակական ու պատմական, սոցիալական և կենցաղային երևույթներին:

Դասերի ընթացքում ժողովրդական երգի լեզուն անընդհատ փոփոխվել է ու կատարելագործվել:

Հայ պրոֆեսիոնալ դպրոցի ձևավոր-

ԱՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ. «Ժամանակները փոխվել են, միջոցները՝ նույնպես, սակայն հետաքրքրությունը, որ առկա է երեխաների մեջ՝ կերպարվեստի հանդեպ, ապշելու է»

Սյունիքի մարզի երեխաների գեղարվեստական նորոթյա ինքնադրսևորումներին անդրադառնալու մեր նախաձեռնությունը, կամա-ակամա, անհրաժեշտ է դարձրել անդրադարձ կատարել մանուկների գեղագիտական դաստիարակությանը և այդ ոլորտում կերպարվեստի դերին ու նշանակությանը: Մեզ հետաքրքրող այդ հարցերի պատասխանը ստանալու համար գրույցի հրավիրեցինք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գեղանկարիչ Արա Հակոբյանին:

- Պարոն Հակոբյան, նախ՝ ի՞նչ ասել է գեղարվեստական կրթություն, գեղագիտական դաստիարակություն:

- Պետք է ասեմ, որ գեղագիտական կամ գեղարվեստական կրթությունն ու դաստիարակությունն ընդունված է ընկալել որպես մանկավարժական գործընթաց: Իմ համոզմամբ այն անհրաժեշտ ուղեկից է մարդու կյանքում և արվեստում գեղեցիկի ընկալման, անձի գեղագիտական զարգացումների, ճաշակի և ընդհանրապես մարդու կրթվածության գործում: Գեղագիտական դաստիարակության ոլորտում, որի միջոցով կյանքում գեղեցիկի նկատմամբ զգացում է ձևավորվում, մեծ դեր է խաղում նկարչությունը:

- Ավելի բացեմ հարցս՝ գույն, գիծ, երևակայություն, կոլորիտ. ի՞նչ ազդեցություն ունեն այդ գործոնները երեխայի ճաշակի ձևավորման, գեղեցիկի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու գործում:

- Նշված գործոնները հանդիսանում են կարևորագույն արտահայտչամիջոցներ՝ կերպարվեստի միջոցով երեխայի գեղագիտական դաստիարակության համար: Հենց գույնը, գիծը և մյուս հանգամանքներն են ձևավորում երեխայի գեղագիտական ճաշակը, տարածական կողմնորոշումը և բնության հետ ներդաշնակ հարաբերակցվելու կարողությունը: Այսօր էլ եվրոպական մի շարք զարգացած երկրներում, անկախ ուսումնական հաստատության մասնագիտական բնույթից, անցնում են նկարչություն առարկան, որի միջոցով էլ անձի մեջ դաստիարակվում ու զարգանում են գեղագիտական ճաշակ ու ընկալումներ՝ գեղեցիկը նկատելու և բնության հետ համահունչ ապրելու արվեստը:

- Մարդը, բնականաբար, չի ծնվում պատրաստի գեղագիտական զգացումներով: Այն զարգանում և ձևավորվում է կյանքի ու գործունեության ընթացքում, հատկապես կրթության և դաստիարակության ժամանակ: Ինչպե՞ս են մեր երեխաները՝ սկսած նախադպրոցական տարիքից, հաղորդակցվում կերպարվեստին և մասնավորապես գեղանկարչությանը, ի՞նչ համակարգ գոյություն ունի կրթության ոլորտում այդ առումով:

- Ասեմ, որ այսօր հանրակրթական դպրոցներում, որպես պարտադիր առարկա, երեխաներին սովորեցնում են կերպարվեստ և երաժշտություն: Այն իր ակունքը դեռ միջնադարյան հայկական բարձրագույն տիպի դպրոցներից է սերում, քանզի նշված առարկաները համարվում էին կարևորագույն գործոններ կրթյալ հոգևորականի կայացման գործում: Այսօր՝ հանրակրթության բա-

րեփոխումների շրջանակում, նախատեսվում է այդ առարկաների ժամաքանակն ավելացնել մինչև ավարտական դասարան, ինչը շատ կարևոր է անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Նշված առարկաներն ունեն առաջնային նշանակություն՝ միջառարկայական կապեր ստեղծելու և երեխայի գեղագիտական ընկալումները զարգացնելու առումով:

- Ձեր գլխավոր խնդիրը՝ մանկավարժական կադրերի ի՞նչ պատկեր կամ ռեսուրս ունենք հանրապետությունում՝ երեխաների գեղարվեստական կրթության ոլորտում ծառայելու համար: Մտել է թե՛ կադրային ի՞նչ ներուժով ենք իրականացնում երեխաների գեղարվեստական կրթությունը կամ գեղագիտական դաստիարակությունը:

- Մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետը յուրաքանչյուր տարի մասնագիտացնում է շուրջ յոթանասուն մանկավարժ-արվեստագետներ, ովքեր բացի մանկավարժական բոլոր դասընթացներից՝ վարպետանում են գեղարվեստական ուղղվածությամբ առարկաներով: Իհարկե, ոչ բոլորն են բռնում մանկավարժի դժվարին ճանապարհը, սակայն

զգալի մասն այսօր դասավանդում է հանրակրթական դպրոցներում կամ մասնագիտական կրթական հաստատություններում: Դրան էլ ավելացնեմ, որ յուրաքանչյուր տարի կազմակերպվում են ուսուցիչների ինչպես կամավոր, այնպես էլ պարտադիր ատեստավորում, վերապատրաստումներ, որոնք էլ նպաստում են ուսուցչի կատարելագործման, նորարարական տեխնոլոգիաների իրենց գիտելիքների արդիականացման և կիրառման գործում:

- Դուք ճանաչված գեղանկարիչ եք: Մենք, ցավոք, ամբողջապես ծանոթ չենք Ձեր ստեղծագործություններին: Ուրեմն և կուզենայինք իմանալ՝ արդյո՞ք Ձեր ստեղծագործությունների շարքում կան մանկական թեմաներով գործեր:

- Յուրաքանչյուր ստեղծագործող արվեստագետ, բնականաբար, պատկերում է մանկությունն իր ստեղծագործություններում: Ընդհանրապես արվեստագետն անձնավորություն է, մանկան պես ուրախանում է հաջողված գործից կամ ամփոփվում ինքն իր մեջ, իր կտավի առջև: Ըստ իս՝ երեխային հատուկ մանկական զգացումները շատ ավելի բնորոշ են հենց արվեստագետին:

- Սյունյաց աշխարհի հոգևոր-մշակութային պատմության մեջ ուրույն

տեղ ունեն կերպարվեստն ու նկարչությունը: Նախշազարդ և գունավոր խեցեղենի բազմաթիվ նմուշներ...

Բացառիկ ժայռապատկերներ՝ գծանկարների վառ արտահայտությամբ...

Մանրանկարչություն, որ միջնադարյան գեղանկարչության առաջատար ասպարեզն է, որի նշանավոր կենտրոնն էր Տաթևի մանրանկարչության դպրոցը՝ Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ...

Մեզ հասած առաջին մանրանկարները՝ 6-7-րդ դարերից, որ տեղ են գտել Բղենո Նորավանքում գրված Էջմիածնի ավետարանում...

17-18-րդ դարերում գեղանկարչության վերելք, որ սկզբնավորվում է Սյունյաց աշխարհի մեծանուն զավակ Նաղաշ Հովնաթանի և նրա հետևորդների գործունեությամբ...

Ձեր համառոտ անդրադարձը գեղանկարչության սյունիքյան դպրոցին կամ ավանդույթներին:

- Սյունիքում միջնադարյան մշակութային կյանքն աննախադեպ վերելք է ապրել 9-րդ դարի սկզբից: Արդեն 10-րդ դարում գործել է Տաթևի վարդապետարանը: Այդտեղ վարդապետները զբաղվել են



“Արա Հակոբյան, ծնվել է 1973 թ. ապրիլի 2-ին Երևանում՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ընտանիքում: 1990-1997 թթ. սովորել և ավարտել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի գեղանկարի բաժինը: 2001 թվականին կատարելագործվել է Վենետիկի գեղարվեստի ակադեմիայում: 2002 թվականից աշխատում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Արվեստագիտության դոկտոր է, պրոֆեսոր: 2008-2017 թվականներին ղեկավարել է արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնը: 2017 թվականից Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանն է: ”



Հայ երաժշտամանկավարժական միությունը և երաժշտական դաստիարակությունը հայ դպրոցում

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏՂ 11

ման ու կազմավորման շրջանում մեծ է եղել ժողովրդական երգի նշանակությունը: Ժողովրդական երգն ունի բարձր գաղափարայնություն, արտահայտման անմիջականություն, ազգային ինքնատիպություն:

Ժողովրդական երգը նաև դասական է, քանի որ այն ունի հարատև կյանք, օտար ազդեցությունների դիմադրելու զորեղ ուժ, հետագա սերունդների գեղարվեստական պահանջներին արձագանքելու մեծ հնարավորություն:

Ժողովրդական և պրոֆեսիոնալ արվեստներն ամուր կապված են իրար հետ: Կոմպոզիտորներն իրենց ստեղծագործություններում օգտագործում են ժողովրդական երգի նմուշներ, իսկ ժողովուրդն իր արվեստում կոմպոզիտորական ստեղծագործության նմուշներ:

Այսպիսով, ժողովրդական և պրոֆեսիոնալ արվեստները միշտ կապի մեջ են, ընդ որում՝ պրոֆեսիոնալ արվեստում լայնորեն ու ստեղծագործաբար օգտագործվում է ժողովրդականը: Դա պրոֆեսիոնալ արվեստում ազգային ոգին պահպանելու ճանապարհներից մեկն է:

Ազգային պրոֆեսիոնալ դասական երաժշտության հիմքը դրել է Կոմիտասը: Նա օգտագործելով համաշխարհային մշակույթի ձեռքբերումները երաժշտական գրեթե բնագավառում պոլիֆոնիկ բազմաձայնությունը հարստացրեց հայկական ժողովրդական երաժշտությունը: Նա չհեռացավ ազգային երաժշտական ակունքներից:

Նա կարողացավ պահպանել ազգային ոճը, ոգին:

Ժողովրդի կողմից ստեղծված եր-

գերն անկեղծ են, լի են զգացմունքային տարբեր երանգներով: Հայ գեղեկական երաժշտությունը կազմում է ազգային պրոֆեսիոնալ երաժշտական դպրոցի հիմքը:

Կոմիտասի երաժշտամանկավարժական առաջադեմ գաղափարները, մանկավարժական, խմբավարական չգերազանցված գործունեությունը հանդիսանում են նրա բազմակողմանի տաղանդի արգասիքը և պահպանել են իրենց ուսումնադաստիարակչական հնարավորությունները, իսկ դրանց կիրառումը կարող է նպաստել արդի երաժշտական կրթության և դաստիարակության առաջընթացին:

Նախախորհրդային շրջանում հրատարակված երաժշտության դասագրքերից են Ռ. Մելիքյանի և Ա. Մանուկյանի «Երաժշտական այբբենարանը»:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Ռ. Մելիքյանի ակտիվ մասնակցությամբ ստեղծվեց երաժշտական ստուդիա, որի հիման վրա 1923 թվականին բացվեց Երևանի պետական կոնսերվատորիան:

Բացի երաժիշտ-մանկավարժների պատրաստման գործից՝ 20-րդ դարի 20-ական թվականներին հրատարակվեցին երաժշտության նոր դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, որոնք նպաստեցին սովորողների երաժշտական կրթության, նրա բովանդակության վերափոխմանը, երաժշտադաստիարակության որակի բարելավմանը: 1959 թ. լույս է տեսնում կոմպոզիտոր Մ. Մազմանյանի «Երաժշտության դասավանդման մեթոդիկա» ձեռնարկը՝ երաժշտության ուսուցիչների համար:

Աստիճանաբար սկսեց բարձրանալ

յունք, այնպես էլ իր արվեստը:

- Հանրապետությունում կա՞ համակարգ կամ ավանդույթ՝ կերպարվեստի և հատկապես գեղանկարչության ոլորտում շնորհալի երեխաներին ի հայտ բերելու, նրանց հետագա ստեղծագործական ընթացքին նպաստելու համար: Կա՞ վերահսկողական մեխանիզմ՝ երեխաների գեղագիտական դաստիարակության գործընթացն աղավաղումներից և սխալ ու ոչ ազգային միտումներից զերծ պահելու համար:

- Հայ ազգը մշակութասեր է: Անգամ Մեծ եղեռնի օրերին գաղթի ճամփան բռնած կանայք Աստվածաշունչն արտագրել և նկարագարել են մեկ այլ ձեռագրում՝ դրանով պահպանելով մեր լեզուն, կրոնը և արվեստը: Չարմանալի չէ, որ այսօր աշխարհում պահպանվում է շուրջ երեսուն հազար հայկական ձեռագիր մատյան: Ժամանակները փոխվել են, միջոցները՝ նույնպես, սակայն այն հետաքրքրությունը, որ առկա է երեխաների մեջ դեպի կերպարվեստը, ապշելու է: Բազմաթիվ նկարչական դպրոցներ, արվեստի ստուդիաներ, և բոլորը՝ գրեթե լցուն: Այլ հարց է դասավանդման խնդիրը: Մասնավորն ունի թե՛ առավելություն, թե՛ հակառակը: Շնորհալի երեխան, պահելով սեփական նկարագիրը, փորձառու մանկավարժի միջոցով կարող է լիարժեք բացահայտվել, կատարելագործվել և ի վերջո դառնալ արվեստագետ: Այստեղ կարևորում ենք դասավանդողի անձը, որը նրբակատ հոգեբանի պես հատիկ առ հատիկ սերմանում է իր սաներին, նրանց մեջ արթնացնի սեր իրական արվեստի հանդեպ, սեր դեպի գեղեցկությունը, սեր դեպի հայրենի բնությունը, քանզի միայն ազգային հիմքի վրա կարող է ձևավորվել համազգայինը:

- Ցուցահանդեսներ՝ մանկական թեմաներով... երեխաների համար կամ

երաժշտություն առարկայի հեղինակությունը, և առարկան իր պատվավոր տեղը գրավեց սովորողների երաժշտագեղագիտական դաստիարակությունը՝ իրագործող դասընթացների շարքում:

Հայաստանում 1965 թվականից սկսած Լուսավորության նախարարության կողմից հանձնարարվեց մի խումբ երաժիշտ-մանկավարժների՝ ստեղծել «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ, ծրագիր և 1-ից VIII դասարանների համար դասագրքեր և ուսուցչի մեթոդական ձեռնարկներ:

Հանձնաժողովի նախագահ ընտրվեց կոմպոզիտոր ՀՀ ժողովրդական արտիստ և պրոֆեսոր Մարտին Մազմանյանը, հանձնաժողովի անդամներ ընտրվեցին կոմպոզիտորներ Կարո Չաքարյանը, Գեղունի Զոթյանը, երաժիշտ Հրաչյա Օհանյանը և երաժիշտ-մանկավարժ Յուրի Յուզբաշյանը: Նրանք հրատարակեցին դասագրքեր 1-ից 8-րդ դասարանների համար:

Մանկավարժների նոր սերունդը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի ուսուցման նոր մեթոդները: Կատարվում են մանկավարժական գիտափորձեր և ուսումնասիրում դասավանդման առաջադիմական փորձը: Նման գիտափորձերից մեկը պրոֆեսոր Յու. Յուզբաշյանի կողմից երաժշտական լսողության զարգացման լադային սովի-զացիայի մեթոդի կիրառման արդյունավետության փորձն էր, որի արդյունքում հրատարակվեցին Յու. Յուզբաշյանի «Նոտագրության ուսուցումը հարաբերական և բացարձակ մեթոդներով» և Յու. Յուզբաշյանի, Պ. Վելյի «Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը» մեթոդական

երեխաների մասնակցությամբ: Այդ առումով ի՞նչ ունենք հանրապետությունում վերջին տարիների կտրվածքով:

- Վերևում խոսվեց արվեստի դպրոցների հարցի շուրջ: Հավելեմ, որ ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր տարի մեկ կամ երկու անգամ նկարչական դպրոցները կազմակերպում են հաշվետու, անհատական և խմբակային ցուցահանդեսներ, նաև միջդպրոցական մրցանակաբաշխություններ, թեմատիկ նկարահանողներ: Կարևորում ենք այդ գործընթացը, քանզի շնորհալի երեխան կամ պատանին հարկավոր է իրեն տեսնի այլ միջավայրում, համեմատվի իր սերնդակիցների հետ, ծանոթ լինի արվեստների ուղղություններին և ոճական կատարումներին: Եվ կարևոր չէ, որ բոլորը դառնան նկարիչ, միայն այն անհամանքը, որ երեխան չփվում է արվեստի հետ, առնչվում արվեստագետ-մանկավարժների հետ, արդեն նրա մեջ արմատավորվում են գեղագիտական ճաշակ ու ընկալումներ: Դա ոգևորիչ է: Ասեմ նաև, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի ճեմասրահում պարբերաբար ցուցադրվում են հանրապետության մի շարք շրջաններում գործող արվեստի դպրոցների երեխաների աշխատանքները: Լինելով արհեստավարժ միջավայրում նշանավոր արվեստագետների կողքին, մեր հայորդիներն իրենց արվեստագետ-ուսուցիչների հետ, որոնցից շատերը մեր շրջանավարտներն են, ինչ-որ չափով հաշվետու են լինում իրենց կատարած աշխատանքի համար, իսկ մեր առօրյան իրենց ստեղծագործություններով լցնում արևով ու լավատեսական տրամադրությամբ:

Ի դեպ, օգտվելով առիթից՝ սիրով հրավիրում ենք մեզ մոտ ցուցադրվելու

ձեռնարկները: Այնուհետև՝ ժամանակի պահանջով 2007 թ. ստեղծվեցին երաժշտության նոր չափորոշիչներ, դասագրքեր ու մեթոդական գրականություն, որոնց հեղինակներն են Յու. Յուզբաշյանը, Ա. Փահլևանյանը, Ա. Լուսինյանը և Վ. Ավետիսյանը:

Այսօր կյանքը նորից պահանջներ է դնում երաժշտական կրթության և դաստիարակության համակարգի առջև՝ հաշվի առնելով ազգային մանկավարժական գիտական մտքի և համամարդկային լավագույն փորձի ձեռքբերումները: Պատահական չէ, որ խնդիր է առաջացել Հայաստանը տեսնել կրթության և դաստիարակության նոր դիտակետում:

Այսօր ստեղծվել են երաժշտական դաստիարակության նոր չափորոշիչներ հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարանների աշակերտների համար: Նման փորձն առաջադիմական է և խրախուսելի, քանի որ առանց երաժշտության մարդու դաստիարակությունը կլինի թերի: Այդ մասին են վկայում բոլոր ժամանակների երաժշտական դաստիարակության չափորոշիչները: Բացառություն չեն նաև նոր հրատարակված չափորոշիչները:

Ազգային դպրոցի շահերը պահանջում են միշտ կատարելագործել կրթության և դաստիարակության համակարգը, որի բաղկացուցիչ մասն է երաժշտությունը:

Յուրաքանչյուր ժողովրդի երաժշտական մշակույթը որպես ինքնուրույն մշակույթ գտնվում է մյուս ժողովուրդների երաժշտության, մշակույթի հետ փոխներգործության և փոխազդեցության պայմաններում: Այդպես է զարգանում, հարստանում ազգային, համամարդկային մշակույթն ընդհանրապես:

Ժողովուրդների փոխհարաբերությունը, փոխազդեցությունը կան և կմնան ընդմիշտ, քանի որ դա ազգայինի զարգացման բնական ընթացքն է, այդ պայմաններում են ձևավորվում և զարգանում ազգային առանձնահատկությունները, երաժշտական մշակույթը, արվեստը, կյանքը:

Աստվածաբանությամբ, փիլիսոփայությամբ, քերականությամբ, ճարտասանությամբ, տոմարագրությամբ և այլ գիտություններով: Սակայն այն գիտական համակարգված ուսումնասիրման և ուսուցողական բնույթ է ստացել 1280-ական թթ. հիմնված Գլածորի համալսարանում: Գլածորի համալսարանում դասավանդվել են միջնադարյան եվրոպական համալսարանների գրեթե բոլոր առարկաները: Գլածորի համալսարանի հետ են կապվում հայ միջնադարյան մշակույթի երևելի գիտակներ Ստեփանոս Օրբելյանը, Մովսի վարպետը, Թորոս Տարոնացին, Ավագը և ուրիշներ:

Արդեն 13-րդ դարում զրչության կենտրոններ էին գործում Նորավանքում: Այդտեղ, Մովսի վարպետի կողմից կառուցված երկհարկ եկեղեցի-դամբարանը (Բուրթեյաշեն) հիրավի համարվեց հայ միջնադարյան ճարտարապետական լավագույն հուշարձաններից մեկը: Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննես Օրբելյանի նախաձեռնությամբ 1321 թ. Մովսի վարպետը կերտում է Արենիի Սբ Աստվածածին եկեղեցին, ուսումնական հաստատություն է գործել Յաղաց քարում և այլուր: Փաստորեն, հրաշագործ վարպետների կողմից կերտված մեր եկեղեցական համալիրներին կից գործել են բարձրագույն տիպի դպրոցներ, ասել է թե՛ համալսարաններ, որտեղ էլ գործել են գրչության կենտրոններ, որոնց շնորհիվ էլ այսօր ունենում ենք էական տեղեկություններ և մատենական նկարչության չքնաղ էջեր: Հետաքրքրական մի փաստ. Սյունյաց աշխարհի միջնադարյան մատենական թերթերից երևացող ոճապատկերային արտահայտչաձևերը նորովի արտահայտվում են արդի արվեստագետների ստեղծագործություններում: Կարծում եմ, ինչպես մարդն է միջավայրի արդ-

նաև Սյունիքի մարզի արվեստագետ պատանիներին:

- Մենք խոսեցինք մանրանկարչության մասին...

Մանրանկարչության հիմնական բնագավառներից մեկն էլ գրքարվեստն է, որի դրսևորումներից է գրքերի ձևավորումը: Ի՞նչ կարող եք ասել մանկական գրքերի ձևավորման ներկայիս վիճակի մասին:

- Խորհրդային շրջանում Հայաստանում մեծ վերելք էր ապրում գրքարվեստը: Բավական է հիշել հայ կերպարվեստի նահապետ Մարտիրոս Սարյանի ձևավորումները, հայկական գրքարվեստի մեծանուն վարպետ Հակոբ Կոչոյանի թերթերը, ապա Տաճատ Խաչվանքյան, Արա Բեքարյան, Հենրիկ Մամյան, Անդրանիկ Կիլիկյան և այսպես շարունակ: Այսօր նոր տեխնոլոգիաների մուտք գործելը մասամբ փոխում է գրքի ձևավորման մոտեցումները: Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ համակարգչի այս կամ այլ ծրագրով կարելի է արագ և հեշտությամբ պատկերազարդել որևիցե մի հեքիաթ կամ առակ: Սակայն պետք չէ մոռանալ մի կարևորագույն հանգամանք, այն է՝ ցանկացած զարգացած տեխնոլոգիաներ շարժվում են մարդկային մտածելակերպի և երևակայության շնորհիվ: Եթե համակարգչի առջև աշխատող անձը կրթյալ մասնագետ չէ, ապա դժվար թե իր կատարած աշխատանքն արտահայտի այն զգացումները, որ գետեղված են գրքի բովանդակության մեջ: Այստեղ է որ, ինչպես նշվեց մեր հարցազրույցի նախաբանում, անհրաժեշտ պայման են կատարողի մասնագիտական կարողությունները, նրա գեղարվեստական ճաշակի զարգացվածությունը և գեղագիտական ընկալումները:

ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՍԿՐԻՄՍԻ ԻԳ ՍԿՐԵՍԻՍԵՆՑԻՆԵՐ

Քաջարանցի պարուհու տպավորիչ հաղթանակը

Ամանորի նախօրեին ուրախ լուր ստացվեց Պրահայից: Դեկտեմբերի 18-ին Չեխիայի մայրաքաղաքում կայացած «Պրահայի աստղեր» մրցույթ-փառատոնից Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մշակույթի պալատի «Նռանե» պարային համույթի մենապարուհի Սառա Ստեփանյանը վերադարձել է առաջին կարգի մրցանակով և դափնեկրի կոչումով:

Համույթի գեղարվեստական ղեկավար և պարուսույց Մելանյա Մարտիրոսյանի սանուհու հաղթանակը դատարկ տեղում չի ծնվել: Սառան 2019-ին մասնակցել է «Արտ մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնին՝ «Մենապար» անվանակարգում արժանանալով երկրորդ կարգի դափնեկրի կոչմանը: Այս հաջողությունը նրան իրավունք էր վերապահում մասնակցել մրջազգային փառատոնի: Մասնակցել է նաև Գյումրիում, Ծաղկաձորում, Երևանում ու Դիլիջանում կազմակերպված փառատոններին՝ դարձյալ աչքի ընկնելով և արժանանալով գովասանագրերի, դափնեկրի կոչումների:

«Պրահայի աստղեր» փառատոնին մասնակցում էր հինգ երկիր՝ Գերմանիա, Չեխիա, Լիտվա, Ուկրաինա, Հայաստան՝ 15-ից ավելի պարային խումբ և մենակատարներ:

մրցանակով, իսկ Անիկ Սահակյանը՝ Սիսիանի արվեստի դպրոցի սանը, «Ակադեմիական երգեցողություն» անվանակարգում արժանացավ մեծ մրցանակի», - պատմում է Մելանյա Մարտիրոսյանը:

Փառատոնի ծրագիրը նաև ներառում էր ճանաչողական եքսկուրսիաներ: Հայաստանի պատվիրակության անդամները ծանոթացան Պրահայի, Բեռլինի, Դրեզդենի պատմաճարտարապետական հուշարձաններին, տեսարժան վայրերին, ընդ որում չորս օր անցկացրեցին Գերմանիայի Դաշնությունում:

Միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցությունը հնարավոր դարձավ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հովանավորության շնորհիվ, ինչի առիթով հարկ է ևս մի անգամ երախտագիտություն հայտնել ընկերության տնօրենությանը:

Սառա Ստեփանյանը ծնվել է 2007 թվականին Քաջարանում: Սովորում է Քաջարանի թիվ 2 դպրոցի տասներորդ դասարանում: Ուսման առաջավոր է: Հինգ տարեկանից հաճախել և երկու տարի առաջ ավարտել է Քաջարանի արվեստի դպրոցի պարարվեստի բաժինը: Ուսման մեջ դրսևորել է պատասխանատվություն և համառ բնավորության շնորհիվ հաղթահարել դժվարություններ: Պարուսույց Մելանյա Մարտիրոսյանի անմնացորդ աջակցության շնորհիվ տիրապետել է ժողովրդական պարար-



Այս աղջնակը չի պարում, այլ ասես ճախրում է բեմում

Հաճախ չի պատահում, որ շնորհալի երեխան կամ պատանին բազմակողմանի շնորհալի լինի և ինքնադրսևորվի արվեստի մի քանի ճյուղում: Մեզանում այդ երևույթը դրսևորվում է Մարի Էլյանի մեջ: Այս դեռահաս պարմանուհին իր ուժերը փորձում է պարի, երգարվեստի ու թատերական արվեստի բնագավառներում: Նա ոչ միայն փորձում է, այլ նաև մեծ հաջողությունների է հասել իր այդ դրսևորումներում: Աստված շնորհել է նրան բեմական հմայք, աշխատասիրություն, արվեստն ընկալելու նրբին ճաշակ (վերջինս հավանաբար նրան փոխանցվել է պապից՝ ճանաչված գեղանկարիչ ու մանկավարժ Հրանտ Էլյանի թոռնուհին է), և, իհարկե, այդ ամենին ավելացել են դաստիարակվածությունն ու Էթիկան:

Կարծես թե արվեստում իր քայլերն անող մարդու համար բոլոր նախադրյալները կան, ու աստվածային շնորհով օժտված լինելով՝ Մարին չէր կարող հաջողությունների չհասնել:

Նրա առաջին լուրջ և կարևոր հաջողությունը 2016 թվականին էր, երբ աղջնակն ընդամենը 11 տարեկան էր: Մասնակցեց Գյումրիում անցկացվող «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին՝ բազմաթիվ մրցակիցների մեջ արժանանալով երրորդ կարգի դափնեկրի կոչման: Երգեցողության բնագավառի նրա ձեռքբերումները հետագա տարիներին շարունակվեցին «Ոսկե տավիղ» հանրապետական երգի փառատոնում, որտեղ զրավեց երկրորդ պատվավոր տեղը, իսկ «Գլոբալ արտֆեստ» երգարվեստի մրցույթ-փառա-

տոնում զբաղեցրեց առաջին պատվավոր տեղը:

2020 թվականին մասնակցեց «Սլավյանսկի բազար» մանկական կատարողների միջազգային մրցույթի հայաստանյան փուլին և արժանացավ շնորհակալագրի՝ այդ ամենահեղինակավոր և պրոֆեսիոնալ մրցույթ-փառատոնի նախընտրական հանձնախմբի կողմից: 2018 թվականին Մարին ունեցավ իր առաջին մենահամերգը Կապալի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում:

Երգեցողության բնագավառում Մարի Էլյանի հաջողությունները թվարկելիս չենք կարող չշեշտել նրա մանկավարժին՝ Թերեզա Հովհաննիսյանին, ում դերը մեծ է աղջնակի հաջողությունների գործում:

Դժվար է որոշել՝ Մարի Էլյանն ավելի շատ երգչուհի՞ է, թե՞ պարուհի, քանզի արվեստի այս երկու ճյուղը նրանում չեն զիջում միմյանց, այլ կարծես փոխլացնում են:

Տարեկիցների շրջանում Մարին բացառիկ պարային զգացողությունով է օժտված. իր ամբողջ էությանբ այնպես է զգում երաժշտության հնչյուններն ու դրանք պարային տարրերով վերարտադրում, որ ականա հիշում ես հորենացու տողերը՝ զրված միջնադարյան պարուհի-դերասանուհի Նազենիկի մասին՝ «Ձի հոյժ գեղեցիկ էր և երգե՛ր ձեռամբ»: Այս աղջնակը չի պարում, այլ ասես ճախրում է բեմում, նրա պարային քայլը քայլ չէ, այլ նրբին սահը՝ բեմում:

Վերջերս կապանյան հանդիսատեսն ականատես եղավ նրա կատարմամբ «Նուենի պարին»՝ Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից (պարուսույց՝ Թամարա Ստեփանյան): Սա կապանյան պարարվես-



«Սառան մրցույթին հանդես է եկել երկու կատարումով՝ ժողովրդական պար՝ «Ախալցխա» և ժողովրդական պար՝ «Հարսնացուն Չանգեզուրից»: Նա ոչ միայն բարձրարվեստ պար ցուցադրեց, այլև ներկայացրեց հայ ազգային կոլորիտը: Փառատոնը և մրցանակաբաշխությունը, նաև շքահամերգը (զալա համերգ) կայացել են դեկտեմբերի 18-ին: Փառատոնին Հայաստանի Հանրապետությունը ներկայացրեց վեց մասնակից, ովքեր տարբեր անվանակարգերում պարգևատրվեցին առաջին

վեստին, հասել հաջողությունների: Իսկ հաղթանակը միջազգային հարթակում երկար սպասել չի տվել...

«Սառան վաղ տարիքից առանձնացել է մյուսներից պարի շարժումներն ընկալելու զգացողությամբ և աշխատասիրությամբ, փառատոների ժամանակ էլ մասնագետները գնահատել են նրա կատարողական արվեստը, - մեր զրույցի ավարտին նշեց Մելանյա Մարտիրոսյանը:

ՎԱՀՂԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Լիլի Նարինյան» պարային ստուդիան մնայուն հետք է թողնում


«Լիլի Նարինյան» պարային դպրոց-ստուդիան գործունեությունը սկսել է 2020 թ. մարտի 1-ից: Պարային դպրոցում կրթություն են ստանում 100-ից ավելի աշակերտ: Պարային դպրոցն ունի վեց խումբ: Այսօր կիսուս ենք ավագ խմբի աշակերտի մասին: Այս երկու տարում պարային ստուդիան հետք է թողել ոչ միայն Գորիսի մշակութային կյանքում, այլև հանրապետության պարարվեստում:

Մասնակցել ենք մի շարք մրցույթ-փառատոների և զրանցել հաջողությամբ: Առաջինը եղել է Հայաստանի ազգային պարարվեստի միության կողմից կազմակերպված հայ պարարվեստի երախտավոր Ադասի Շաբոյանի 100-ամյակին նվիրված փառատոնը: Այնուհետև մասնակցել ենք միության կողմից կազմակերպված հայ պարարվեստի երախտավոր Վարդգես Ռաշիդյանի 100-ամյակին նվիրված «Պարատուն-2022» ամենամյա փառատոնին:

Մի քանի անգամ մասնակցել ենք Գյումրիում, Ծաղկաձորում կայացած «Հայրենի մշակույթ» համահայկական փառատոն» խորագիրը կրող փառատոնին: Մասնակցել ենք «Ուրախ մոլորակ» միջազգային փառատոնին, որտեղ մասնակցում էր հինգ պետություն, և հաջողվել է զրավել պատվավոր 2-րդ հորիզոնականը:

«Լիլի Նարինյան» պարային դպրոց-ստուդիան համագործակցում է «Թփ մոդել Հայաստան» ասոցիացիայի հետ, և առաջին անգամ Գորիսի մշակութային կյանքում տեղի ունեցավ «Գորիսյան եսթիլներ» խորագիրը կրող նորաձևության ցուցադրությունը, որին մասնակցեց նաև սիրված երգչուհի Արփին: Մշակութային միջոցառումները մշտապես համեմվում են գեղեցիկ համերգային ծրագրերով, որի ապացույցն է Գորիսում կայացած համերգը՝ մասնակցությամբ սիրված երգչուհի Սիլվա Հակոբյանի:

2022 թ. նոյեմբերի 24-ին մասնակցել



Պարային դպրոցում առաջնային են համարվում ազգային բարձր գնահատանքն ու նրա ուսուցումը թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքներին, իսկ դասական պարն ամուր հիմքի վրա է: Ունենք շատ ծրագրեր, որոնց մասին կիմանաք ժամանակին...

ենք Հայաստանի ազգային պարարվեստի միության կողմից կազմակերպված «Պարատուն» ամենամյա փառատոնին՝ նվիրված ՀՀ ժողովրդական արտիստ,

պարարվեստի մեծ նվիրյալ Սուրեն Գյանջումյանի 90-ամյակին:

«Լիլի Նարինյան» պարային դպրոց-ստուդիայի խաղացանկը բազմաոճ է,

“

ուսուցանվում են հայ ժողովրդական պար, դասական պար, այլ ժողովուրդների պարեր:

Պարային դպրոցում առաջնային են համարվում ազգային բարձր գնահատանքն ու նրա ուսուցումը թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքներին, իսկ դասական պարն ամուր հիմքի վրա է: Ունենք շատ ծրագրեր, որոնց մասին կիմանաք ժամանակին...

Սիրում ենք ավելի շատ գործել, քան խոսել...

ՄԻԼԵՆԱ ԲԱՆՇՅԱՆ

տում մի նոր խոսք էր: Այդ դասական մենապարը Մարիի կատարմամբ հրաշալի էր ու անզուգական: Ինչպիսի՜ պատիկա, ինչպիսի՜ կերպարային զգացողություն՝ ձեռքեր, աչքեր: Հատկապես աչքեր ու զգացողություն, որը, ցավոք, մեզանում այդ բնագավառում, շատ է պակասում:

Այստեղ, իհարկե, դրվատանքի խոսքեր պետք է իղել նրա առաջին պարուսույցին՝ Գայանե Վարդիկյանին և ներկայիս դասախոսին՝ Թամարա Ստեփանյանին, ովքեր մեկը մյուսին փոխարացնելով կերտում են ապագայի պարուհուն, ով դեռ իր խոսքը կասի... Մարի Ելյանի ձեռքերումներն այս բնագավառում քիչ չեն՝ «Արտ դանս» հանրապետական առաջին մրցույթ-փառատոնում արժանացել է երրորդ կարգի դափնեկրի կոչման, և իր պարուսույց Գայանե Վարդիկյանի հետ հրավիրվել Վրաստանի Հանրապետություն, որտեղ պարել է Ռեվազ Լազիձեի անվան դպրոցի համերգային դահլիճում, Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի Մանթաշյանցի անվան կրթամշակութային և երիտասարդական կենտրոնում՝ արժանանալով դիպլոմների ու պատվոգրերի:

2020 թվականին հրավիրվեց համալրելու նորաստեղծ «Էքսպերիմենտալ» պարախմբի շարքը (ղեկավար՝ Ռուզաննա Խաչատրյան) և բազմաթիվ ելույթներով մասնակցեց համաքաղաքային միջոցառումների: 2021 թվականին համալրեց նորաստեղծ «Չանգեզուր» ժողովրդական պարերի անսամբլի շարքը (պարուսույց՝ Վահագն Գասպարյան): Այս համույթի կազմում մասնակցեց երևանում կազմակերպված «Պարատուն 2021» պարային փառատոնին և արժանացավ պատվոգրի:



2021 թվականին համալրեց նորաստեղծ «Չանգեզուր» ժողովրդական պարերի անսամբլի շարքը (պարուսույց՝ Վահագն Գասպարյան): Այս համույթի կազմում մասնակցեց երևանում կազմակերպված «Պարատուն 2021» պարային փառատոնին և արժանացավ պատվոգրի:

“

Մասնակցեց «Օռանժեվի Զորույթի 2022» երգի ու պարի միջազգային փառատոնին՝ գրավելով առաջին պատվավոր հորիզոնականը:

Չնայած իր տարիքին՝ Մարին մի շարք մրցույթների է հասցրել մասնակցել, բազմաթիվ դիպլոմներ ու պատվոգրեր բերել Կապան: Նրա ընթացքը պարային ասպարեզում սկսվել է Կապանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի «Սիլուետ» պարային համույթից (պարուսույց՝ Գայանե Վարդիկյան), իսկ այժմ ուսանում է Կապանի արվեստի պետական ջութի պարարվեստի բաժնում (պարուսույց-դասախոս՝ Թամարա Ստեփանյան):

Մարին այս ամենին զուգակցեց նաև թատրոնը. 2021 թվականին Կապանի թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանի և գեղարվեստական ղեկավար Իշխան Ղարիբյանի կողմից հրավիրվեց խաղալու «Լոյի Բոբը» Ամանտի ներկայացումում, որին հաջորդեց Քրիստինե Սլոյանի կողմից բեմադրված «Իմ հրեշը» ներկայացմանը մասնակցելը, իսկ այժմ խաղում է թատրոնի նորանշանակ գեղարվեստական ղեկավար Անդրանիկ Խաչատրյանի կողմից բեմադրվող «Կաղանդ պապի վերադարձը» ներկայացումում:

Շարունակվում են Մարի Ելյանի ստեղծագործական ինքնադրսևորումներն արվեստի բնագավառում: Արդեն որպես պրոֆեսիոնալի ուղին բռնած պարուհի՝ երգում է, խաղում է, ապրում է արվեստով ու հիացնում իր մտերիմներին, իր շրջապատին:

ԱՐԹՈՒՐ ԳԱԲՐԻԷԼՅԱՆ
ԿԱԴՄԵՆԱ ԱԼ. ՇԻՐԱԿՆԵՐԵԻ
ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՄԱՏԻԿԱԿԱՆ
ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐԱՍԱՆ

... Եվ Չեխիայում հնչեց Գորիս անունը

Տիպիկ հայկական դիմագծեր՝ խոհուն հայացք, կոկիկ սանրվածք, խոշոր աչքեր, թավ հոնքեր, ոսկեղենիկ հայերենով մտքերի անկաշկանդ շարադրանք, որևէ հարցադրմանը պատասխանելուց առաջ՝ հանգիստ պահվածք, բայց և՛ ուշադրության սևեռում, մտքերի կենտրոնացում... 15-ամյա Դավիթ Հարությունյանն է՝ Գորիսից, ում հետ հանդիպման առիթը երգարվեստում նրա ունեցած հաջողություններն են, ինձ հետաքրքրողը՝ նրա բնավորության այնպիսի գծերի հայտնաբերումն ու բացահայտումը, որոնք սիրած մասնագիտության հանդեպ ունեցած անմնացորդ նվիրումն ու նպատակասլացությունը նրան դարձրել են իր ընտրած կյանքի տեսլականին ու երջանիկ ապագային ձգտող խոստումնալից երիտասարդ արվեստագետ: Հայրը՝ Վարդանը, Գորիսի հաստատություններից մեկում ավտոտնտեսության պետ է, մայրը՝ Նոնան, համակարգչային օպերատոր: Ընտանիքում տիրում են սեր և համերաշխություն, իսկ ավանդապահ ծնողների մարդամոտության ու հյուրասիրության հետքն էլ իր գործն է արել. ամեն անգամ, երբ տանը որևէ միջոցառում էր, փոքրիկ Դավիթը կարծես եռում էր. հյուրասենյակի մի անկյունը բեմի էր վերածվում, տունը՝ փոքրիկ հանդիսասարահի, ուր բոլոր հանդիսականները գրավել են իրենց տեղերը. ծնողներ, բարեկամներ, հարևաններ, ընկերներ... «Միջոցառումը» տարբեր մասերից է կազմված, գործող անձը՝ մեկ հոգի. Դավիթը և՛ հանդիսավար է, և՛ հայկական ազգագրական պարերի մենակատար, հայրենասիրական ու ժողովրդական երգերի կատարող... Զոթ տարեկանից սկսած՝ արդեն ուներ նախընտրած ստեղծագործողների բազմաժանր երգացանկ, որոնց ազատորեն տիրապետում էր՝ ռազմահայրենասիրական, աշուղական-գուսանական-ժողովրդական, էստրադային, դասական: Ընտանեկան միջոցառումներում և դպրոցի կոլեկտիվի առջև բազմիցս կատարած նրա վաղ մանկության տարիների սիրելի երգն ունկնդիրների համար դեռևս ամբողջովին չբացահայտված հայտնագործություն էր, իսկ իր համար՝ երաժշտարվեստի ապագայի կայացման գործում երգ-երգոց. Արաբո Իսպիրյան. «Տուն իմ հայրենի»:

Խաղաղ անկյուններից մեկում Գորիսի անդորրը վայելում ենք երեքով. ես, պատանի Դավիթն ու հայրը՝ Վարդանը. «Այդպիսի հավաքների ժամանակ մեր տունն իսկական տոնախմբության էր վերածվում: Հենց այդ ժամանակ բարեկամներից մեկն արդեն «օծել» էր Դավիթին՝ «Փոքրիկն անապյան բեմի մարդ է դառնալու»»: Դավիթը մեղմ ժպտում է և ի նշան համաձայնության՝ լրացնում հորը.

– Ես դեռ չեի հասկանում, թե ինչ է մշակույթը, բայց մեր տանը, դպրոցում, բակում, ընկերներիս շրջապատում միշտ նրանց առաջարկում էի կազմակերպել այնպիսի միջոցառումներ, որոնք մեզ կուրախացնեին և մեր առօրյան կդարձնեին առավել իմաստալից: Խոսափողը ձեռքիս ինձ հանդիսավար տեսլական էր, երգում, պարում էի՝ ընկերներին մասնակից դարձնելով այս ամենին: Բոլորն էլ մասնակցում էին, բոլորն էլ ուրախ էին: Այնքան սիրեցի երաժշտությունը, որ անընդհատ մտածում էի. «Ե՞րբ կլինի՝ ընդունվեմ երաժշտական դպրոց»:

Երաժշտությունից բացի, Դավիթի մյուս զբաղմունքներն ազատ ժամանակը «հաճելի» օգտակարի հետ՝ սկզբունքի համատեղում էր: Դեռ վեց տարեկան էր (տարիքը չէր համապատասխանում երաժշտական դպրոց ընդունվելու համար), որոշեց զբաղվել սպորտով: «Շոտոկան կարատե-դո»-ի քառամյա պարապմունքներում մարզիչ Նորայր Ստեփանյանի շնորհիվ ստացավ վար-

պետության նախավերջին կարգ՝ շագանակագույն գոտի: Ստեփանակերտում և Գորիսում «Հայաստան-Արցախ» և Սյունիքի մարզային առաջնություններում զբաղեցրեց 2-րդ և 3-րդ տեղերը: Կարատեից հետո մարզական կյանքը շարունակեց՝ զբաղվելով սիրողական ըմբշամարտով:

– Երգն ու սպորտը մարդուն ինքնակրթում, զարգացնում են: Սպորտի միջոցով սովորել եմ ինքնատիրապետում, համբերատարություն, նախաձեռնողականություն: Ֆիզիկապես կոփվեցի, ձեռք բերեցի մարտարվեստի գիտելիքներ, անհրաժեշտության դեպքում տարբեր իրավիճակներում կարող եմ օգտագործել ինքնապաշտպանական հնարքներ: Բնավորությանս մեջ տեղի ունեցան զգալի փոփոխություններ. խստապահանք կենցաղավարություն, կամային հատկություններ, պատասխանատվության զգացում՝ ամեն գործի հանդեպ: Բայց երազանքների երազանքս դեռ անկատար էր... Կյանքիս նպատակը հենց երաժշտության հետ էր կապված, – ասում է Դավիթը:

Տասը տարեկանում ընդունվել է Գորիսի Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի «Վոկալ» բաժինը, որին զուգահեռ, նախընտրել է նաև որևէ երաժշտական գործիքի տիրապետման ցանկությունը՝ ընդունվելով դաշնամուրի բաժին: Քննության ժամանակ ճակատագրական էր ողջ ներշնչանքով սեփական երգացանկի թալիսման՝ «Տուն իմ հայրենի» երգի ակապելլա կատարումն ու մասնագիտական խորհրդի բարձր գնահատականը. խորհրդի կազմում ընդգրկված անձինք քաջալերեցին դպրոցի ապագա շնորհալի սանին:

Ուսուցիչ Աստղիկ Խոջաբաղյանը Դավիթին դասավանդեց չորս տարի. նա իր սանի մեջ խորացրեց տարբեր ժանրերի համաշխարհային լավագույն ստեղծագործությունների հանդեպ սերը, ծայնային կատարելության հասնելու և բեմական երգարվեստին առնչվող չափորոշիչները, բարձունքների նվաճման գաղտնիքները: Դավիթը վերհիշում է տարբեր տարիների իր լավագույն կատարումները. ազգագրական երգ՝ «Տուն իմ հայրենի», ժողովրդական երգ՝ «Սարերի հովիվ մեռնեմ», գուսանական երգ՝ «Չեփյուռի նման», էստրադային երգ՝ «Քույր իմ նազելի», «Կյանք ու կռիվ», դասական երգ՝ «Փոքրիկ վարդը», «Սանտա Լուիզա»...

Դավիթը մասնակցել է դպրոցական, համայնքային, մարզային, հանրապետական և միջազգային 50-ից ավելի միջոցառման՝ համերգային ծրագիր, փառատոն, մրցույթ և այլն: Նրա հաջողությունների շքահանդեսի մեկնարկը 2019 թվականին էր. դասատու Աստղիկ Խոջաբաղյանի տքնաջան պարապմունքներից մեկի ժամանակ Դավիթը որոշեց մասնակցել և հաղթել «Արմենիա» հեռուստատեսության կազմակերպած «I Like It» մանկական երաժշտական մրցույթում: Մի քանի շաբաթ տևած և բազմաթիվ փուլերով անցկացված մրցույթի արդյունքների ամփոփումից հետո ժյուրին 1200 մասնակցից ընտրեց 40 լավագույն կատարողի, որոնց թվում էր Դավիթ Հարությունյանը: Դա մեծ ազդակ էր երգչի հետագա հաջողությունների համար:

Տնային պայմաններում ինքնուսուցմանը զուգընթաց, երաժշտական դպրոցի մասնագիտական պարապմունքները վերելք էին ապրում, բայց 2020թ. համավարակը խառնեց շատերի ծրագրերը: Համատարած անորոշություն էր ու տագնապ: Ի տարբերություն հանրակրթական հաստատությունների՝ երաժշտական դպրոցներում հեռավար պարապմունքներ չկային՝ համակարգչով հնարավոր չէր իրականացնել մասնագիտական փուլով դաշնաթանգներ:

Դրան զուամարվեց մեծ արհավիրքը. 2020թ. աշունը սևով պատեց հայոց երկ-



նակամարը: Արցախյան 44-օրյա ահարկու պատերազմ... Բազմաթիվ զոհեր, չնույնականացված դիակներ, անհետ կորածներ, գերիներ, թշնամու կողմից զավթված հայկական տարածքներ... Համատարած ընկճվածություն... Մինչդեռ, Դավիթը, որպես երաժշտության սիրահար և արդեն կայացող երաժիշտ, 2020-21թթ. ոգեպես չընկճվեց, այլ սեփական նախաձեռնությամբ Նորանոր բազմաժանր երգեր սովորեց և դրանց կատարումը հասցրեց բարձր աստիճանի: Ճգնաժամը նաև Նոր, դեռևս չբացահայտված հնարավորությունների ճանապարհ է հարթում. համավարակի պատճառով ողջ տարվա հարկադիր պարապմունքից հետո, Դավիթի ինքնուրույն պարապմունքներն օգնեցին 2021-22թթ. բոլոր կիսամյակների երգացանկը թարմացնել և Նոր ուսուցչի՝ Նարեկ Մկրտունցի օրոք, Նորովի շարունակել երաժշտարվեստում իր հաղթարշավը:

2021թ. Գորիսում մշակութային բում էր՝ «Տաղանդների շոուն» երաժշտական փառատոն: Քաղաքի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դափնեմու մայրաքաղաքից ժամանած պրոֆեսիոնալ ժյուրին Գորիսի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի 40 շնորհալի պատանի երաժիշտներից պետք է ընտրեր հաղթանակի հավակնորդ մրցանակակիրներին: Երգի փառատոնը կարծես մարզական համառ ու անզիջում պայքար լինե: Դավիթը դիմեց մասնագիտական հնարամտության. քանզի արդեն վարպետորեն տիրապետում էր երաժշտական գործիքավորմամբ տարբեր ժանրերի կատարմանը, մտածելով, որ պրոֆեսիոնալ ժյուրին մշտապես նախապատվությունը տալիս է ակապելլայի անթերի կատարմանը, երգեց «Սարերի հովիվ մեռնեմ» ժողովրդական երգը: Դավիթի կանխազգացումը կանխորոշեց հաղթանակը. շոտում նվաճեց 1-ին մրցանակային տեղը, ստացավ մեդալ և մրցանակ. ընտանիքով՝ հաճելի հանգիստ «Երևան պարկ»-ում: Ծնողներն ու քույրերն անսահման բերկրանք էին ապրում, որ Դավիթն իր հաղթանակով այսպիսի անսպասելի հաճելի Նվեր մատուցեց ընտանիքին:

2022թ. ապրիլին երաժշտական դպրոցի տնօրենությունը (տնօրեն՝ Մադոռա Սևիկյան) հանդես եկավ իր տեսակի մեջ եզակի երևանյան խոշոր մրցույթներից մեկին մասնակցելու նախաձեռնությամբ: Մայրաքաղաքի խոշոր դափնեներից մեկում կայացավ «Արտ Մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնը, որն անց էր կացվում

տարբեր տարիքային խմբերի միջև և ընդգրկում էր գեղանկարչության, թատերականացված բեմականացման, ասմունքի, երգի, պարի ասպարեզներում հաջողության հասած մոտ 2000 շնորհալի երիտասարդի: Մասնակիցներին վաղօրոք հատկացված հարմարավետ փորձասեյակներից մեկում Դավիթն իր ուսուցչի հետ գիշերուզօր պարապմունքներ էր անցկացնում, մրցույթում ողջ կարողություններով ներկայանալու և անապյան հաղթելու վճռականությամբ: «Արտ Մյուզիք»-ի քանի շաբաթ տևած մրցումներում «Ջազ, էստրադա» բաժնի 14-17 տարեկանների խմբում Դավիթը բազմաթիվ հանդիսականների և ժյուրիի առջև ներկայացավ արտասահմանյան և հայկական էստրադային երգի երկու կատարումով, որոնք միմյանցից տարբերվում էին ռիթմա-նությամբ, ծայնային դիապազոնների ընդգրկումությամբ: Դավիթի հնչելը ձայնի հետևեց դափնեի քար-լուծությունը. «Human - Rag» ո՛ր Bone Man» և «Կյանք ու կռիվ Human» երգերի կատարումները փայլուն էին: Դավիթը նախ դա զգաց հենց երգերի ընթացքում դափնեի՝ կրկներգին համահունչ ռիթմիկ ծափահարություններից, իսկ վերջում ժյուրիի բարձր տրամադրությունն արտահայտող անթաքույց ծափոնքներից: Դավիթը գրավեց երկրորդ տեղը և «Արտ մյուզիք հոլդինգ» կողմից ընդգրկվեց 2022թ. օգոստոսին Չեխիայում կայանալից միջազգային փառատոնի մասնակիցների ցանկում: Միջազգային ասպարեզ դուրս գալու հնարավորությունը Դավիթին խունապի չմատնեց. նրա երաժշտական առաջընթացի ապահովումը, հանգստությունն ու ուժերը նպատակի վրա կենտրոնացնելն ուսուցիչ Նարեկ Մկրտունցի շնորհներն են:

Եվ ահա բաղձալի պահը մոտենում է... 2022թ. օգոստոսի 8-ին Գորիսի Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի «Վոկալ» բաժնի ուսուցիչ Նարեկ Մկրտունցը և նրա շնորհալի աշակերտ Դավիթ Հարությունյանը Պրահայի միջազգային օդանավակայանում են, իսկ հաջորդ օրը՝ պատասխանատու համերգն է՝ «Պրահայի աստղեր» 33-րդ միջազգային փառատոնը՝ 15 երկրից ժամանած 200 մասնակիցներով:

Գորիսից ժամանած երգչի ելույթն այստեղ էլ պսակվեց հաջողությամբ: Դավիթի երազանքն իրականացավ. նա գրավեց 2-րդ տեղը:

Չեխիայի միջազգային հարթակից հնչեցին «ՀԱՅԱՍՏԱՆ, ԳՈՐԻՍ, ՀԱՂԹԱՆԱԿ» բառերը...

ՎԱԶԵ ՄԿՐՏՅԱՆ

Արեն Պետրոսյան տենորը

Արեն Պետրոսյանը ծնվել է 2002 թ. Կապան քաղաքում: Չորս-հինգ տարեկանից աչքի է ընկել երաժշտական ընդունակություններով: Լսած երաժշտությունն իսկույն արտաբերել է, մաքուր երգել: Հաճախել է երգի ստուդիա, որտեղ առանձնացել է երաժշտական ունակություններով և միանգամից երգել մեծերի հետ: Արենին կյանքը ժպտաց, երբ հանդիպեց Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնի դասատու Ռենա Աթաբեկովային: Լսելով տղային, տեսնելով բացառիկ ընդունակությունները, հնչեղ ծայրային տվյալները՝ խորհուրդ տվեց հաճախել թիվ 2 երաժշտական դպրոց՝ Իրինա Դավիդյանի դասարան:



Նի դասարան: Ու սկսվեց Արենի փոքրիկ աստղային ժամը: Իրինա Դավիդյանը լսելով նրա հնչեղ ձայնը, տեսնելով ընդունակությունները՝ կենտրոնացավ դասական վոկալի վրա և ասաց, որ Արենին մեծ ապագա է սպասվում, սկսեց երեխայի հետ աշխատել: Արենը սիրեց ուսուցչուհուն, սկսեց կատարել նրա բոլոր հանձնարարությունները, նույնիսկ՝ ինչպես սովել, ինչպես հագնվել, քայլել, ժպտալ, և ստացվեց նրանց ճիշտ ու հաճելի համատեղ աշխատանքը:

Առաջին անգամ դպրոցից 2011 թ. նա մասնակցեց Գյումրու «Վերածնունդ» 6-րդ միջազգային մրցույթ-փառատոնին, որտեղ արժանացավ երկու խրախուսանքի՝ ռուսական երգի լավագույն կատարում և հանձնաժողովի խրախուսանքի:

2015 թ. Արենը կրկին մասնակցեց Գյումրու «Վերածնունդ» միջազգային 7-րդ մրցույթ-փառատոնին. այս անգամ արժանացավ

առաջին կարգի դափնեկրի կոչման: Արտերկրից ժամանած ժյուրիի անդամները մոտեցել, հատուկ ուշադրության են արժանացրել Արենին:

Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնի ղեկավարների առաջարկությամբ Արենը մեկնեց Սյունյաց երկիր՝ համերգի և վարպետության դասեր առավ Լյուբով Կազարյանի մոտ:

2017 թ. Արենը մասնակցեց «Արտ-Մյուզիք» 7-րդ միջազգային մրցույթ-փառատոնին, որտեղ դարձավ արժանացավ առաջին կարգի դափնեկրի կոչման: Նրա աշխատասիրությունն Իրինա Դավիդյանին ստիպում էր Արենի հետ առաջ գնալ:

2017 թ. ամռան Արենը և իր ուսուցչուհին մասնակցեցին Մոսկվայում կայացած «Քայլ առ քայլ» միջազգային մրցույթ-փառատոնին, որտեղից Արենը վերադարձավ «Գրան Պրի» հատուկ մրցանակով, իսկ Իրինա Դավիդյանն առաջին կարգի մրցանակով:

Դպրոցն ավարտելուց հետո (ուսուցչուհու խորհրդով) ընդունվեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասական վոկալի բաժինը: Այժմ շարունակում է ուսումը՝ առանձնալույով յուրահատուկ տենորով:

**ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԴԱՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ**

Լույսի ծնունդը զգացինք քո երգերում

Սիսիանի արվեստաշխարհի հոգեմա և հոգեթով դարբնոցում եմ Է.Այսյանի անվան երաժշտական դպրոցում, հարազատ մի օջախ, որտեղ երաժշտության առաջին կախարդական հնչյունների արձագանքով սնվել, այդ ուրույն աշխարհի գերին է դարձել, ցայսօր այն իրենը համարել նաև տողերիս հեղինակը:

... Նոր արթնացող ծնունդն օրը ջերմություն չէր խոստանում, բայց հոգումս գարուն էր, քանի որ քիչ անց լցվելու էի տաք խոհերով, քանզի հանդիպելու էի այս օրերին այնքան հոյակապ իրադարձության գլխավոր «մեղավորին»՝ Անիկ Սահակյանին:

Անիկ Տիգրանի Սահակյանը ծնվել է Սիսիան քաղաքում, սովորել է № 4 դպրոցում, իսկ այժմ ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի է, զուգահեռ ուսանում է Սիսիանի երաժշտական դպրոցի վոկալ բաժնում:

... Դեկտեմբերյան ցրտաշունչ օրը մեկնեց ջերմացավ՝ Հայաստան-Սյունիք-Սիսիան հասած մեծ ավետիսից...

... Դեկտեմբերի 15-19-ը Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայում «Գլովբալ ֆեստ մյուզիք» արվեստի միջազգային փառատոնի շրջանակում անցկացվող «Պրահայի աստղեր» խորագիրը կրող մրցույթում պատվով մասնակցեց նաև մեր հայրենակցուհի, «Է.Այսյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի վոկալ բաժնի աշակերտուհի Անիկ Սահակյանը: Քիչ է ասել մասնակցեց, քանի որ զնաց, մասնակցեց ու ...

2022 թվական, դեկտեմբերի 18, Պրահա, «Պրահայի աստղեր» միջազգային փառատոն... Լեվ-լեցուն դահլիճ, լարված դեմքեր, մրցակցային թեժ պայքար և... բեմ է հրավիրվում 15-ամյա սևակն ու մրահոն մի հայուհի...

– Պուչչինի, Լաուրենտայի արիան «Ջանի Սկիկկի» օպերայից, կատարում է Անիկ Սահակյանը, Սիսիան...

Ու հնչեց երգը, հնչեց Հայաստան-Սիսիանից հազարավոր կյիվներեր հեռու՝ համաշխարհ, պարզ, սահուն, հղկված, նուրբ, հզոր, տարբերվող, ազնվական...

Իտալական զարմանահրաշ մեղեդու գունագեղ ելևէջները հորդացին հայուհու հոգուց, սրտից, տարածվեցին դահլիճով մեկ, «մխրճվեցին» ունկնդրի հոգու և գիտակցության մեջ, դեռատի

երգչուհու տաղանդի ուժը շողաց մեկնե, պոռթկաց՝ նորովի լուսավորելով Պրահայի դահլիճը: Փայլեց Անիկ Սահակյանը, փայլեց երգի անթերի կատարմամբ, խոսքի ու երաժշտության ներդաշնակության հասուն և յուրովի մատուցմամբ...

Մի պահ հիացքից կարկամած դահլիճը երերաց, ապա դողդաց որոտընդոտ ծափերից ու... Հեռավոր Սիսիանը ներկայացնող Անիկ Սահակյանը «ստիպեց» խստապահանջ ժյուրիին՝ իրեն, հատկապես իրեն շնորհել Մեծ մրցանակը (Գրան Պրի)՝ «Անկախական երգչուհություն» անվանակարգում:

Նրանց, ում գեթ մեկ անգամ բախտ է վիճակվել ունկնդրել Անիկ Սահակյանի վիրտուոզ կատարումը, հիանալ նրա բնածին ու բնատուր տաղանդով, համոզված կասեն՝ հայտնի և անհայտ շատ բեմեր պատիվ կհամարեն՝ եթե հենց իրենց բեմից հնչի Անիկի անզուգական ձայնը, որ հենց իրենց հանդիսատեսին նվիրվեն ծով ժպիտներ ու անհատնում ծափահարություններ:

Իսկ ի՞նչ է Անիկի համար երգը...
– Երգն իմ աշխարհն է, իմ էությունը, իմ թևերն է, իմ ուժը...

Երկխոսությանն անմասն չմնաց ուսուցչուհին՝ Անուշ Վարդանյանը, ով ավելի քան համոզված է՝ յուրաքանչյուր հաջողության հիմքում կարևոր են նպատակասլացությունը, աշխատասիրությունը, ձգտումը, որոնց պակասը հաստատ չունի սիրելի աշակերտուհին՝ Անիկ Սահակյանը, որոնք էլ ապահովեցին ցանկալի հաղթանակներ և՛ «Արտմյուզիք» մրցույթում (1-ին տեղ), և՛ Պրահայի մրցույթ-փառատոնում...

– Հպարտությամբ ուզում եմ հավելել, որ բնությունն անասելի շոյալ է գտնվել Անիկի նկատմամբ՝ նրան օժտելով հրաշալի ձայնով, դահլիճը գրավելու հմայքով, հանդիսատեսին «համոզելու» տաղանդով, բեմական կեցվածքով, երգի մեջ հոգի դնելու անմիջականությամբ, երգը ջերմությամբ մատուցելու կարողությամբ..., որով էլ, ըստ իս, պայմանավորված են նրա հրաշալի ելույթները միջազգային հարթակներում: Ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոս Լ. Մարկոսյանին՝ մասնագիտական աջակցության, իսկ պարոն Է.



Պիչկյանին՝ մեր սանի տաղանդին հավատալու, միջազգային մրցույթին նրա մասնակցությունն ապահովելու համար: Իսկ ի՞նչ ծրագրեր ունեն ուսուցչուհին և աշակերտուհին ...

– Ուրախությամբ ուզում եմ արձանագրել Պրահայի բաղձալի հաղթանակից հետո հրավեր ստացանք Ֆրանսիայի հայ համայնքի կողմից՝ ապրիլի 24-ին Կոմիտաս երգելու պայմանով...

– Անիկի ապագան տեսնու՞մ եք օպերային արվեստում...

– Մեծ, չա՛տ մեծ են ակնկալիքներս, – համոզված ասում է Ա. Վարդանյանը, – նրա անզուգական ձայնը դեռ հարստացնելու է օպերային արվեստը...

Լույսի ծնունդը զգացինք քո երգերում, Անի՛կ Սահակյան, և ամեն անգամ, երբ երգը ըմբռնելու անկրկնե-

լի պահեր պարզվեն մեզ, անթաքույց հպարտությամբ շնջալու ենք.

– Մեր Անիկն է...

Շնորհաշա՛տ Անիկ Սահակյան, հոգի ջերմացնող երգով զնացիր մրցույթի, զնացիր հաստատական, որ ջերմացնես օտար երգարվեստի սիրահարներին, զնացիր, որ մեկ անգամ ևս հավաստես՝ երգի թևերով թռչելու ես չա՛տ բարձր, չա՛տ հեռու, երգի ուժով գրավելու ես չա՛տ բեմեր...

Ամեն անգամ, երբ քո հրաշալի կոլորատուրային սոպրանոն շոյի երգարվեստիդ երկրպագուների ունկը, ուրեմն արձանագրել ես հերթական, բայց ո՛չ վերջին հաղթանակդ, ուրեմն հաղթել ես, հաղթել ես երգի անկասելի ուժով, երգի թևերով...

ԷՎԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՏՈՂԻՄԻՐ ԴԱՅԶԱՆԴՈՒՅԱՆ ԵՐԳԱՐԵՆԻ



Լուսավորչի խորհրդակցության անդամները

Քաջարանի արվեստի դպրոցի եվրոպական բեմերը

2019 թվականի ամռանը Քաջարանի արվեստի դպրոցը բոլոր ձեռքբերումներին ավելացրեց ևս մեկ ուշատ կարևորը՝ ճեղքեց եվրոպայի սահմաններն ու թատերարվեստի նորաբաց բաժնի իր աշակերտներին դուրս բերեց եվրոպական մրցութային բեմ (համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի աջակցությամբ)։ «Սլավյանսկի վենեց» մրցույթ-փառատոնի շրջանակում քաջարանցի պատանիները ներկայացան եվրոպական խստապահանջ հանդիսատեսին։

Թատերարվեստի բաժնի առաջին դասարանի աշակերտները Բուդապեշտի Վառնա քաղաքում անցկացվող «Սլավյանսկի վենեց» մրցույթ-փառատոնին մասնակցելու հրավերը վաստակեցին Երևանում մասնակցելով «Ետյուդ» նկարչության, ասմունքի և

թատերական արվեստի մրցույթ-փառատոնին՝ գրավելով առաջին տեղը։ Այդպիսի մրցույթ-փառատոնի մասնակցությունն ինքնին մեծ պատիվ ու պատասխանատվություն է, մանավանդ երբ ներկայացնում ես ոչ միայն ջուր փոքրիկ քաղաքն ու մարզը, այլև Հայաստանի Հանրապետությունը։ Գուցե այս գիտակցումն էր, որ նորաբաց բաժնի առաջին դասարանի աշակերտներն արեցին անհնարինը՝ կարողացան իրենց ներկայացումով ծափեր ու ծիծաղ կորզել ժյուրիի անդամներից և գրավել առաջին տեղը՝ վաստակելով ևս մեկ հրավեր 2022 թվականի համար։

2022 թվականին թատերարվեստի բաժնի՝ այս անգամ մեկ այլ դասարան ու պատանիներ, կրկին համայնքի ղեկավարի աջակցությամբ և ՀԳՄԿ-ի հովանավորությամբ, մեկնեցին Բուդապեշտ, մասնակցեցին միջազգային հեղի-

նակավոր փառատոնին, մեր մայրենի լեզվով ներկայացրին Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարը», հիացրին ոչ միայն ժյուրիի հայերեն լեզուն չհասկացող ուկրաինացի, բուլղարացի, վրացի, չեխ անդամներին, այլ նաև փառատոնի մասնակից երկրների պատանիներին, ղեկավարներին ու ծնողներին։

Քաջարանցի պատանիներն արժանացան առաջին կարգի մրցանակի, ինչեց հանրապետության օրհներգը, ծածանվեցին Եռագույնն ու Քաջարան համայնքի դրոշմը։ Պատեհ է նշել այդ երեխաների անունները, ովքեր իրենց խաղով բարձր պահեցին թե մեր լեզուն, թե Հայաստանի պատիվը՝ Ազարյան Մոնթե, Բաբայան Էլեն, Դավթյան Էլեն, Հայրապետյան Հայկ, Հայրապետյան Հակոբ, Հակոբյան Արև, Ղալեշյան Հայկ, Մարտիրոսյան Վիկտորյա, Պետրոսյան

Լենա Եղիազարյան, Դայանա Մեղումյան։

Եվրոպական երկրում միջազգային փառատոնի մասնակցությունը կարևոր է նաև ճանաչողական ու փորձի փոխանակման առումով։

Քաջարանցի աշակերտները շփվեցին Եվրոպայում արվեստի նորագույն զարգացումների, արևելաեվրոպական քաղաքակրթության հետ։

Ուղևորության ճանապարհին աշակերտները եղան ու հարուստ ճանաչողական զբոսանքներ ունեցան պատմական այնպիսի հարուստ անցյալ ու ժառանգություն ունեցող քաղաքում, ինչպիսին Կոստանդնուպոլիսն է, նավարկություն ունեցան Ասիան Եվրոպայից բաժանող Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով, Մարմարի ծովով։

Եվրոպայում հաղթանակած աշա-

“ 2019 թվականին փառատոնին մասնակցած ու հաղթած աշակերտներն են՝ Միհրան Ղազարյան, Ելիզավետա Խաչատյան, Գոռ Ալավերդյան, Սոֆի Օհանջանյան, Գոհար Սարգսյան, Ալբերտո Համբարձումյան, Յանա Ազարյան, Միլենա Եղիազարյան, Դայանա Մեղումյան։ ”

Լաուրա, Սարգսյան Ալբերտ, Սարգսյան Գոռ։

Այս անունների կողքին պետք է նշել նաև թատերվեստի բաժնի դասատուներին՝ Գաբրիելյան Արթուր, Ղուկասյան Տիգրան, թատերարվեստի բաժնի հիմնադիր տնօրեն՝ Արմինե Թումանյան, ներկայացման երաժշտության ձևավորման, զգեստների ու գրիմի հեղինակ, դպրոցի կերպարվեստի դասատու՝ Նարեկ Իսրայելյան։

2019 թվականին փառատոնին մասնակցած ու հաղթած աշակերտներն են՝ Միհրան Ղազարյան, Ելիզավետա Խաչատյան, Գոռ Ալավերդյան, Սոֆի Օհանջանյան, Գոհար Սարգսյան, Ալբերտո Համբարձումյան, Յանա Ազարյան, Մի-

կերտներին ընդունելով՝ Քաջարանի պատիվը բարձր պահելու համար շնորհակալություն հայտնեց Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը, ով նաև հույս հայտնեց՝ Արևելյան Եվրոպայի «գրավելուց» հետո թատերարվեստի բաժինը Քաջարանի դրոշմ կծածանի և հաղթական ելույթներ կունենա Արևմտյան Եվրոպայի երկրներում, ինչու չէ նաև օվկիանոսից այն կողմ։ Արդեն իսկ այդ նպատակին հասնելու համար կազմակերպչական աշխատանքներ են տարվում...

**ԱՐԹՈՒՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ՔԱՋԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ
ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ ԲԱԺՆԻ ՂԱՍԱՏՈՒ**



Թատերական տոն ոչ միայն երեխաների համար

Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրիի և Ազարակի մշակույթի կենտրոններում նախաամառային տոնական տրամադրություն էր՝ դեկտեմբերի 28-ին և 29-ին «Աք» մանկապատանեկան թատերական ստուդիայի սաները, յուրատիպ ձևավորում ստացած բեմում, ներկայացրին ժամանակակից դրամատուրգ Էդգար Թաթիկյանի «Ձնեմարդը» (պիեսը տեղադրված

է tatron-drama.am կայքի «Նոր հարթակ մանկապատանեկան դրամատուրգիայի համար» բաժնում)։

Բեմը վերածվել էր տոնական տուփի, որտեղ յուրաքանչյուր գույն ու դետալ իր տեղում էր, փոխադարձ լրացնում էին միմյանց։ Հանդիսատեսի համակրանքն անմիջապես գրավեցին փոքրիկ դերակատարներն իրենց անմիջական խաղով։ Անդրանիկ Հովսեփյանը (Շուն),

Վիկտորյա Ավագյանը (Ձնեմարդ), Դավիթ Համբարձումյանը (Պատ), Մարիամ Օհանյանը (Եղ), Մարիամ Չաքարյանը (Կղ) բեմում կարողացան ստեղծել հեքիաթային անկրկնելի մթնոլորտ, և ծավալվող գործողությունները դաիլիճը պահեցին լարված սպասման մեջ։

Փոքրիկ հանդիսատեսների համար ստեղծվել էր հեքիաթային աշխարհ՝ չորս տոնածառեր-երեխաները լցնում էին բեմն իրենց գունագեղությամբ՝ «կենդանի-ծառեր», որոնց վրա ամրացված պարանները բքի տեսարանում պլաստիկ լուծումներով կարողացան ստեղծել սառնաշունչ ձմռան ավելի քան շոշափելի ներկայությունը։ Տեսարանն ամբողջացնում էր բեմում տեղացող «ծյունը»...

Որպես երաժշտական ձևավորման գնահատական՝ նշենք այն իրողություն-

նը, որ դաիլիճից դուրս գալուց հետո շատերը շարունակում էին երգել ինչպես մեղեդիները։

«Ձնեմարդը» ներկայացումը տոնական նվեր էր համայնքի երեխաներին, բայց միաժամանակ թատերական յուրօրինակ երևույթ՝ որպես հավաստում համայնքի մշակութային կյանքի նոր վերելքացի։

Բեմադրությունը, նկարչական և երաժշտական ձևավորումը՝ Անուշ Վարդանյանի։

Պարային լուծումները՝ Էլենա Զառյանի։

Զգեստների նկարիչ՝ Գոհար Աթոյան։
Հ.Գ. Այս հեքիաթը գուցե չկայանար, եթե չլիներ Մեղրիի համայնքապետարանի աջակցությունը։

TATRON-DRAMA.AM

“ Բեմը վերածվել էր տոնական տուփի, որտեղ յուրաքանչյուր գույն ու դետալ իր տեղում էր, փոխադարձ լրացնում էին միմյանց։ ”



Լուսավարժ՝ Նարեկ Բարսեղյանի

Կապանի արվեստի մանկական դպրոցի սաները՝ միջազգային փառատոներում

Գեղարվեստական կրթություն մատուցող կրթօջախի համար առաջնային է ոչ միայն աշակերտին նեղ մասնագիտական կրթություն մատուցելը, այլև մանկանը գեղագիտական դաստիարակություն տալը: Հայաստանի հեռավոր հարավում գտնվող Կապանում գեղարվեստական դաստիարակություն ստացող երեխայի մտահորիզոնի զարգացման, նրա աշխարհայացքի ձևավորման համար խիստ անհրաժեշտ է չսահմանափակվել միայն դպրոցի կամարների ներքո ուսումնադաստիարակչական ծեռնարկների, ուսումնական նյութատեխնիկական միջոցների կիրառմամբ դասապրոցեսներ կազմակերպելով, այլ ավելի լայն կրթություն տալու նպատակով դուրս գալ քաղաքի սահմաններից, ու աշակերտի համար բացել աշխարհը:

Այդպիսի վառ օրինակ է Կապանի արվեստի մանկական դպրոցի թատերարվեստի բաժինը, որն ընդգրկում է 8-15 տարեկան աշակերտներ, ովքեր դպրոցում սովորում են հինգ տարի: Այժմ բաժնում սովորում է 45 աշակերտ: Թատերարվեստի բաժինը երեք սերունդ շրջանավարտ է տվել՝ մոտ 30 հոգի: Այս ուսումնական տարում թատերարվեստի բաժինն ավարտում է յոթ սան, որոնցից մեկը դիմելու է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ:

Յուրաքանչյուր տարի չորրորդ և հինգերորդ դասարանների սաներն Ա. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմահար-

թակում ներկայացնում են մեծ կտավի ստեղծագործություն, իսկ 1-3 դասարանների աշակերտները բեմադրում են հեքիաթներ, պատմվածքներ, որոնք ներկայացնում են դպրոցներում, մանկապարտեզներում:

Լայն կտավի գործերից բեմադրել ենք Չորայր Խալափյանի «Դպրոցական կատակերգությունը», իսկ Ամանորի առթիվ մեր դպրոցի դահլիճում բեմադրել ենք «Ամանորի հրաշքը»՝ հայկական ժողովրդական հեքիաթի մոտիվներով, (բեմականացումը՝ Արթուր Գաբրիելյանի), որը դիտեցին հինգ հարյուրից ավելի երեխաներ:

Կրթօջախի սաներն արդեն երկրորդ անգամ դուրս են գալիս հանրապետության սահմաններից և մասնակցում միջազգային փառատոների:

Միջազգային փառատոներին մասնակցելու, այլ երկրներից կրթօջախի տարեկիցների հետ շփվելու, սովորելու, սովորեցնելու, այլ քաղաքակրթական միջավայրերին հաղորդակից լինելուց բացի՝ աշակերտները հեղինակավոր բեմերում ներկայացնում են Կապանը, Կապանի մշակույթը, մեր լեզուն ու գրականությունը, մեր թատերական ավանդույթներն ու նորարարական զարգացումները՝ հաղթանակներ տանելով և բարձրացնելով քաղաքի ու երկրի դրոշմը:

Եվ այսպես՝ առաջին արտասահմանյան փառատոնը, որին մասնակցեց արվեստի դպրոցի թատերարվեստի բաժինը, 2018 թվականին էր՝ «Օռան-ժեվի Քոբուլթեի 2018» միջազգային

փառատոն, որտեղ մեր՝ Թումանյանի «Անխել մարդը» և «Շունն ու կատուն» ներկայացումներն արժանացան առաջին կարգի մրցանակի: Այդ հաղթանակը կերտած աշակերտներից երկուսը՝ Նարե Գրիգորյանն ու Արմեն Մանուկարյանը, արդեն ուսանում են Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դերասանական բաժնում, մեկը՝ Մոնա Փարսադանյանը, Կապանի դրամատիկական թատրոնի դերասանուհի է:

Թատերարվեստի բաժինը 2022-ի ամռանը մասնակցեց ևս մեկ հեղինակավոր՝ «Ոսկե ամառ» միջազգային փառատոնի՝ այս անգամ Բաթումի օպերային թատրոնի բեմում: Մեր աշակերտների այս սերունդը նույնպես

պատվով հաղթանակ տարավ, օպերային թատրոնի բեմում հնչեցրեց Կապան քաղաքի անունը, ծածանեց Կապանի դրոշմն ու Հայոց եռագույնը:

Այդ հաղթանակները կարող ենք դիտարկել ոչ միայն ուսումնական, այլ իբրև ոգեղեն, հայրենասիրական ձեռքբերումներ: Քանզի երբ երեխան այդքան հեղինակավոր բեմում, բազմազգ միջավայրում ծածանում է իր քաղաքի, իր երկրի դրոշմը, նրա մեջ ձևավորվում է քաղաքացին, հայրենասերը, պետականասերը, պետության տերը: Այդպիսի վառ օրինակ էր Բաթումիի հաղթանակը, որ մեզ տրվեց մեր ժողովրդի համար ամենադժվարին՝ հետպատերազմյան ծանր, հոգեբանական թմբիրի օրերում:

Երեխայից մարդ-քաղաքացի կրթելու ու դաստիարակելու գործը մեր դպրոցի առաջնահերթ խնդիրներից է, որոնք կարողանում ենք լուծել արվեստի ընձեռած հնարավորությունների միջոցով:

Թեև թատերարվեստի բաժինն իր երևանյան ու արտասահմանյան հաղթանակների շնորհիվ հրավերներ է ստանում մասնակցելու նաև եվրոպական երկրներում անցկացվող միջազգային փառատոների, բայց ֆինանսների սղության ու հովանավորների բացակայության պատճառով չենք կարողանում դրանց մասնակցել:

Ամեն դեպքում հուսով ենք, որ ապագայում կկարողանանք մեր բնօրրանի անունը հնչեցնել նաև եվրոպական քաղաքներում, Կապանի նորօրյա արվեստը հասցնել նաև հին աշխարհի ու այնտեղ նույնպես հաղթանակ տոնել:

Նշենք, որ առաջիկայում սպասվում են դպրոցի թատերարվեստի բաժնի սաների հյուրախաղեր Թբիլիսիում: Վերադառնալով թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի հրավերով ապրիլի վերջին կմեկնենք Վրաստանի մայրաքաղաք՝ հարևան պետության հանդիսատեսի դատին ներկայացնելու դրամատուրգ Սամվել Խալաթյանի «Սերը պահարան չի հարցնում» բեմադրությունը, որը շոշափում է արտագաղթի թեման: Կլինեն հանդիպումներ վրացահայ համայնքի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կծանոթանանք պատմաճարտարապետական հուշարձաններին:

ԱՐԹՈՒՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԿԱԴԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՆԿԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ ԲԱԺՆԻ
ԴԱՍԱՏՈՒ



Լուսավարժ՝ Նարեկ Բարսեղյանի



Լուսավարժ՝ Նարեկ Բարսեղյանի

“

Թատերարվեստի բաժինը 2022-ի ամռանը մասնակցեց ևս մեկ հեղինակավոր՝ «Ոսկե ամառ» միջազգային փառատոնի՝ այս անգամ Բաթումիի օպերային թատրոնի բեմում: Մեր աշակերտների այս սերունդը նույնպես պատվով հաղթանակ տարավ, օպերային թատրոնի բեմում հնչեցրեց Կապան քաղաքի անունը, ծածանեց Կապանի դրոշմն ու Հայոց եռագույնը:

”

Եվա Մանգասարյանը՝ Սիսիանից, ումից տաղանդ ու շնորհ է հորդում



Կրկին երաժշտության անկրկնելի աշխարհում եմ յոթ «խագերի» լուսավորիչը՝ «թագավորությունում»՝ Ե. Այսանի անվան երաժշտական դպրոցում: Առիթն ավելի քան լուսավոր է...

Երաժշտասեր սիսիանցիս ղեռ չէր հասցրել «սթափվել» սիսիանցի շնորհալիների շնորհալից հաջողություններից, երբ ցանկալի ծեռքերումը, անթաքույց հպարտությունը, հերթական հաղթանակի ալիքն անվարան մտան Սիսիան...

Երաժշտությունը կարևոր արժեք է. այն հոգուն թևեր է տալիս, պատրաստում աներևակայելի թռիչքի... Այսպիսի թռիչքի ականատեսը դարձավ սիսիանցիս, երբ Սիսիանի № 2 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհին, երաժշտական դպրոցը ներկայացնող 12-ամյա Եվա Մանգասարյանը պատվով մասնակցեց Ուկրաինայի Օդես-

կեցին կախարդիչ հնչյուններ, «ստիպեցին» նվագարանին՝ պրոֆեսիոնալիզմի, երաժշտական հասուն դիմամիկայի ինքնատիպ մատուցմամբ թափանցել ունկնդրի գիտակցության ու հոգու մեջ, դառնալ մեղեդու գունագեղ հնչողություն, դառնալ խոհ, ապրում՝ տաղանդավոր քանոնահարուհուն պարզաբերված 1-ին պատվավոր տեղը, արժանացնելով դիպլոմի...

– Նսե՛լ Եվայի կատարումներն ու չհայտնվել երաժշտության հետաքրքիր, զարմանահրաշ, ինքնատիպ աշխարհում, անկարելի է, քանի որ այնտեղ ինքն է, իր ներաշխարհը, իր առօրյան...

Խելացի, աշխատասեր, նպատակասլաց աղջնակ է Եվան, օժտված է երաժշտական զարմանալի զգացողությամբ, – սիրով բնութագրում, հպարտությամբ ներկայացնում է իր սանին՝ ուսուցչուհի Նաիրա Հակոբջանյանն ու հավելում, – բավական է մեկ անգամ լսել Եվային, և դու կհայտնվես երաժշտության անմոռանալի հնչյունների աշխարհում:

Եվայի հետ փորձելու եմ գրուցել լավի, գեղեցիկի, բարու, հոգևորի, նաև՝ Նորին մեծություն երաժշտության մասին:

– Առանց ախորժեղի, քաղցրահնչյուն երաժշտության անհնար է պատկերացնել իմ առօրյան. ես պաշտում եմ երաժշտությունը, – մի առանձնակի անկեղծությամբ արձագանքեց Եվան՝ ի պատասխան իմ հարցումի, – թեպետ այն իմ երազանքներում երկրորդ տեղում է (մեղավոր ժպտում է), քանի որ որոշել եմ իրավաբան դառնալ, բայց...

Եվան առանձնակի սիրով է բարձրաձայնում իր հաջողությունների գլխավոր «մեղավորի»՝ սիրելի ուսուցչուհի Ն. Հակոբջանյանի անունը, որի հպարտությունն ալիքվել է ամեն անգամ, երբ հաղթանակի դափնին բաժին է ընկել Եվա Մանգասարյանին (Փոքրիկ քայլ, Արտ Մյուզիք, 2022թ., դեկտեմբերի 18, Օդեսա...):

Անվերջ, անթաքույց, կախարդված կարելի է հետևել Եվայի մատների փոթորկին, քանի որ մատների ուժով փորձում է

“

Սիսիանի № 2 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհին, երաժշտական դպրոցը ներկայացնող 12-ամյա Եվա Մանգասարյանը պատվով մասնակցեց Ուկրաինայի Օդեսա քաղաքում օնլայն /հեռավար/ ձևաչափով անցկացվող ODESA MUZIQ OLIMP 3-րդ միջազգային մրցույթին

”

սա քաղաքում օնլայն /հեռավար/ ձևաչափով անցկացվող ODESA MUZIQ OLIMP 3-րդ միջազգային մրցույթին և...

...Քանոնի լարերն անհանգիստ էին. սպասում ունեին, սպասում «անձնատուր» լինելու, «սանձվելու», արձագանքելու մատների հրամանին, մատների շոյանքին, հետո՝ «խոսելու», «պատմելու», «համոզելու», դյուբելու...

...Ու նվագեց Եվան, նվագեց Սայաթ-Նովա, Բաբաջանյանի «Էլեգիան», Ա. Խաչատրյանի «Լեզգինական»:

...Փոքրիկ մատները կնտնտոցով վարժ սահեցին լարերի վրայով, արձա-

իրեն ենթարկեցնել սիրելի նվագարանը՝ քանոնը, որից տաղանդ ու շնորհ է հորդում, դառնում անզուգական մեղեդի...

Արևը՝ լույս է, երաժշտությունը՝ լույսի արտացոլանք, Եվա՝ Մանգասարյան, ուրեմն քայլի՛ր անվարան, քայլի՛ր վստահ ու հաստատուն, քայլի՛ր այդ լուսե ճանապարհով, ու թո՛ղ այդ հաղթանակն ունենա ցանկալի շարունակություն, իսկ ես պատիվ կհամարեմ դարձյալ ներկայացնել Եվա Մանգասարյանի հերթական ՀԱՅԹԱՆԱԿԻ ՁՈՒՇ...

ԷՎԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



Տասնամյա դափնեկիր սրնգահարը

Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի աշակերտ Նարեկ Սարգսյանը ծնվել և մեծացել է մի ընտանիքում, որտեղ համարյա բոլորը երաժիշտներ են: Պապն ու տատը երգում են, քեռին կլարնետահար է, եղբայրը դիոլ է նվագում, մայրը դաշնակահարուհի է: Նա երաժշտական դպրոց սկսել է հաճախել վեց տարեկանից: Արդեն առաջին դասարանում նկատվում էին նրա ընդունակություններն ու կարողությունները:

Նարեկն այն հազվագյուտ և շնորհալի երեխաներից է, ով անսահմանորեն սիրում է երաժշտությունը, շատ նվիրված է իր գործիքին և ամենակարևորը, որ պետք է ունենա յուրաքանչյուր երաժիշտ, աշխատասիրությունն ու մեծ կամքի ուժն է, որը Նարեկի մեջ անսպասելի է: Նա շատ արագ է յուրացնում յուրաքանչյուր բարդ ստեղծագործություն՝ հավաստելով, որ երաժիշտ դառնալու ճիշտ ճանապարհին է:

Ուսումնական տարին դպրոցում միշտ ամփոփում է հաշվետու համերգով, որին հիմնականում մասնակցում են միջին և բարձր դասարանների աշակերտները: Սակայն Նարեկն այն բացառիկներից է, ով առաջին դասարանում մասնակցեց հաշվետու համերգին՝ մեծ տպավորություն թողնելով մասնագետների և հանդիսատեսի վրա:

2-րդ և 3-րդ դասարաններում մասնակցեց «Արտ Մյուզիք» միջազգային 11-րդ (2020թ.) և 12-րդ (2021թ.) մրցույթ-փառատոներին՝ արժանանալով երկրորդ կարգի դափնեկրի կոչման:

2021թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացվեց «Եղեգան փող» շվիհարների համահայկական առաջին մրցույթ-փառատոնը, որտեղ Նարեկն արժանացավ «Գրան Պրի» մեծ մրցանակին: Այն ժամանակ նույնիսկ չէինք էլ մտածում, որ կարող է հնարավորություն ստեղծվել մասնակցելու որևէ մրցույթի արտերկրում, այն էլ Եվրոպայում: Այդ հնարավորությունը մեզ ընձեռեց «Արտ Մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնի կազմակերպիչ Էռնեստ Պիչիկյանը, որի համար շատ շնորհակալ ենք, երևանում անցկացվեցին ունկնդրումներ, և որոշվեց, որ շվիհարներից կմասնակցի տասը տարեկան Նարեկ Սարգսյանը:

Մրցույթն անցկացվեց 2022թ. օգոստոսի 8-15-ը Չեխիայի մայրաքաղաք Պրահայում և կոչվում էր «Պրահայի աստղեր» միջազգային մրցույթ-փառատոն: Մասնակիցները շատ էին, ընդ որում մասնակցում էին և՛ անհատ կատարողներ, և՛ երաժշտական խմբեր տարբեր երկրներից (Սլովակիա, Ուկրաինա, Չեխիա, Վրաստան, Խորվաթիա և այլն):

Վերհիշում է թիվ 1 դպրոցի տնօրեն

Լիլիա Վարդանյանը, ով Պրահայում գտնվում էր մրցույթի դահլիճում. «Երբ Նարեկը բեմ բարձրացավ, բոլորի ուշադրությունը սևեռվել էր նրա վրա, և երևի մտածում էին, թե ինչ պետք է նվագի այս փոքրիկ տղան, որպեսզի արժանանա ժյուրիի հավանությանը: Սակայն Նարեկի նվագի հենց առաջին հնչյուններից դահլիճում քար լռություն էր տիրում, և երբ նա ավարտեց ելույթը, դահլիճը հոտնկայա ծափահարում էր: Մենք մտածում էինք, որ գուցե Նարեկին որևէ մրցանակ կտան, բայց երբ հայտարարեցին Armenia, Kapan, Narek Sargsyan՝ «Gran Prix», դահլիճը ցնծում էր...

Նարեկը մրցույթի համար պատրաստել էր երկու ստեղծագործություն. «Հունգարական պոպուլրի»՝ մշակումը՝ Ա. Միսայանի, «Տոնական նախերգանք», հեղինակ՝ Գ. Մանասյան:

Մրցույթին կատարեց «Հունգարական պոպուլրի»-ն, և երբ պետք է մասնակցեր Գալա համերգին, որոշեցինք, որ կկատարի երկրորդ ստեղծագործությունը՝ «Տոնական նախերգանք»-ը: Սակայն ժյուրիի անդամները, հիացած Նարեկի «Հունգարական պոպուլրի»-ի կատարմամբ, ցանկացան ևս մեկ անգամ լսել այդ ստեղծագործությունը: Սա Կապանի մշակույթի պատմության մեջ աննախադեպ հաջողություն է, որովհետև չէր եղել այնպիսի դեպք, որ Կապանից մասնակցեին Եվրոպայում որևէ մրցույթի և արժանանալին «Գրան Պրի» մրցանակին»:

Նարեկն այն աշակերտներից է, ով չի բավարարվում իր հաջողություններով, մշտապես հետևում է բարձր դասարանի աշակերտների, արվեստի քույր ուսանողների և լավագույն երաժիշտների կատարումներին, լսում, թե ինչ բարդ ստեղծագործություններ են նվագում, նրանցից խնդրում է նոտաները և սկսում պարապել:

Նարեկին ցանկանում ենք նորանոր ծեռքերումներ, էլ ավելի մեծ բեմեր և չենք կասկածում, որ նա միշտ բարձր կպահի Մյունխենի, Կապանի և Արամ Խաչատրյանի անունը կրող Կապանի թիվ 1 երաժշտական դպրոցի անունը:

Շնորհավորում ենք թիվ 1 դպրոցի տնօրեն Լիլիա Վարդանյանին, դասատու Ալեն Սահակյանին, նվագակցողներ Ալիսեն Հովհաննիսյանին և Հերմինե Բաղդասարյանին՝ նվիրածության և գրագետ աշխատանքի համար: Մեր շնորհավորանքները նաև Նարեկ Սարգսյանի ծնողներին:

Շնորհակալություն Չանգեզուրի պղնձամուրիբղենային կոմբինատի դեկավարությանը՝ Չեխիայում կազմակերպված փառատոնին Նարեկ Սարգսյանի մասնակցությունը հովանավորելու համար:

Կախարդական Ֆլեյտայի Նվիրյալը

Վազգեն Նարեկի Սարգսյանը ծնվել է 2004 թ. նոյեմբերի 26-ին Կապան քաղաքում արվեստագետի ընտանիքում: Վաղ տարիքից ի հայտ է եկել նրա սերն ու հետաքրքրությունը երաժշտության հանդեպ: 2010-ին հաճախեց Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց՝ Արթուր Մովսիսյանի ֆլեյտայի դասարանը: Կախարդական ֆլեյտայի հնչողությունն ուղղակի տղային սիրահարեցրեց գործիքին: Եվ ցանկությունը՝ դառնալ մեծ ֆլեյտահար, նրան նպատակաուղղեց ամենօրյա պարապմունքների: Ուսուցչի անմնացորդ նվիրումի, ամենօրյա քրտնաջան աշխատանքի շնորհիվ հասավ մեծ ձեռքբերումների:

2016-2019 թթ. Վազգենը մասնակցեց Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին՝ դառնալով եռակի դափնեկիր: 2018-2020 թթ. մասնակցեց «Արտ Մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնին՝ կրկին արժանանալով դափնեկրի կոչման: 2019 թ. մասնակցեց Մշակութային աջակցության հիմնադրամի կողմից կազմակերպված «Փողային նվագարանների» հանրա-

պետական մրցույթ-փառատոնին և արժանացավ երկրորդ կարգի մրցանակի: 2021 թ. մասնակցեց Եջմիածնի «Փոքրիկ քայլ» հանրապետական մրցույթ-փառատոնին և արժանացավ ժյուրիի հատուկ մրցանակին և «Գրան Պրիի»:

Ամեն անգամ հաղթանակով վերադառնալը պատանուն ավելի էր պարտավորեցնում, և ավելի էր աճում պրոֆեսիոնալիզմի հասնելու նրա ձգտումը: Ընդգրկվելով հանրապետության շնորհալիների շարքում Վազգենը բազմիցս հանդես է եկել տարբեր համերգասրահներում: Երևանի Կոմիտասի անվան կամերային տանը, Երևանի Կոմիտասի անվան տուն-թանգարանում վարպետության դասեր է անցկացրել Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ Արմենուհի Կարապետյանի և Գայանե Մուրադյանի հետ:

Անշուշտ, Վազգենին մեծ ապագա է սպասվում, վստահաբար արտահայտվում էին պրոֆեսորները:

2022 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտելով դպրոցը, Վազգենն ընդունվեց Երևանի Կոմիտասի անվան

Անշուշտ,
Վազգենին
մեծ ապագա
է սպասվում,
վստահաբար
արտահայտ-
վում էին պրո-
ֆեսորները:

պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի ֆլեյտայի դասարանը:

Մասնագիտությունից բացի՝ ունի նաև Նախասիրություններ, հետաքրքրվում է համակարգչային ծրագրավորմամբ և Նախընտրում է ֆուտբոլ խաղալ ու մասնակցել հեծանվավազների:



Սիսիանցի շնորհաշատ աղջկա՝ քանոնահարուհի Անի Սիմոնյանի երազանքների հեքիաթը

Այնտեղ, ուր ծնվում են անզուգական, մաքրամաքուր մեղեդիներ, ուր ձևավորվում է երաժշտական ճաշակ, ուր յուրաքանչյուր այցով բացահայտում են գեղեցիկը, անմեկնելին, ուր հյուսվում են մանկության ու պատանեկության մեղեդային հեքիաթները, ուր երազներն այնքան շոշափելի են ու հասուն, այդ աշխարհի ոտք դնելն արդեն իսկ պատիվ է, ու ես հպարտությամբ հնչեցնում եմ Սիսիանի երաժշտական դպրոց...

Ամեն անգամ երաժշտության այդ անկրկնելի աշխարհի մուտք եմ գործում

պատանյան մաքրամաքուր մտքերով. **«Երաժշտությունն աշխարհին տալիս է հոգի, մտքին՝ թևեր, երևակայությանը՝ թռչելու հնարավորություն, իսկ կյանքին՝ ամեն ինչ»:**

Անմիջական, ջերմ մթնոլորտում կայացավ ևս մի սպասված ու հետաքրքիր հանդիպում՝ երաժշտության ասպարեզում Սիսիանին բազում անգամներ փառք ու հպարտություն բերած մի աղջկա՝ Անի Սիմոնյանի հետ՝ համոզված, որ կրկին համակվելու եմ ջերմ, խաղաղ, անչար ու պայծառ զգացողություններով:

- Ե՞րբ էր, որ առաջին անգամ մոտեցա անծանոթ նվագարանին, մոտեցա... առաջին հայացքից այն այնքան էլ չգայթակղեց (ժպտում է), բայց... երբ մատներս զգացին մատնոցի հպումը, երբ ունկս հաճելիորեն շոյեց լարերի քաղցրալուր ծայրը, վայելեցի հնչյունների ձգողական ուժը, այդ անծանոթ գործիքը մեկնեմ դարձավ հարազատ: Հետո եղել են պահեր, երբ քանոնը փորձել է չենթարկվել, դեմ դուրս գալ մատներիս պարտադրանքին... բայց, ի վերջո, հաղթել է սերը՝ երաժշտության նկատմամբ՝ սկիզբ դնելով հաղթական երաժշտաերթին, - միանգամից անկեղծացավ Անին:

Հետո Անի Սիմոնյանի խանդավառ մեղեդին պարուրել է տասնյակ դափնեներ, մեր սերտ համագործակցությունը ծնունդ է տվել մեծ ու փոքր բազմաթիվ հաղթանակների, միասին ենք վայելել «Փոքր քայլեր»-2021, «Վերածնունդ» (2018, 2019) մրցույթ-փառատոների հաղթանակները...

- 2022 թվականի դեկտեմբերի 18-ը առանձնակի սիրով կիշենք, այն երկար, շատ երկար կմա մեր հիշողության մեջ, քանի որ Սիսիանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Անի Սիմոնյանը Հայաստանը, հարազատ ուստանը՝ Սիսիանը, պետք է ներկայացներ Ուկրաինայի Օդեսա քաղաքում անցկացվող ODESA MUSIC OLYMP 3-րդ մրցույթ-փառատոնում:

Մասնակցության որոշումն աներկբա էր, մնում էր ծրագրի ընտրությունը, և մենք որոշեցինք ընդգրկել նաև հայ կոմպոզիտորների գործեր, արդյունքում

Անին հանդես եկավ իս. Ավետիսյանի «Բամբասանք» և Բրամսի «Հունգարական պար» ստեղծագործություններով (օնլայն): Մասնակցությունն ավելի քան հաջողված էր. 15-18 տարիքային խմբում Անի Սիմոնյանը զբաղեցրեց 2-րդ պատվավոր տեղը՝ վաստակելով նաև դափնեկրի կոչումը, - Անիի հաջողությունների մասին սիրով, անթաքույց հպարտությամբ պատմեց ուսուցչուհին՝ Աննա Հախվերդյանը: Այո՛, հարուստ, անասելի հարուստ է Անիի անցած ուղին, հարուստ է երաժշտության ասպարեզում ձեռք բերածը, քանզի նա անվարան «նավարկել» է երաժշտության «ծովում»՝ մերթ փոթորկվելով, մերթ հանդարտվելով՝ ունկնդրին պահ տալով հոգու գույները, ապրումները, խոհերը...

Կան մարդիկ, ում ժպիտն արևի պես շողշողում է անգամ ձմռան ցրտում: Այսպիսի դրական էներգիայով է օժտված Անին, որն անվերապահորեն փոխանցվում է հանդիսատեսին: Երբ լսում ես Անիին, ավելի ես կապվում երաժշտությանը, հայտնվում ես նրա «որոգայթներում», քանզի քանոնահարուհու արվեստը լուսավոր գույների համադրություն է, թափանցիկ մեղեդիների ամբողջություն, հնչյունական ելևէջներից սևվող «երակ», ապրեցնելու խթան...

...Դրսում պատուհանից այն կողմ թիթեռների նման իջնում են ձյունափաթիլները, որոնց թեթև ճախրն օգնում է՝ հյուսելու սիսիանցի շնորհաշատ աղջկա՝ քանոնահարուհի Անի Սիմոնյանի երազանքների հեքիաթը...

...Նրա մատների հպումից քնքշանում է ամենասովորական մեղեդին անգամ, դառնում հիասքանչ գործ՝ պատրաստ՝ հերթական հաղթանակի դափնին նվիրելու Անի Սիմոնյանին:

Ասում են՝ այնտեղ, ուր հնչում է հոգեպարար երաժշտությունը, քամին դադարում է տարուբերել ծառերի սաղարթը, հեռավոր ժայռերն ընդառաջ են գալիս, ծովն անշարժանում է, վայրի գազանները հեզորեն շարժվում են, ուժն ու արիությունը խոցում են նետն ու աղեղը...

Անժխտելի է՝ այդ աշխարհի «տիրուհին» է Անին:

Անի Սիմոնյան, իմ սրտաբուխ ցանկությունն է՝ արվեստիդ քաղցրաշատ հնչյունները շարունակեն գերել մեզ և ուղեկցեն այդ անխմանալի ու առեղծվածային աշխարհը, ուր քեզ մշտապես կտեսնենք անեղծ ու ազնիվ, մաքրամաքուր ու անաղարտ՝ ինչպիսին հրաշքների հրաշքն է՝ պայքարի ու հաղթանակի զավակը՝ երաժշտությունը:

ԷՎԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



Կան մարդիկ, ում ժպիտն արևի պես շողշողում է անգամ ձմռան ցրտում: Այսպիսի դրական էներգիայով է օժտված Անին, որն անվերապահորեն փոխանցվում է հանդիսատեսին:



Գորիսի 30-ամյա փողային նվագախումբը համալրված է երեխաներով

Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցում գործում է փողային նվագախումբ, որն արդեն 30 տարի է, ինչ ակամա առաջնորդում է Սյունիքի մարզի երաժշտական արվեստի այս ճյուղը: Նվագախմբի դիրիժորն Արմեն Գրիգորյանն է: Ծնվել է 1960թ. Գորիսում: ՈՒՍԻ երաժշտական կրթություն: 1983թ. ավարտել է Կապանի երաժշտական ուսումնարանը, ստացել ակորդեոնի դասատուի և ժողգործիչների անսամբլի ղեկավարի որակավորում: 1998-2020թթ. աշխատել է Գորիսի Գուսան Աշոտ անվան մշակույթի կենտրոնում, իսկ 1983-93թթ.՝ Նույն կենտրոնի մշակույթի բաժնի գեղարվեստական մասի ղեկավար:

Հայ-եստոնական բարեկամության շրջանակում Գորիսն ու Տալլինը մշակութային քույր-քաղաքներ էին: Եստոնացիների Գորիս այցելությանը հաջորդեց 1990թ. ամռանը մեր պատվիրակության այցը Մերձբալթյան այդ հմայիչ երկիր՝ մասնակցելու 3 տարբեր միջոցառման: Տեղի ունեցան բացօթյա-հրապարակային ելույթներ: Հասարակության տարբեր խմբերի մասնակցությամբ կայացավ հայկական աշուղական-գուսանական, ժողովրդական երգերի հին և նորոյա ստեղծագործողների երգացանկով համերգ: Գորիսի մշակույթի տան ժողգործիչների խումբը հիմնադրվեց ելույթներ ունեցավ նաև Եստոնիայի մայրաքաղաքի մեծ համերգասրահներից մեկում, ինչպես նաև՝ գործարաններից մեկի դահլիճում՝ բանվոր-ծառայողների և աշխատավորների համար: Գորիսեցիների հաջողությանն անդրադարձել են Եստոնական հեռուստատեսությամբ և տարբեր ՉԼՄ-ներով: Արմեն Գրիգորյանը պարծանքով է նշում, որ բոլոր ելույթներում հնչել է սյունեցիների գուսանական երգի հիմնը՝ Գուսան Աշոտի «Չանգեզուրի չոր-չուրը ծաղկալ ըն»:

- Այնքան մտերմացանք Եստոնացիների հետ, որ նրանք մեզ հրավիրեցին ... անտառ: Այո, որքան էլ զարմանալի է, նրանց ազգային տոներից մեկը հենց անտառներում ուրախ միջոցառումների անցկացումն է, որն էլ համընկավ մեր այցելությանը,-պատմում է նվագախմբի ղեկավարը:

Գորիսի պատվիրակության պատվին կազմակերպված համերգի ժամանակ պարզվեց, որ Եստոնական փողային նվագախմբի գլխավոր շեփորահարը ... Տալլինի քաղաքացի է...

Գորիսի փողային նվագախմբի կեն-

սագրության կարևոր ժամանակաշրջաններից մեկը 1993-97 թվականներն են: Արցախյան շարժմանը համընկած՝ Հայաստանի պատուհասած ահեղ երկրաշարժից հետո, 1993թ. Արցախյան ազատամարտի դաժան օրերին, թշնամին բազմաթիվ զենքի տեսակներից մահ ու վեր էր սփռում Գորիս քաղաքի ու շրջանի սահմանների երկայնքով: Չոհվեցին հայրենյաց տասնյակ պաշտպաններ ու խաղաղ բնակիչներ: Համատարած քաոսի նմանվող անորոշության ու անհուսության ծիր էր՝ ԽՍՀՄ-ի փլուզում, մութ ու ցուրտ տարիներ, սննդի սպառնալից պաշարներ, շրջափակում, արտագաղթ...

Թունելի վերջում կարծես լույս առկայեց... Հայաստանում առաջիններից մեկը Գորիսում ստեղծվեց ինքնապաշտպանության շտաբ, կազմավորվեցին կամավորական ջոկատներ: Ձևավոր-

վողային նվագախմբի ստեղծման ճանապարհին հաղթահարեց երկու մեծ դժվարություն՝ առկա տեղական կադրերից հավաքեց տարբեր փողային նվագարաններին տիրապետող երաժշտական կրթությամբ անձանց և հայթայթեց երաժշտական փողային գործիչներ: Ինչպե՞ս...

...Գործն ընթացավ հնարամտությամբ ու առկա կապերով՝ պետության ու անհատ մարդկանց կողմից այս նախաձեռնությանն օգնելու պատրաստակամությունը կյանքի կոչելով: Հաշված օրերի ընթացքում կազմավորվեց փողային նվագախմբի գրեթե բոլոր գործիչների վարժ տիրապետող դպրոցի դասատուներից, շնորհալի սաներից, գորիսեցի մասնագետ-երաժիշտներից կազմված «Էնտուզիաստ» թիմը: Որքան էլ տարօրինակ է, նվագախմբի անդամներն արդեն տեղում էին, իսկ գործիչները ... դեռ չկային: Թիմային լավ աշխատանքի արդյունքը սպասեցնել չտվեց, բոլորը գործի լծվեցին: Կարճ ժամանակում ձեռք բերվեցին Հայաստանի տարբեր վայրերի դպրոցների պահեստներում դեռևս խորհրդային տարիներից մնացած հին կամ մաշված բազմաթիվ երաժշտական գործիքներ, որոնց արտաքին տեսքը հեռու էր գրավիչ լինելուց, իսկ դրանց հնչողությունը՝



Արամայիս Գասպարյան, Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի տնօրեն



Այսօր էլ փողային նվագախումբը մասնակցում է համաքաղաքային միջոցառումների, հանրապետական փառատոների: ՀՀ անկախության և ՀՀ ՉՈՒ ստեղծման 30-ամյակի առթիվ, 1921թ. և 1922թ. Ստեփանավանում և Աբովյանում անցկացված փողային նվագախմբերի հանրապետական շքերթ-փառատոների:

վեց Ազգային բանակը: Արցախից գոտեպնդիչ լուրեր եկան, ազատագրվեցին հայկական պատմական տարածքներ: Ոգևորություն և ուրախություն... Մարդկանց տխուր դեմքերին ժպիտ երևաց... Եվ ալեկոծ ծովի նմանվող մեր տարածաշրջանում Հայաստանի Գորիս քաղաքի Շառլ Ազնավուրի անվան դպրոցում, 1993թ. կազմավորվեց առաջին փողային նվագախումբը, որը դպրոցի տնօրեն Արամայիս Գասպարյանի հետևողականության արդյունքն էր: Նա

ոչ բավարար: Հաջորդ քայլը Երևանի երաժշտական գործիչների վերանորոգման հատուկ մասնագիտական արվեստանոցում դրանց նորոգումն էր:

... 1993թ. աշնանը դպրոցում իսկական տոն էր: Նվագախմբի բոլոր երաժիշտները ստացան իրենց ամրակցված փողային գործիքներն ու ինքնամոռաց նվիրվեցին այդքան սպասված տքնաշան, բայց հաճելի պարապմունքներին:

Այդ ժամանակ նվագախմբի ղեկավար չկար: Դիրիժորներն էին Արամա-

յիս Գալստյանը, Արա Հակոբյանը և Արմեն Գրիգորյանը: Կիթառի դասատու Սլավիկ Մկրտչյանը փողային նվագախմբում նվագում էր բաս, սոլֆեջիոյի դասատու Հրաչիկ Խաչատրյանը՝ բարիտոն, ակորդեոնի դասատուներ Արայիկ Հակոբյանը, Ալբերտ Գրիգորյանն ու Արմեն Գրիգորյանը՝ կոռնետ, տենոր և շեփոր, կլարնետի դասատուներ Արամայիս Գալստյանն ու Սևադա Մկրտչյանը՝ կլարնետ, ակորդեոնի խմբակի սաներ Հովհաննես Թեյմուրյանն ու Արթուր Քյարունցը՝ այտ (այս մարդիկ մեծ ներդրում ունեն Գորիսի փողային նվագախմբի ստեղծման և կայացման գործում):

Պատերազմի հերոսների, Հայաստանի մեծ երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման և տոնական օրերին նվագախումբը հաճախ էր Արցախյան ազատամարտի հերոսների և երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրներում, Գարեգին Տեղեհի, Չորավար Մկրտանիկի բանաների մոտ, զինվորական արձանի հանդիսավոր արարողություններին, Գորիսի քաղաքային զբոսայգում, տարբեր դահլիճներում տեղի ունեցող միջոցառումներին հանդես գալիս ելույթներով:

Փողային նվագախմբի երաժիշտներին բախտ վիճակվեց լինել նաև մարզի առաջին զինվորական նվագախմբի ստեղծողները: Նվագախումբը ձեռնամուխ եղավ նաև տարածաշրջանում տեղակայված զորամասերից մեկի զինվորական նվագախմբի ստեղծման և կայացման գործին: Երբ կազմավորվեց Հայոց բանակը, զորամասի հրամանատար Սերգեյ Գրիգորյանը՝ բանակաշինությանը զուգընթաց, իր կարևոր գործառնություններից մեկը համարեց զորամասի զինվորական նվագախմբի ստեղծումը, որի համար հենվեց ընդամենը մեկ տարի առաջ ստեղծված, բայց արդեն բնակչության շրջանում ճանաչում ձեռք բերած Գորիսի փողային նվագախմբի վրա: Սկզբնական շրջանում զորամասի զինվորական նվագախումբը գործում էր բացառապես Գորիսի փողային նվագախմբի երաժիշտների ընդգրկմամբ, ովքեր լույսնափայլ քաղաքացիական գործը համատեղում էին զինվորական գործի հետ: Նվագախումբն ամեն օր մասնակցում էր զինվորականների առավոտյան տողանին, նվագում մարտական դրոշի ներս բերման, զինվորական քայլերթի, պարզ-լատումների ժամանակ, ցավոք, նաև թշնամու հարձակման հետևանքով զոհված հերոսների շիրիմներին:

Չորամասի զինվորական նվագախմբի ղեկավարն ու դիրիժորն էր լուսահոգի Վալերիկ Գասպարյանը (Գուսան Աշոտի երգերի մեղեդիների հիմնական նոտագրողը), կոնցերտմայստերը՝ Ալեքսանդր (Սաշիկ) Սարգսյանը: Այդ օրերի մասին դեռևս վառ են հիշողությունները փողային նվագախմբի ղեկավարի մոտ.

- Վալերիկ Գասպարյանը թեպետ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս ճանաչում ունեցող պրոֆեսիոնալ երաժշտախմբերի ղեկավար, հայտնի խմբավար էր, սակայն նա նվագախմբի տղաներին խոստովանեց, որ փողային նվագախմբի գործիքների անհրաժեշտ հնչողության ապահովման և զինվորական նվագախմբի դիրիժորի որակավորման բարձրացման գործում խորհրդատվության կարիք է զգացվում: Փողային նվագախմբի նախկին 3 դիրիժորը՝ Արամայիս Գալստյանը, Արա Հակոբյանն ու Ես յուրաքանչյուր գործիքի վրա մանրազնին ցուցադրեցինք անհրաժեշտ մասնագիտական նրբությունները և ապահովվեցինք մասետորդի աշխատանքների հետագա վերելքը:

Նա հիշում է Հայաստանում առաջինը Գորիսի մակախության հրապարակում (ներկայումս՝ Գրիգոր Տաթևացի հրապարակ) անցկացված զինվորական շքերթը 1994թ. սեպտեմբերի 21-ին՝ ի պատիվ Հայաստանի անկախության և Հայոց բանակի կազմավորման տոների: Շքերթի





Շահանե Գասպարյան ջութակահարը

Շահանե Գասպարյանը ծնվել է 2010 թ. սեպտեմբերի 14-ին Կապան քաղաքում: Չարմանայի հրաշամանուկ էր, դեռ մեկ տարեկանը չբոլորած՝ խոսում էր, երգում և մինչև երկու տարեկանը լրանալն արտասանում էր բանաստեղծություններ: Մեծանում էր, սիրում իրեն ցուցադրել, զգում էր իրեն բեմում և տան հանդիսատեսին պարտադրում ծափահարել իրեն:

Պատահական չէր, որ Շահանեին հինգ տարեկանում ծնողները տանում են Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց և նախընտրում լարային բաժնի ելեռա Օհանյանի ջութակի նախապատրաստական դասարանը: Փոքրիկ աղջնակը սիրահարվում է գործիքին և ուսուցչուհուն, արագորեն յուրացնում ու առաջադիմում դասից դաս: Առաջին դասարանից մինչ օրս մասնակցում է դպրոցի հաշվետու համերգներին և քաղաքում կատարվող միջոցառումներին: Ի դեպ, նա հաճախում է նաև դաշնամուրի՝ Չարա Հարությունյանի դասարան և մասնակցում նաև դաշնամուրային համերգներին:

Շահանեն սովորել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է Կապանի արվեստի դպրոցի պարային բաժինը: Այժմ գերազանց առաջադիմությամբ սովորում է Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի յոթերորդ դասարանում՝ Արմենուշ Հովհաննիսյանի դասարանում:

2020 թվականին՝ տասը տարեկանում մասնակցեց «Արտ Մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնին և արժանացավ դիպլոմի: 2021 թ. մասնակցել է «Մաեստրո» միջազգային մրցույթ-փառատոնին և արժանացել առաջին կարգի մրցանակի, ի դեպ, ժյուրիի անդամները մեծամասամբ արտերկրից էին:

2021 թ. վեցերորդ դասարանում տեղի ունեցավ Շահանեի մենահամերգը, որն անցավ փայլուն: Շահանեն արժանացավ ջերմ ծափահարությունների, հանդիսատեսները գովեստի խոսքեր հնչեցրին: Մենահամերգին հրավիրված էին տարբեր բնագավառների մարդիկ: Համերգի անհայտ երկրպագուների կողմից նրան անակնկալ նվեր մատուցեցին՝ նվիրեցին անհրաժեշտ երեք քառորդ ջութակ և շնորհակալություն հայտնեցին դպրոցին՝ դասական երաժշտությունը ճիշտ մատուցելու և ուսուցանելու համար:

Առիթից օգտվելով՝ դպրոցի տնօրենությունը և ծնողները շնորհակալություն են հայտնում անհայտ բարերարներին:

Շահանեն իր ապագան տեսնում է երաժշտության և արվեստի բնագավառում: Նա երազում է դառնալ բարձրակարգ ջութակահար և ելույթ ունենալ մեծ բեմերում:

**ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ**

Շահանեի հետևում էր Վազգեն Սարգսյանը, ով այդ ժամանակ Սյունիքի գծով ՀՀ պետնախարարն էր, ում նստավայրը Գորիսն էր: Տրիբունայի առջևով քաղաքի կոլեկտիվների ներկայացուցիչներից հետո խրոխտ քայլերով անցնում են ևորաստեղծ բանակի առաջին սպաներն ու զինվորները: Չինվորական նվագախմբի վերափոխված Գորիսի փողային նվագախմբի տղաները զինվորական հանդերձանքով, հաստատուն քայլերով կատարում են հայկական ռազմական քայլեր: Հուզված ու հիացած Սպարապետի աչքերն ուրախությունից փայլում էին: Միջոցառումն ավարտվել էր, բայց ժողովուրդը դեռ չէր ցրվում, քանի որ նվագախումբը նվագում էր ուրախ քայլերգեր: Սպարապետը, ով այդ ընթացքում հրապարակի անցուդարձին արդեն հետևում էր աշխատասենյակի պատուհանից, անհարմար է զգում, որ ժողովուրդն ու նվագախումբը դրսում են, ինքը՝ աշխատասենյակում: Շուտափնջում է ներքև, մտնում ժողովրդի մեջ: Անակնկալ մոտենում է ինքնամոռաց նվագող նվագախմբի տղաներին ու շարունակում հիացած ունկնդրել հերթական զինվորական քայլերգի դրոյուները: Ավարտելուն պես շնորհավորում և երախտագիտության խոսք է ուղղում Մաեստրոյին ու նվագախմբին:

- Տղերք, գիտեք, չէ՞, որ Սյունիքն է

առաջինը..., - անավասիկ, այսօր արդեն մարզադաշտային դարձած Սպարապետի խոսքերը:

Դպրոցի տարեգրության հիշարժան դեպքերից է 1994թ. այն օրը, երբ հայ ազգի սիրելի զավակ, աշխարհահռչակ շանսոյե Շառլ Ազնավուրն առաջին անգամ ժամանեց Գորիս: Նրա պատվին Գորիսի թատրոնի լեփ-լեցուն դահլիճում կազմակերպվեց հանդիպում քաղաքի հասարակության հետ, որն ուղեկցվում էր գրական-գեղարվեստական համադրությամբ: Միջոցառման ժամանակ մասնակիցներից մեկը բարձրացավ բեմ և իր նկարած կտավը նվիրեց Ազնավուրին: Անակնկալ նվերից զգացված, Ազնավուրը վերցրեց նկարը, գրկեց աղջնակին: Քանի որ բեմահարթակից չհնչեց, թե ո՞վ և ի՞նչ տվեց, Գորիսի Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցի աշխատակցուհի Սուսաննա Հովհաննիսյանը բարձրացավ բեմ և խոսափողով հնչեցրեց:

- Սիրելի՛ Շառլ Ազնավուր: Այս աղջիկը Գորիսի Ջեր անունը կրող երաժշտական դպրոցի սան Լուիզա Ադամյանն է: Ազնավուրը ցնցվեց:

- Ինչպե՞ս ... Այս քաղաքում իմ անունով երաժշտական դպրոց...

Դահլիճն ակտիվացավ, թնդացին ծափահարություններ...
1997-21թթ. նվագախումբը գործեց ընդմիջումներով. կադրերի պակաս,



Կապանցի շվիահարն ու դուդուկահարը

Մերոժան Ավանեսյան շվիահարն ու դուդուկահարը ծնվել է 2007 թ. Կապան քաղաքում: Նրա ընդունակություններն ի հայտ են եկել վաղ տարիքում: Ձեռքն ընկած յուրաքանչյուր իրով փորձում էր նվագել, երգում էր, պարում, սեղանին թմբուկ զարկում: Հաշվի առնելով երեխայի նախասիրությունները՝ ծնողները որոշեցին ուղարկել երաժշտական դպրոց: Յոթ տարեկանում Մերոժանն ընդունվեց Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց՝ ժողովրդական նվագարաններ բաժնի շվիի՝ Վաչիկ Համբարձումյանի դասարան: Առաջին քայլերից բացահայտվեցին նրա երաժշտական ընդունակությունները:

Մերոժանը սովորել է նվագել երկու գործիք՝ շվի և դուդուկ: Առաջին դասարանից մինչև ավարտելը մասնակցում էր հաշվետու համերգներին, քաղաքում կայացած տարբեր միջոցառումներին և սիրվել ու աչքի է ընկել իր գեղեցիկ և զգացմունքային կատարումներով: Մասնակցել է մի շարք մրցույթների, մասնավորապես՝ 2021 թ. «Արտ Մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնին և արժանացել դափնեկրի կոչման՝ «Շվի» անվանակարգում: Նույն տարում մասնակցել է նաև «Եղեգան փող» հանրապետական մրցույթ-փառատոնին և

արժանացել երկրորդ կարգի դափնեկրի կոչման:

2022 թ. «Դուդուկ» անվանակարգում մասնակցել է «Մաեստրո» միջազգային մրցույթ-փառատոնին, արժանացել առաջին կարգի դափնեկրի կոչման:

Մերոժանը հանրապետությունում ճանաչվել է «Տաղանդ շուռ»-ի հանրապետական մրցույթի մասնակցությամբ: Սյունիքի մարզից անցել է եզրափակիչ և շարունակել «Տաղանդ շուռ»-ի գործունեությունը մինչև այսօր:

2022 թ. Նոյեմբերին ծայնագրվել է երևան քաղաքում նվագախմբի հետ: Առջևում սպասվում են նկարահանումներ և «Գալա» համերգ Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում: Մերոժան Ավանեսյանը ցանկանում է նմանվել իր ուսուցչին, նվագել նրա նման և դառնալ լավագույն կատարող:

Ներկայումս շարունակում է ուսումը Կապանի արվեստի պետական քոլեջում՝ Նույն դասատուի դասարանում և որոշել է ուսումը շարունակել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

**ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ**

գործիքների սակավություն, սերնդափոխության հարց...

Նվագախմբի գերակշիռ մասն այսօր դպրոցահասակ երեխաներ են: Խմբակի անվճար լինելը խրախուսում է երեխաներին, ովքեր ինքնակամ ներկայանում և համապատասխան փորձաշրջան անցնելուց հետո ընդգրկվում են նվագախմբում: Երկար ու տընաջան պարավունքներից հետո շնորհայի սաները նվագախմբում իրենց դրսևորում են առավելագույնը երկու տարի, որից հետո դպրոցն ավարտում ու ամեն մեկն ընտրում է կյանքի իր ճանապարհը:

2021թ. արվեստի դպրոցի միավորումով այս դպրոցը վերանվանվեց Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց: Համավարակն ու 44-օրյա պատերազմն իրենց բացասական կնիքը թողեցին ամենուր: Սակայն նվագախումբը վճռական է՝ մասնակցել և հաղթել տարբեր նվագախմբային միջոցառումներին:

1921-23թ. Գորիս համայնքի ղեկավարության, Մշակույթի աջակցության հիմնադրամի և Կարմիր խաչի Հայաստանի գրասենյակի կողմից իրագործվեցին աջակցության ծրագրեր, որի շնորհիվ դպրոցի փողային բաժնում բացվեցին նոր դասարաններ, նվիրատվությամբ դպրոցը ստացավ մի քանի միլիոն դրամը գերազանցող նոր փողային գործիքներ, խոսափողեր, ուժեղա-

ցուցիչ, գործիքների աքսեսուարներ և երաժշտական պարագաներ:

2022թ. դեկտեմբերին դպրոցի փողային նվագախումբը, երգչախումբը, դաշնամուրի, ակորդեոնի, կլարնետի, շվիի և քանոնի դասարանների աշակերտները համերգային ծրագրով հանդես եկան «Գորիս» հյուրանոցում ժամանակավորապես օթևանած Արցախի մեր հայրենակիցների առջև:

Այսօր էլ փողային նվագախումբը մասնակցում է համաքաղաքային միջոցառումների, հանրապետական փառատոների: ՀՀ անկախության և ՀՀ ՁՈՒ ստեղծման 30-ամյակի առթիվ, 1921թ. և 1922թ. Ստեփանավանում և Աբովյանում անցկացված փողային նվագախմբերի հանրապետական շքերթ-փառատոների:

Փառատոների կրկնակի դափնեկիր Գորիսի փողային նվագախմբի բոլոր պարագմունքներն այսօր նպատակաուղղված են 2024թ. Երևանում անցկացվելիք փողային նվագախմբերի մրցույթի մասնակցությանը, որին ջանադրաբար նախապատրաստվում է նվագախումբը:

Դեկավարի խոսքը հատու է.

- Չէ՞ որ սա առաջին լուրջ քննությունն է: Եթե մրցույթ, ուրեմն՝ հաղթանակ: Այլ տարբերակ չկա:

ՎԱԶԵ ՄԿՐՏՅԱՆ



Վիգեն Աղայան. «Պատիվ ունեմ ներկայանալ...»

Ես ճակատենցի Վիգեն Աղայանն եմ: Ծնվել եմ 2006 թ., սովորել և ավարտել եմ Կապանի № 6 հիմնական դպրոցը: Այժմ սովորում եմ Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում որպես խոհարար (կուրսդեմ) Ծ. Գրիգորյան): 11 տարեկանում ընդունվեցի Կապանի արվեստի մանկական դպրոց՝ թատերարվեստի բաժին (դասատու՝ Ա. Գաբրիելյան): Հինգ տարի է՝ հաճախում եմ Կապանի արվեստի մանկական դպրոց և արդեն հաջողություններ ունեմ: Կապանի գյուղերում և մանկապարտեզներում խաղացել ենք ներկայացումներ և խի՛նդ ու ծիծաղ պարզել մեր հանդիսատեսին: Կապանի սահմաններից դուրս՝ Երևանում, 2021 թ. թատերախմբով մասնակցեցինք «Էտյուդ» մրցույթ-փառատոնին և գրավեցինք առաջին պատվավոր տեղը, 2022 թ. մասնակցեցինք Վրաստանում կազմակերպված մրցույթ-փառատոնին, որտեղ բարձր պահեցինք մեր հանրապետության պատիվը՝ բարձրացվեց Հայոց եռագույնը և կրկին հաղթող ճանաչվեցինք: Հեռավար մասնակցել եմ նաև «Արտ Մյուզիք» ամուսնի մրցույթ-փառատոնին, դարձել 3-րդ կարգի դափնեկիր:

2021 թ. մարտի 5-ին Սյունիքի մարզային գրադարանում ստեղծվեց ընթերցասերի ակումբ, որի հիմնադիր-ղեկավարն եմ: Այնտեղ իմ թիմի հետ կազմակերպեցինք տարբեր բնույթի 15-ից ավելի միջոցառում: Ակումբի նպատակն էր աջակից դառնալ գրադարանին և զարգացնել գրադարանային մշակույթը:

Նաև ստեղծագործում եմ: Հեղինակ եմ 60-ից ավելի ստեղծագործության, որից «Հայաստան» բանաստեղծությունս տպագրվել է «Չանգեզուրյան դղիաներ» գրքում: Իմ ստեղծագործություններից շատերը նվիրել եմ Հայաստանին... 2022 թ. հրատարակեցի «Հեքիաթներ» գիրքը, որը ներկայացրել եմ մեր մանուկներին...

Վերջերս ծնվեց «Իմ Կապան լուսավոր» երգը, երաժշտությունը՝ Թ. Հովհաննիսյանի, խոսքը՝ Վ. Աղայանի, երգում է Մ. Բաբաջանյանը: Մասնակցում եմ նաև տարբեր միջոցառումների ու ծանոթանում կապանյան մշակույթին:

Սիրելի ընթերցող, Ձեզ եմ ներկայացնում իմ գրած հեքիաթներից մի քանիսը, որոնք գրված են հայկական ժողովրդական ասացվածքների հիման վրա: Ձեզ՝ բարի ընթերցանություն:

Երկու եղբայրները

Լինում են, չեն լինում երկու եղբայր են լինում Սիմոնն ու Սամսոնը: Սիմոնը մի առավոտ ասում է.

- Չէ՛, նստելով բան չի դառնա, վեր կենամ գնամ աշխատեմ, որ կարողանամ հացս վաստակել:

Սամսոնն էլ ասում է.

- Է՛, այ անխելք, ի՞նչ ես գնում աշխատելու, չարչարվելու: Արի՛, արի՛ նստի, հացն ինքն իրեն կգա, դու էլ կուտես:

- Էի մի շա՜ բան ասաց, ա՛յ տղա, Սամսոն, որ չաշխատես, որտեղի՞ց հաց կտեսնես, հը՞:

- Է՛, դե գնա է, - ասում է Սամսոնը, - գնա չարչարվի: Ես էլ նստեմ թախտին ու կյանքս վայելեմ: Դե գնա՛, Սիմոն, գնա չարչարվի:

Անցնում են ժամեր, երեկոյան Սիմոնը վերադառնում է տուն՝ ձեռքին հաց, պանիր, կանաչի և այլն: Գալիս է ուտելիքը դնում սեղանին, սուփրան փռում, նստում հաց ուտելու: Սամսոնը մոտենում է սեղանին, որպեսզի Սիմոնի հետ հաց ուտի:

- Սամսոն, - ասում է Սիմոնը, - ի՞նչ ես անում:

- Դե, ուզում եմ քեզ հետ հաց ուտել:

- Ա՛յ տղա, դո՞ւ ես վաստակել այս հացը, որ ուզում ես ուտել, գնա, գնա աշխատի և քո հացը վաստակի:

Սամսոնը նեղանում է ու հեռանում:

Եվ մի քանի օր տուն չի գալիս:

Օրերից մի օր էլ Սամսոն եղբայրը տուն է գալիս՝ լիքը ուտելիքով:

- Այ տղա, Սամսոն, այս ո՞ր էիր այսքան ժամանակ, - ասում է Սիմոնը:

- Գնացել էի աշխատելու, բա հո տ-

- Նապաստա՛կ, արի մի բան պայմանավորվենք:

Նապաստակն ասաց.

- Է՛, գոռոզ աղվես, ես չեմ հանձնվի և դու ինձ չես կարող ուտել:

- Այդպե՛ս, այո՞, դե՛ լավ, ուրեմն երեք օր հետո միասին կվազենք, ով ավելի շուտ հասնի անտառի ծայրին, նա կհաղթի:

- Լա՛վ, աղվես եղբայր, ես համաձայն եմ, - ասաց Նապաստակը, - եթե դու հաղթես, համի կանես ու ինձ կուտես, իսկ եթե ես հաղթեմ, դու ինձ համար տաքուկ բույն կպատրաստես:

Երկուսն էլ համաձայնվում են, և աղվեսը գնում է անտառ՝ աղվեսների մոտ, ու գոռոզանում.

- Լսե՛ք, անտառի աղվեսներ, ես կհաղթեմ Նապաստակին և միասին մի լավ կկշտանանք: Եթե ես հաղթեմ, Նապաստակին կուտենք:

Նապաստակը սկսեց պատրաստվել վազքի մրցույթին, իսկ աղվեսը վստահ էր, որ հաղթելու է, և ընկերներին ասաց.

- Մեկ է, ես հաղթելու եմ, ինչի՞ համար պարապեմ և ջանք թափեմ, թող նա պարապի, քրտինք թափի: Նա պատրաստվում է, որովհետև գիտի, որ կարող է պարտվել:

Աղվեսները ծիծաղեցին...

Եվ ահա եկավ պահը, երբ պետք է Նապաստակն ու աղվեսը մրցեն, և ով շուտ հասնի անտառի ծայրը՝ հաղթող կճանաչվի:

Նապաստակը հաղթում է, և երբ շնչակտուր աղվեսն ու Նապաստակը մոտենում են իրար, Նապաստակն ասում է.

- Աղվես եղբայր, ինձ հարկավոր չէ տաքուկ բույն, ուղղակի ուզում էի քեզ հասկացնել, որ պետք չէ գոռոզանալ, մենք մեր ցանկությանը պետք է հասնենք միայն քրտնաջան աշխատանքով:

Աղվեսի ընկերները մոտեցան նրան, և մեկն ասաց.

- Դու գոռոզանում էիր և ասում, թե հաղթելու եմ Նապաստակին, միասին ուտելու ենք Նապաստակին և սովից չենք մեռնելու:

Աղվեսը ցանկացավ բացատրություն տալ ընկերներին, բայց նրանք հեռացան...

Այստեղ ժողովուրդը մի լավ խոսք է ասում ԳԵՏԸ ՉՏԵՍԱԾ՝ ՄԻ ԲՈՒԲԻԿԱԼԱ:

Գայլն ու խոզը

Լինում է, չի լինում մի գեղեցիկ անտառ է լինում: Այս անտառը մի բնակիչ



Ե ունենում գայլը: Այս գայլը սոված է լինում: Ամեն օր ուտում, խմում է, բայց փորը դատարկ է մնում, չի կշտանում: Անտառում մի խոզ կար, նա ամեն օր գալիս է կաղնու ծառի տակ կաղին ուտում: Մի օր գայլը որոշեց թակարդ սարել կաղնու տակ: Երբ խոզը գա ու կաղին ուտի՝ կընկնի ծուղակը, ինքն էլ հետևից կբռնի և կուտի: Այդ օրն էլ, ի վնաս գայլի, խոզը չի գալիս կաղնու մոտ, որպեսզի կաղին ուտի: Գայլը գնում է՝ կաղնու տակ փնտրելու խոզին, բայց մոռացել էր, թե որտեղ է սարել թակարդը: Գնում է մտնում իր իսկ սարած թակարդը...

Այստեղ ժողովուրդը կասեր՝ ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ ՓՈՍ ՓՈՐՈՂ ԻՆՔԸ ԿԸՆԿՆԻ ՓՈՍԸ:

Իսկ դու, սիրելի ընթերցող, ուրիշի համար փոս չփորես, որպեսզի ինքդ էլ գայլի օրը չընկնես:

Մարդն ու կնիկը

Լինում է, չի լինում մի հեռավոր գյուղ է լինում: Այդ հեռավոր գյուղում ապրում են մի մարդ ու կնիկ: Այդ մարդն ու կնիկը ժամը մեկ կռվում են, չգիտես՝ ինչու: Մի օր էլ մարդը վեր է կենում ու սկսում ուրախ- ուրախ թավալ:

- Կնիկն էլ տեսնում է և ասում.
- Ա՛յ մարդ, էի գժվեցի՞ր, ի՞նչ եղավ քեզ:
 - Է՛, այ կնիկ, խեղճ մի բան կտրեց:
 - Այ մարդ, կարո՞ղ է գժվել ես: Այդ ի՞նչ է խեղճ կտրել, որ այդպես թավալում ես:
 - Է՛, այ կնի՛կ, գնում եմ կողքի գյուղ, ծառեր բերեմ տնկեմ, գյուղս զարգացնեմ:

Մարդը պարծենում է. Կբերեմ ծառերը, կտնկեմ, կվաճառեմ ու կհարստանամ:

- Ա՛յ մարդ, հերիք եղավ պարծենաս, դու գործդ արա, նոր գլուխ գովի:

Այս մարդն ամբողջ գյուղին հայտնում է իր մտադրության մասին ու գնում կողքի գյուղ՝ տնկիներ բերելու: Տնկիները բերում է, տնկում, բայց չի ջրում: Գնում է պառկում, ոտը ոտին զցում: Տնկիները չորանում են և փչանում:

Մի քանի օր հետո մարդը գնում է այգի և տեսնում տնկիները չորացել են: Գալիս է տուն և կնոջը պատմում եղածի մասին, կինն էլ ասում է.

- Ա՛յ մարդ, տնկի էիր բերո՞ւմ, ծառ էիր մշակո՞ւմ, բերք էիր շուկա տանո՞ւմ, հա՞: Մենակ թողնես գլուխդ գովես...

Այստեղ հիշում ենք ժողովրդական ասացվածքը՝ ԳՈՐԾԴ ՄԱՐ, ՀԵՏՈ ՊԱՐԾԵՑԻՐ:

Անտառի բնակիչները

Կար, չկար մի անտառ կար: Այդ անտառում ապրում էին տարբեր կենդանիներ: Նրանք համախմբված չէին, այնտեղ ապրում էին խոզը, հավը, աղվեսը, նապաստակը և այլն: Աղվեսը տուն չունեի և դրսում էր մնում: Օրը եկավ, որ պետք էր աղվեսի համար տուն կառուցվեր: Աղվեսը հսկայական քարերը չկարողացավ բերել այն վայրը, որտեղ պետք էր կառուցել տունը: Ընկերները տեսնում են, որ աղվեսը չի կարողանում հսկայական քարերը բերել և տուն կառուցել, բայց քանի որ անտառի բնակիչները համախմբված չէին, աղվեսին չէին օգնում: Ձյուն տեղաց: Աղվեսը մնաց դրսում: Սառնամանիքին դողում էր անընդհատ: Անտառի բնակիչներից միայն նապաստակը տեսավ, որ աղվեսը դողում է: Նա գնաց անտառի մյուս բնակիչների մոտ և ասաց.

- Սիրելի՛ բարեկամներ, մենք երբեք չենք համախմբվել, ամենքս մեր տունն ենք կառուցել, իսկ մեր ընկեր աղվեսին չօգնեցինք:

Հավն ասաց.

- Դե՛, եկեք հիմա համախմբվենք և օգնենք մեր ընկերոջը...

Անտառի բնակիչները հավաքվում են, համախմբվում և կառուցում իրենց ընկեր աղվեսի տունը:

Ժողովուրդը լավ խոսք կասեր այս դեպքում՝ ԳՅՈՒՂ ԿԱՆԳՆԻ, ԳԵՐԱՆ ԿԿՈՏԻՐ:

Ես՝ Քրիստինե Ադամյանս...

Ծնվել եմ 2005 թ. ապրիլի 16-ին Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Կարմիր շուկա գյուղում: Մինչև 9-րդ դասարանը հաճախել եմ Կարմիր շուկայի միջնակարգ դպրոցը: 2020 թ. սեպտեմբերի 28-ին պատերազմական իրավիճակի պատճառով ստիպված տեղափոխվել եմ Կապան և 10-րդ դասարանից սկսած մինչ այսօր սովորում եմ Կապանի թիվ 2 ավագ դպրոցում: Ստեղծագործել սկսել եմ 11-12 տարեկանից: Այդ ծիրքն իմ մեջ բացահայտել եմ շատ պատահական, երբ մի երեկո որոշեցի նոր օրագրիս մեջ գեղեցիկ ստեղծագործություն գրել: Առաջին բանաստեղծությունը կոչվել է «Խելառի երգը», որտեղ ներկայացրել եմ մարդու հոգու հարստությունը: Ստեղծագործել եմ նաև այլ թեմաներով, ինչպիսիք են հայրենիքը, բնությունը, տարվա յուրաքանչյուր եղանակը: Հիմնական ներշնչանքիս աղբյուրը հայրենիքս է, ինձ շրջապատող մարդիկ, նրանց յուրաքանչյուրի ներաշխարհը: Ունեմ նաև մեկ արձակ ստեղծագործություն՝ «Արվեստի աչքերով» վերնագրով: Այստեղ նույնպես պատկերված են մարդկային հոգու գեղեցկությունը և անաղարտ առկայությունը յուրաքանչյուրիս կյանքում:

Ես ցանկացա...

Ես ցանկացա լինել արև,
Որ ջերմացնեմ բոլոր մարդկանց,
Ես ցանկացա լինել տարերք,
Բոլորին տալ խինդ ու եռանդ:
Ես ցանկացա լինել քնար,
Ու տալ մարդկանց սեր ու բարիք:
Ես ցանկացա լինել պաղ ջուր,
Քշել, տանել ցավ ու դավեր,
Ես ցանկացա լինել քամուն
Ու մշուշին մոտիկ ընկեր:
Ես ցանկացա լինել կարոտ,
Գնալ դեպի բաց հեռուներ,
Ես ցանկացա լինել վառվող
Ու լուսավոր կրակ անշեջ:
Ես ցանկացա լինել աչքեր,
Որ ամփոփեմ իմ մեջ ցավեր,
Ես ցանկացա լինել ձեռքեր,
Որ լացողին ուժեղ գրկեմ:
Ես ցանկացա լինել ունկեր,
Որ բոլորին լսեմ ազատ,
Ես ցանկացա լինել ընկեր,
Խորհուրդներով օգնել մարդկանց:
Ու վերջապես ես ցանկացա
Լինել մեծ սեր, անկեղծ, բարի,
Տալ բոլորին ժպիտ, ծիծաղ,
Դարձնել մարդկանց սիրո գերի:
Լուռ արբեցնել նրանց սիրով,
Որ «Մեր» գոռան, սիրով ապրեն,
Իրենց կյանքին իմաստ տան նոր
Ու աշխարհը սիրով լցնեն:

Լռություն

Ոսկեգոծ աշուն էր, լուռ տերևաթափ,
Քայլում եմ հիմա, հանգիստ մտքում,
Թե ինչո՞ւ է աշխարհն այսքան չարացած,
Ու ինչո՞ւ մարդիկ իրար չեն սիրում:
Ինչո՞ւ է երկիրն անարդար դարձել,
Ու ինչո՞ւ մարդիկ չեն ընկերանում,
Ինչո՞ւ է աշխարհն այսքան բարդացել,
Եվ մի՞թե կորել են սեր, վստահություն:
Մի՞թե կորել է մանկական երազը,
Ու մանուկներն այն զվարճալի,
Որ խաղում էին ուրախ ու զվարթ՝
Գեղեցիկ աշնան չոր տերևների մեջ:
Մի՞թե երազն է լուռ անհետացել,
Որ մարդիկ հիմա չեն նայում երկինք,
Մի՞թե այս կյանքը շատ վատ է դարձել
Ու չի ճանաչում ընկեր, ընտանիք:
Մի՞թե վերջապես սերն է չքացել,
Ամենից հզոր զգացմունքն աշխարհում,
Մի՞թե մի կտոր էլ չի մնացել,
Որ գոնե մի քիչ դարմաներ հոգիս:
Բնությունն է լուռ ննջում շարունակ,
Քամին օրոր է երգում գեղեցիկ,
Ծուրջս հանդարտ է, բայց սիրտս տկար
Խառնվում է անխոս բնության մեջ:
Աշունը գնաց, ու... ծաղկեց գարուն,
Բնությունը նորից կենդանի դարձավ,
Բայց թե ինչո՞ւ է աշխարհը լուռ,
Այդպես էլ մնաց գաղտնիք ինձ համար:



ՏՈՂԻՄԻԺՈՒՐ ԴԱՏԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԼԵՐՈՒՄԸ ԽՈՍՔԱՅԻՆԵՐԸ

Շնորհալի գեղանկարչուհին, ով Մոսկվայում բարձր պահեց մեր հանրապետության անունը

Նրա տարերքն ասես հանրապետական ու միջազգային փառատոներն են, որոնց մասնակցում էր, մրցանակային տեղեր զբաղեցնում ու ապացուցում, որ ինքը լավագույնն է: Քաջարանի արվեստի դպրոցի գեղարվեստի բաժնի աշակերտուհի Անժելիկա Ենգիբարյանն արդեն յոթ տարի է, ինչ սովորում է դպրոցում և իր դասատուներից՝ Լիլի Մեսսանյանից, Աստղ Ավանեսյանից, Արևիկա Թումանյանից ստացած գիտելիքները կիրառել է փառատոներում՝ Երևան, Ճապոն, Վաշինգտոն, 2022 թվականին՝ Նաև Մոսկվա:

Ո՞րն է այս աղջնակի հաջողության գրավականը: Միանշանակ կարող ենք պնդել՝ անսահման աշխատասիրությունն ու ձգտումը՝ լինել լավագույնը: Չի կարելի Նաև չչեչտել ծնողների դերը, ովքեր աջակցում ու ոգեշնչում են աղջնակին: Նրա հաղթանակների ու ձեռքբերումների թիվը շատ է՝ «Եստյուդ 2018»-ի երկրորդ կարգի դափնեկիր, «Արտ մյուզիք 2021»-ի երրորդ կարգի դափնեկիր, «Արտ մյուզիք 2022»-ի երրորդ կարգի դափնեկիր, «Եստյուդ 2022»-ի առաջին կարգի դափնեկիր, «ART PANORAMA 2022» միջազգային մրցույթ-փառատոնի հատուկ մրցանակ:

Մայրաքաղաք Երևանում անցկացված հենց այս փառատոնում հաղթելով՝ վաստակեց իրավեր՝ մասնակցելու Մոսկվայում անցկացվող «ART PANORAMA 2022» միջազգային մրցույթ-փառատոնին, որտեղ մրցակցում էին շնորհալիներ 16 երկրից: Լինելով Հայաստանից միակ մասնակիցը՝ այդ հեղինակավոր փառատոնին ներկայացրեց ոչ միայն Քաջարանի արվեստի դպրոցը, այլ Նաև Հայաստանը:

Ամփոփելով արժանացավ առաջին կարգի մրցանակի: Մոսկվա այցի շրջանակներում չսահմանափակվեց փառատոնի մասնակցությամբ, նրան հրավիրեցին հայկական համայնքի մի շարք օջախներ, ուսումնական կենտրոններ և շնորհեցին պատվոգրեր ու շնորհակալագրեր՝ Հայաստանի անունը բարձր պահելու համար:

Թեև այս տարի Անժելիկա Ենգիբարյանն ավարտում է ուսումնառությունը Քաջարանի արվեստի դպրոցում, բայց համոզված ենք՝ նրա հաղթարշավը դեռ կշարունակվի:

**ԱՐԹՈՒՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ՔԱՋԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ
ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ ԲԱԺՆԻ ԴԱՍԱՏՈՒ**



Ո՞րն է այս աղջնակի հաջողության գրավականը: Միանշանակ կարող ենք պնդել՝ անսահման աշխատասիրությունն ու ձգտումը՝ լինել լավագույնը:

Գունաշխարհի թարգմանը՝ Սիսիանից

Գեղեցիկ է ասված՝ «Ստեղծագործ մարդն աշխարհին նայում է նկարչի աչքերով, լսում երաժշտի ականջներով, զգում գրողի հոգով...»: Անուրանալի ճշմարտություն է, որ գույները խոսում են հատուկ լեզվով, ունեն իրենց բացառիկ աշխարհը...

Փորձելու ենք «ներխուժել» սիսիանցի փողբիկ նկարչուհի Անի Հովհաննիսյանի զարմանահրաշ աշխարհը...

- Ողջո՛ւյն, Անի՛:
- Ողջու՛յն, ընկե՛ր Թադևոսյան:
- Անի՛, ուզում եմ գրուցենք քո սիրելի աշխարհի՝ նկարչության մասին:
- Սիրով:
- Եկ սկսենք ...
- Եթե ներկայանալու լինես, ի՞նչ կցանկանայիր, որ ընթերցողն իմանար քո մասին:

- Ես Անի Հովհաննիսյանն եմ, 14 տարեկան, Սիսիանի № 2 հիմնական և գեղարվեստի դպրոցների սանը:

Կարծում եմ փոքր-ինչ դժվար է ինքը քեզ ներկայացնել (ժպտում է), դե... ունեմ շատ նախասիրություններ՝ սիրում եմ Նաև երգել, ընթերցել...

- Ինչո՞ւ նկարչություն, քո արվեստի համար ու՞մ ես շնորհակալ:

- Առաջին հերթին՝ շնորհակալ եմ գեներին (պապս ու հայրս Նույնպես նկարում են), հետո՝ ծնողներին, որ եղան հետևողական, ճիշտ ուղղորդեցին, և ես հայտնվեցի ճիշտ տեղում Սիսիանի գեղարվեստի դպրոցում, որտեղ հմուտ ուսուցիչներ Նիկողոսյանի, Ալեքսանյանի, Ոսկանյանի շնորհիվ հայտնաբերվեց նկարելու ծիրքս, նրանք էին, որ ներշնչեցին ինձ, «գիներցին» նկարելու գաղտնիքներով մինչ այսօր...

- Ո՞վ կամ ի՞նչը կարող է դառնալ քո ոգեշնչման աղբյուրը:

- Ստեղծագործել՝ նշանակում է ունենալ առանձին աշխարհ այս մեծ աշ-

խարհում: Ստեղծագործելիս ոչինչ չես ծրագրում, ամեն ինչ ծնվում է ներշնչանքի պահին:

Ստեղծագործելու պահին ինձ զգում եմ սիրելի մարդկանցով շրջապատված, ուժ եմ ստանում նրանցից: Ոգևորման հորդահոս աղբյուր է Նաև բնությունը...

- Եղե՛լ եմ պահեր, երբ ծախողել ես հերթական գործը...

- Նկարելու ընթացքում, անշուշտ, եղել է, որ ակնկալված արդյունքը չեմ ստացել, բայց հաջորդ պահին անասելի խանդավառությունը կրկին ինձ ուղեկցել է գույների աշխարհ ու...
- Գույներ, գույներ, գույներ... Թո սիրած գույները...

- Հիմնական և երկրորդային գույների համադրումից են ծնվում նկարներս, որտեղ բացահայտ երևում են իմ աշխարհը, իմ հոգեվիճակը...
- Անի՛, բազմիցս քո աշխատանքները զարդարել են տարբեր ցուցահանդեսներ, իսկ ուրիշ ձեռքբերումներ...

- Այո՛, դուք ճիշտ եք, մասնակցել եմ շատ ցուցահանդեսների, այժմ էլ հարազատ կրթօջախում տնօրենությունը նախաձեռնում է կազմակերպել իմ անհատական ցուցահանդեսը:

- Նկարելը օգնելու՞ է, որպեսզի իրականանան քո նվիրական երազանքները:
- Իհարկե, երազում եմ հագուստի մոդելավորող դառնալ:
- Ամփոփելի է, որ ունես ինքնատիպ ոճ, հարուստ ներաշխարհ... Կերպարվեստում քո սիրած ժանրը...

- Բնանկար, նատյուրմորտ, դիմանկար, ինչպես Նաև Եսթիգներ ստեղծելը...

- Ի՞նչ է արվեստը...

- Իմ պարագայում՝ գույնի ու լույսի համադրություն...

Շատ եմ սիրում հատկապես ծաղիկներ նկարել, տխրում եմ, երբ դրանք



թողնում են, այդ պատճառով ուզում եմ, որ այդ քնքուշ էակները գոնե կտավի վրա հավերժվեն...

- Անի՛ Հովհաննիսյան, ի վերջո, կապո՞ւյտը, կարմի՞րը, կանա՞չը, սպիտա՞կը...

- Գունաշխարհն իմ տարերքն է՝ վառ, գեղեցիկ, պայծառ, գունեղ, լուսավոր և բազմերանգ...

- Ուրեմն՝ քո գունաշխարհում թող գոյատևեն կարմիրը, կապույտը, կա-

նաչը, սպիտակը՝ որպես կյանքի և ուժի, հոգևորի ու հավերժի, գեղեցիկի ու պատվավորի, լույսի և ուրախության խորհրդանիշներ, նոր ուժով հնչի Անի Հովհաննիսյանի գունային համադրությունների սիմֆոնիան՝ ի նշան լույսի...

Անի Հովհաննիսյանի բազմաթույր գունաշխարհն ի մի բերեց, (թարգմանեց) և ընթերցողի դատին հանձնեց Եվելինա Թադևոսյանը՝ Սիսիանից:

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ. ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ալվանք գյուղի սկսնակ Նկարչուհի Վարդուհի Դանիելյանը

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏ 26

Նվիրել:

Վարդուհու ընտանիքն ամեն ինչ անում է, որ երիտասարդ Նկարչուհին անդադար ստեղծագործի:

Նկարելուց խաղաղվում ու նոր երազանքներ է ուրվագծում, որոշել է ուսումը շարունակել մայրաքաղաքում գեղարվեստի ակադեմիայում: Վերջերս սկսել է Նաև հազուստների վրա Նկարել ու վաճառել, երազանք ունի՝ հազուստի դիզայներ-մոդելավորող դառնալ: Որոշել է, ուր էլ լինի, անպայման վերադառնալու է հայրենի Ալվանք և իր արվեստը փոխանցելու համապոլուզացի փոքրիկներին:

ԱՐՓԻ ԱՐԱՄՅԱՆ



Այցելությունն սյունեցի փոքրիկների զարմանահրաշ մոլորակ

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏ 3

Ծունեության որոշ դրվագներ էլ համարից դուրս թողեցինք գիտակցաբար, քանզի դրանց անդրադարձել էինք հանդեսի խմբագրի համարներում: Նկատի ունենք տիկնիկային թատրոնը. այդ ոլորտում Սյունիքում ուշադրության արժանի խմբեր ունենք, հանրաճանաչ դեմքեր:

Ըստ պատշաճի չանդրադարձանք պարարվեստին՝ Նկատի ունենալով, որ ընթացիկ տարում պարբերականի առանձին համար կնվիրենք արվեստի այդ ոլորտում սյունեցիների ծեռքերումներին:

Նույն նկատառումով չանդրադարձանք մանկական գրադարաններին, որոնք մեծ առաքելություն ունեն երեխաների գեղագիտական դաստիարակության գործում. հանդեսի հերթական համարը կնվիրենք գրադարանային գործի դրվածքին:

Համարի մի առանձնահատկության մասին ևս. Սյունեցի գրողներից շատերն են ստեղծագործել մանուկների համար և մանկական թեմաներով:

Ուշագրավ է փաստը, որ հայոց մեջ առակների առաջին ժողովածուն՝ «Աղվեսագիրք» վերնագրով, աշխարհաբարի է փոխադրել մեր մեծ հայրենակից Ակսել Բակունցը:

Ի դեպ, ժողովածուի մեջ հիմնականում Վարդան Այգեկցու կամ Նրան վերագրվող առակներն են:

Ոչ պակաս ուշագրավ է փաստը, որ Ակսել Բակունցը գրական աշխարհ է մտել «Հիմար մարդը» հեքիաթով:

Մանուկների համար ստեղծագործություններ է հեղինակել արձակագիր Սերո Խանգադյանը: Գեղարվեստական բարձրաճաշակ այդ ստեղծագործությունները տեղ են գտել «Ավանդատուն» գրքի մեջ, որից մի քանի փոքրիկ նմուշ ներկայացվում է սույն համարում:

Ներկայացնում ենք Նաև Էդուարդ Չոխրաբյանի, Մարի Առաքելյանի մանկական ստեղծագործություններից:

Ձգտել ենք համարը գրավիչ դարձնել հատկապես երեխաների համար. այդ իսկ նպատակով առանձին նյութեր ենք գտնել փոքրիկների ընթերցանության համար: Դրանք ընդգրկված են «Մանկապատանեկան ընթերցանության ոսկե ֆոնդի» վերտառությամբ բաժնում:

“

Հանրահայտ մի իրողության մասին. մեր երեխաների մեծագույն մասը՝ առաջին դասարանից սկսած, ժամերով համացանցում է և հաղորդակցվում է ամենատարբեր (երբեմն էժանագին) արժեքների հետ՝ երգ, պար, ֆիլմ, կենցաղային պատմություններ...

”

«Ոսկե ֆոնդի» փոքրիկներին առաջարկում ենք Ներսես Շնորհալու հանելուկները, Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի առակները:

Սյունյաց աշխարհում, հայոց ավանդակարգի համաձայն, բացառիկ կարևորություն է տրվել երեխաների դաստիարակությանը: Եվ այդ կարևորությունն այն աստիճանի է բարձրացված եղել, որ երեխաների դաստիարակության տեսլականն արտացոլվել է մեր երկրամասի բազմաթիվ քանդակագործական նմուշներում, որոնցից մի քանիսին կարող եք ծանոթանալ հանդեսի սույն համարում:

Նաև լեգենդներ են հյուսվել մանկական թեմաներով, որոնցից մեկը Նույն պես առաջարկում ենք ընթերցողին՝ Օխտն օրորոցի լեգենդը (Քարահունջից):

Սյունիքում դարերի ընթացքում ստեղծվել-ծնվել են մատաղ սերնդին արժևորող սրբավայրեր, որոնցից մեկն Ինը մանուկ աղբյուրն է՝ սույն համարում ներկայացվող:

Մանուկների գեղագիտական դաստիարակության հարցերը, որքան հասկացանք համարի նախապատրաստման ընթացքում, բազմազան են: Եվ, ցավոք, այդ ամենը հանդեսի մեկ համարում ընդգրկելը հնարավոր չէր:

Մենք տեսանք Նաև, որ երեխաների գեղագիտական դաստիարակության ոլորտում լուրջ խնդիրներ, Նաև բացթողումներ ունենք՝ պայմանավորված մեր ներկա ազգային կացությամբ, հնարավորությունների անբավարարությամբ:

Օրինակ, դուրս մնացին գեղարվեստական մանկավարժությանն առնչվող բազմաթիվ հարցեր. գեղագիտությանն առնչվող ի՞նչ առարկաներ են դասավանդվում հանրակրթական դպրոցներում և որքա՞ն ծավալով, ինչքանո՞վ են մեր կրթական ծրագրերը կապված մշակույթի հետ, գործնականում ի՞նչ հարաբերություն ունեն կրթությունը և մշակույթը:

Խոսակցության առանձին նյութ կարող էին լինել գյուղական բնակավայրերը, որտեղի երեխաներն իրենց գեղագիտական նախասիրությունները փարձեց դրսևորելու հնարավորություն չունեն:

Մենք արդարացիորեն (առկա բոլոր թերություններով ու բացթողումներով հանդերձ) մեծ հույսեր ենք կապում կրթական ոլորտի հետ՝ հանրակրթական դպրոց, երաժշտական և արվեստի դպրոցներ, մշակույթի կենտրոններ, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ... Բայց արդյո՞ք կարողանում ենք այդ հաստատություններն ապահովել համապատասխան մանկավարժական կադրերով, ովքեր էլ կիրականացնեն մշակութային քաղաքականությունը փոքրիկների շրջանում: Բազմաթիվ օրինակներ ունենք, երբ հանրակրթական դպրոցում գեղագիտությանն առնչվող դասաժամերը տրվում են այլ առարկաների ուսուցիչների, ովքեր պարզապես դասաժամերի խնդիր են ունենում, ովքեր պատշաճ գիտելիքներ չեն ունենում տվյալ առարկայից:

Երեխաների գեղագիտական դաստիարակությանը, նրանց ճաշակի

ծնավորմանը տասնամյակներ շարունակ լրջագույն ազդել ենք գեղարվեստական կերպավորման միջոցներով վերարտադրված գործողություններով: Նաև այդ հանգամանքն է հիմք ծառայել ընդհանրացնելու, որ կինոն ամենակարևորն է արվեստի բոլոր տեսակների մեջ: Ընդ որում՝ կինոն հատկապես անփոխարինելի է եղել ու մտնում փոքրիկների համար՝ և՛ վիզուալ առումով, և՛ գեղագիտական տեսակետից: Ի՞նչ վիճակում է մեզանում կինոարտադրությունը, ավելի ստույգ՝ մանկապատանեկան տարիքի երեխաներին առնչվող կինոարտադրությունը:

Արժեք առանձին անդրադառնալ կինոարվեստի՝ այս դեպքում մեզ շատ հետաքրքրող տեսակին՝ մուլտիպլիկացիոն կինոյին:

Մանկական ներկայացումների դերը մեր թատերական արվեստում... Դա իսկապես բացառիկ ոլորտ է, եթե խոսում ենք երեխաների գեղագիտական դաստիարակության մասին: Ունե՞նք համակարգված քաղաքականություն այդ ոլորտում:

Հանրահայտ մի իրողության մասին. մեր երեխաների մեծագույն մասը՝ առաջին դասարանից սկսած, ժամերով համացանցում է և հաղորդակցվում է ամենատարբեր (երբեմն էժանագին) արժեքների հետ՝ երգ, պար, ֆիլմ, կենցաղային պատմություններ...

Եվ գաղտնիք չէ, որ համացանցն այսօր որոշիչ ազդեցություն ունի երեխաների ճաշակի ծնավորման, մասնագիտական կողմնորոշման և հետաքրքրությունների ծնավորման վրա:

Մենք կողմնակից չենք այդ ամենի դեմ պայքարելուն, քանզի դա (խոստովանենք) և՛ անիմաստ է, և՛ անհնար: Մենք Նույնիսկ չենք ասում համակարգել ու կառավարելի դարձնել այդ ոլորտը, ինչը Նույնպես հնարավոր չէ:

Մենք ասում ենք՝ գուցե Նույն այդ համացանցում հակակշիռներ ստեղծենք՝ մեր դավանած արժեքներով, մեր պատկերացումներով՝ գրավիչ, մատչելի...

Եվ մի հարց, որ հույժ կարևոր է՝ հաջողո՞ւմ ենք արդյոք ազգային-քրիստոնեական արժեքների գերակայություն ապահովել մանուկների գեղագիտական դաստիարակության համակարգում:

Ընթացքում մի հարց էլ ծագեց. արդյո՞ք ողջամիտ չէր լինի Սյունիքի մարզում հիմնադրել մանկական որևէ պարբերական, որի էջերում հետևողականորեն կլուսաբանվեին մեր երեխաների գեղարվեստական դրսևորումները, որոնք, բարեբախտաբար, մեծածավալ են ու բարձրաճաշակ...

●



Նախկինում պայմանները հեռու էին բավարար լինելուց, դպրոցը հիմնովին նորոգվել է «Չաարատ Կապան» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսավորմամբ (գլխավոր տնօրեն՝ Դավիթ Թովմասյան) և Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի աջակցությամբ:


Կապանի գեղարվեստի մանկական դպրոցում նոր ժամանակներ են

Կապանի մանկական գեղարվեստի դպրոց մտնելիս առաջինը «բախվում» ես միջանցքի պատերին փակցված դիպլոմներին, որոնց տարբեր տարիների արժանացել են կրթօջախի սաները միջազգային մրցույթ-փառատոներում և ցուցահանդեսներում: Իսկ կրթօջախի լաբորատորիայում և պահեստում արդեն ծանոթանում ենք սաների խեցեգործական և այլ աշխատանքներին, որոնք որոշակի պատկերացում են տալիս պատանի ստեղծագործողների նախասիրությունների մասին:

Դեռահասների գեղագիտական դաստիարակության դարբնոց է Կապանի մանկական գեղարվեստի դպրոցը՝ ծննդյան տարեթիվը՝ 1972 թվական: Առաջին տնօրենը գեղանկարիչ Վահրամ Խաչատրյանն էր: 1973-ից մինչև 1993-ը կրթօջախը ղեկավարել է Վանյա Գրիգորյանը, այնուհետև՝ մինչև օրս՝ Ստեփան Դավթյանը, ով 1979 թվականից դպրոցում քանդակագործություն է դասավանդում:

Ստեփան Դավթյանը Կապանա տան երևելի արվեստագետներից է: Ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1978-ին՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի մոնումենտալ քանդակի բաժինը: Խորհրդային բանակում ծառայելիս (սահմանապահ զորքեր) բազում քանդակներ է արել, որում արտացոլված են սահմանապահների անակնկալներով լեցուն ծառայությունը, ավագ սերնդի սահմանապահներին: 1973-ից մասնակցում է հանրապետական, միջազգային և այլ ցուցահանդեսների: 1991-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է: Ստեղծագործությունները գտնվում են Ռուսաստանի, Վրաստանի, Լիտվայի, Լատվիայի, Իրանի, Լիբանանի, ԱՄՆ-ի և այլ երկրների մասնավոր հավաքածուներում:

Կրթօջախում դասավանդվում է մասնագիտական վեց առարկա՝ գունանկարչություն, գծանկարչություն, հաստոցային կոմպոզիցիա, դեկորատիվ արվեստ, արվեստի պատմություն, քան-



«Վերջապես ունեցանք դպրոց, որ համապատասխանում է ժամանակակից պահանջներին: Փայտով ջեռուցվող վառարաններ էին տեղադրված, 27 տարի փայտ էինք վառում, վառելափայտն էլ տարեցտարի թանկանում էր, բայց երեխաներին հո ցրտի մեջ չէի՞նք թողնելու: Այլ խնդիր կար, երբեմն ծուխը լցվում էր սենյակները, ճարահատյալ պատուհանները բացում էինք, այդ դեպքում էլ ցուրտն էր ներս խուժում: Փառք Աստծո, այդ ամենն անցյալում են մնացել: Հիմնանորոգման հետ մեկտեղ թրծման վառարան ունեցանք, որ մեր վաղեմի ցանկություններից էր»

դակագործություն: Տարածքով պայմանավորված՝ այժմ կրթօջախում 51 սան է դասեր առնում, հաղորդակցվում գեղեցիկի աշխարհին: Տեղին է հիշատակել նրանց դասավանդողներին՝ խեցեգործություն, քանդակագործություն դասավանդում է Ստեփան Դավթյանը, գունանկարչություն, գծանկարչություն, քանդակագործություն՝ Էդգար Ստե-

փանյանը, հաստոցային կոմպոզիցիա, գծանկար և կոմպոզիցիա՝ Ռաֆայել Առաքելյանը, հաստոցային կոմպոզիցիա, արվեստի պատմություն, գունանկարչություն՝ Լուսինե Բաբայանը, նաև տեխնոլոգ-ձևավորող՝ Անի Ներսիսյան ու լաբորանտ, կադապարող՝ Աստղիկ Առաքելյան:

Նախկինում պայմանները հեռու էին

բավարար լինելուց, դպրոցը հիմնովին նորոգվել է «Չաարատ Կապան» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսավորմամբ (գլխավոր տնօրեն՝ Դավիթ Թովմասյան) և Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի աջակցությամբ:

2020 թվականի սեպտեմբերից պարամունքներն անցնում են հիմնանորոգված կրթօջախում: Դպրոցի հիմնադրումից մոտ կես դար անց բարեհարմար պայմաններ ունեցան:

«Վերջապես ունեցանք դպրոց, որ համապատասխանում է ժամանակակից պահանջներին: Փայտով ջեռուցվող վառարաններ էին տեղադրված, 27 տարի փայտ էինք վառում, վառելափայտն էլ տարեցտարի թանկանում էր, բայց երեխաներին հո ցրտի մեջ չէի՞նք թողնելու: Այլ խնդիր կար, երբեմն ծուխը լցվում էր սենյակները, ճարահատյալ պատուհանները բացում էինք, այդ դեպքում էլ ցուրտն էր ներս խուժում: Փառք Աստծո, այդ ամենն անցյալում են մնացել: Հիմնանորոգման հետ մեկտեղ թրծման վառարան ունեցանք, որ մեր վաղեմի ցանկություններից էր», - վերհիշում է Ստեփան Դավթյանը և հավելում, որ նախկինում մեծ տեղ էր հատկացվում դեկորատիվ-կիրառական արվեստին՝ դրվագում, փայտափորագրություն, երբ թրծման վառարան են ձեռք բերել, խեցեգործությունն առաջին պլան է դուրս եկել:

Դպրոցի մասին որոշ տեղեկություններ քաղում ենք կրթօջախի անցած ուղու մասին պատմող տեսահոլովակից. գոյության ընթացքում Կապանի գեղարվեստի դպրոցն ունեցել է ավելի քան 693 շրջանավարտ, նաև երևելի անուններ կան նրանց մեջ՝ ճարտարապետներ Աշոտ Աստուխյան (Մոսկվա), Արեգ Մինասյան (գեղանկարիչ Լորիկ Մինասյանի որդին), գեղանկարիչներ Հրանտ Դանիելյան, Ռուբիկ (Ուբակ) Կոստանդյան, Արմեն Գասպարյան (Սանկտ Պետերբուրգ), Ռոբերտ Հովակիմյան և ուրիշներ: Դպրոցում դասավանդել են Մարատ Նուրիջանյանը, Ռոբերտ Կամոյանը, Վահրամ Խաչատրյանը, Մուրադ Հարությունյանը, Ռաֆիկ Ավագյանը, Սեյրան Աղավեսյանը, Ռոմեն Դոնյանը, Նելլի Գասպարյանը, Սուսաննա Ավետովան, Կապանում ճանաչված այլ արվեստագետներ: Հետագայում դպրոցի շրջանավարտները միշտ էլ երախտագիտությամբ են արտահայտվել իրենց արվեստագետ դասավանդողների վերաբերյալ, ովքեր իրենց համար ճանա-



«ՇՈՒՂԻԻ ավերված Սուրբ Ղազանչեցոցը կվերականգնվի իմ Նախագծով», -

երագում է Գեղագիտության ազգային
կենտրոնի Գորիսի մասնաճյուղի սան
Յայկ Շեգունցը

Ո՞վ լինի, որ տեսնի Սյունիքի հնությունները՝ Ուխտասարի քարերին Նախամարդու թողած ժայռափոր քանդակները՝ ընծառնած թե ոնգեղջյուր, գրուցի լեռնաշխարհի խորխտ մարդկանցով ու վեհ պատմություններով ազդեցված բազում ավանդապատումներ իրենց մեջ ամբարած բնիկերի՝ ամրակուռ հայերի հետ, վայելի բնության գեղատեսիլ վայրերը՝ Սոսիների պուրակ, Վահանավանք, Տաթև, Պորտաքար, Զարահունջի հնագույն աստղադիտարան, զգա լեռներն ի վար հոսող սառնորակ աղբյուրների ու քջջան առվակների լուսապայծառ ջրերի հայելային քաշաթխպոտ-արևային անդրադարձը, անվերջ հիանա կարմրախայտոտ գետակներով ու առվակներով, փրփրաղեգ Որոտանով ու Մայր Արաքսով, մոտիկից տեսնի ու շոշափի նորոյա պատմության անջնջելի հետքերը՝ անմահ Նժդեհի Կապուռջուղն ու Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատին «թիկնած» թշնամու մահաբեր «Գրադ»-ի համր վկա-հրթիռը, ու... չլինի ստեղծագործող, ինքն իր հետ կռիվ տվող պատմիչ, փոխափա, ըմբոստ ոգի կրող մտավորական-հռետոր, «ապստամբ» լրագրող, գրող, երգիչ, նկարիչ...

Գորիսի նկարիչներից պարտքս է հիշատակել՝ Վանիկ Արզումանյան, Ռազմիկ Արզումանյան (ինքնուս), Նվարդ Բալասանյան, Մերի Բունիաթյան, Անդրանիկ Բակունց, Հրանտ Բաղդադյան (բրուտագործ-նկարիչ), Նարա Դոլունց, Մարտուն Զաքարյան, Մայիս Զադայան (ինքնուս), Համետ Թադևոսյան (ինքնուս), Յաշա Խաչյան (ճարտարապետ-նկարիչ), Անի Կրեչյան, Համետ Հարությունյան, Լորետա Հակոբյան, Լաուրա Ղազարյան, Միշա (Միքայել) Ղուկասյան (նկարիչ-քանդակագործ), Ժիրայր Մարտիրոսյան, Արամ Մաշուրյան, Լիլիթ Մեծումյան, Արա Միքայելյան,



Հինգ տարեկանից սկսած՝ նկարչությունն Արամի տարերքն էր։ Սերն արթնացել է ընտանեկան միջավայրում. արվեստասեր ծնողները հաճախ էին հետաքրքիր պատմություններ պատմում Թերլեմեզյանի, Սարյանի, Քոչարի, Զարդարյանի, Իսաբեկյանի մասին։ Լուսահոգի հայրը՝ ֆիզիկայի գծով գիտությունների թեկնածու Արմեն Մաշուրյանը, գիտական թեզը պաշտպանում էր Սանկտ Պետերբուրգում։

հայր և որդի Գուրգեն (Գուրոս) և Գևորգ (Ժորա) Պարոնյաններ, Հենրիկ Սիրավյան, Գևորգ (Ժորա) Սարգսյան, Ստեփան Օհանջանյան, Գագիկ Օրդյան ...

Արվեստի ու արհեստի հազար ու մի ուղղության տեր Սյունիքից այս անգամ առանձնացրի Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղը՝ որպես իրականությունն արվեստի լեզվով վերարտադրող երիտասարդ սերնդի յուրօրինակ դարբնոց, որտեղ մոտ տասը տարի

առաջ ուսուցանվում էր... քիչ թվով աշակերտ, իսկ այսօր՝ մոտ 200 սան։

Ցանկացա ծանոթանալ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղի առօրյային, աշխատանքային պայմաններին, ներկա գտնվել պատանի նկարիչների դասաժամին, մոտիկից շփվել նրանց հետ, զրուցել, իմանալ նրանց ձեռքբերումների ու ակնկալիքների մասին։ Ծեշտարդումս պետք է ուղղված լինե՞ր մասնաճյուղի առավել շնորհալի

սաներին։

Մասնաճյուղի տնօրեն Արամ Մաշուրյանն առաջարկեց կենտրոն հաճախող որոշ սաների հետ հանդիպել իր արվեստանոցում։ Նրանք հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու և նկարչության ասպարեզում իրենց մասնագիտական հմտությունները խորացնելու նպատակով երեկոյան ժամերին այստեղ անցնում են արտաժամյա պարապմունքներ։

Արվեստանոց այցելեցի այն պահին, երբ երեք դպրոցականներ՝ Հայկ Շեգունցը, Զարահունջից, Մարիամ Տեր-Մկրտչյանն ու Էննի Մելքումյանը՝ Գորիսից, նստած իրենց նկարչական շտապիկի՝ մոլբերտի առաջ, ստեղծագործում էին։

Դեպի արվեստանոցի շուրջբոլորը «նստած» առաջին հայացքս տպավորիչ էր. Արամ Մաշուրյանի նկարած արդեն պատրաստի բազմաթիվ կտավներ խնամքով շարված էին կողք-կողքի. նրանց մեջ աչքի էր զարնում Արամի պապի՝ Գորիսում հարգված Մխիթար Մաշուրյանի յուզաներով դիմանկարը։ Մի քանի սեղանիկների վրա խնամքով դրված էին եռանկյունաչափական մարմիններ՝ բուրգ, գունդ, գլան... Գետնին՝ մի անկյունում, նկարելու համար նախատեսված՝ հին հունական դիցաբանության հերոսների ու պատմական դեմքերի դիմաքանդակներ։

Հենց սաների ներկայությամբ գրուցում եմ Արամի հետ։ Գորիսում համընդհանուր ճանաչում ունեցող արվեստագետ-մտավորական, դասախոս, մանկավարժ-նկարիչն իր մասին բարձրագույն խոսքերից նեղվում է։

- «Ապշեցուցիչ վրձնահարված», «Հիանալի կտավ», «Տաղանդավոր նկարիչ», այս մակդիրների հանդեպ պետք է զգույշ վարվել։ Կենտրոնում «ուսուցիչ-աշակերտ» հարաբերությունը ներդաշնակ է, - ասում է նա։ - Ես երբևէ խնդիր չեմ դնում մրցակցել աշակերտի հետ։ Նրանց պետք է ուսուցանել և թաքնված հնարավորությունները բացահայտել։ Նրանց կարծիքն արժեքավոր է։ Իմ կատարած աշխատանքի վերաբերյալ հաճախ եմ հարցնում իրենց կարծիքը։ «Ստեղծագործական քննադատություն ստեղծագործության հանդեպ», - այսպես կրկնապարծնում նրանց մոտեցումը, որը ողջունելի է։

Հինգ տարեկանից սկսած՝ նկարչությունն Արամի տարերքն էր։ Սերն արթնացել է ընտանեկան միջավայրում. արվեստասեր ծնողները հաճախ էին հետաքրքիր պատմություններ պատմում Թերլեմեզյանի, Սարյանի, Քոչարի, Զարդարյանի, Իսաբեկյանի մասին։ Լուսահոգի հայրը՝ ֆիզիկայի գծով գիտությունների թեկնածու Արմեն Մաշուրյանը, գիտական թեզը պաշտպանում էր Սանկտ Պետերբուրգում։ Փոքրիկ Արամն ակնապիշ նայում էր հոր բերած՝ Էրմիտաժի ու Տրետյակովյան պատկերասրահի ցուցանմուշների շքեղ բացիկները և ուշադիր լսում Վերաձննդի Նշանավոր նկարիչ-քանդակագործների ստեղծագործությունների բնօրինակից ստացած նրա տպավորությունները։

...Մտքով հետ եմ գնում մոտ 25 տարի, երբ առաջին անգամ Գորիսում նկարչական տուն էր. նկարիչների սիմպոզիումի մասնակից Հայաստանի բոլոր նկարիչների համար Գորիսն ասես գտնված գանձ էր, իսկ փոքրիկ Արամի համար՝ նրանց ներկայությունը երազ՝ իրականության մեջ։ Մասնագիտությանս բերումով նրանց մասին ռեպորտաժ պատրաստեցի, նրանց հետ եղա Հին Գորիսում, ուր յուրաքանչյուր նկարիչ, միմյանցից հեռու, խիտ բնապատկերների շարքում իր համար գոլորտիկ մի վայր էր ընտրել նկարելու համար (հետագայում նրանք մեկական նկար նվիրաբերեցին Գորիսի պատկերասրահին)։

Սիմպոզիումի օրերին լուսահոգի արձակագիր Էդուարդ Զոհրաբյանի հետ նրանց հյուրընկալեցի մեր բակում։ Փոքրիկ Արամի՝ նկարչության հանդեպ ունեցած մեծ սիրո ու աշխատասիրության մասին



Եին խոսում Ստեփան Մինասյանը, Արարատ Խանգաղյանը, Մարտին Հակոբյանը, Էդուարդ Աբաջյանը, Հենրիկ Վարդենիկյանը, Արմեն Աթայանը, Համլետ Ասատրյանը (Նրանցից ոմանք, ավա՛ր, այսօր չկան): Արամը Նրանցից հենց Համլետ Ասատրյանին է համարում իր մասնագիտական «կնքահայրը»։ Նկարիչ դառնալու գործում վճռորոշ էր Նրա դերը: Այսօր Արամ Մաշուկյանի և Համլետ Ասատրյանի միջև մտերմիկ բարեկամությունը փոխարինվել է Գորիսի տեսարժան վայրերում հաճախակի իրականացվող համատեղ «նկարչական սիմպոզիումին»։

Գրեթե ամեն տարի ամռանը Նրանք բնապատկերներ են նկարում այստեղ: Անցյալ տարի երկուսով Հին Գորիսում նկարում էին... Ժայռերի միջև կաճանով թռչան հետ անցնում էր մի ծեր կին: Նրանք, նկատելով նկարիչներին, մոտենում են, կանգնում, դիտում նկարները:

- Եղպես էլ ոչ մի բան Նորմալ չսովորեցիր: Տես, ո՞նց են նկար «քաշում», գոնե դա՛ սովորի,- թռռանը հորդորում է տատը: Տատն ու թռռը հեռանում են, իսկ Համլետն ու Արամը քահ-քահ ծիծաղում են...

Գեղագիտության ազգային կենտրոն



Հայկ Շեգունց

Նի Գորիսի մասնաճյուղը հիմնադրվել է արվեստաբան Հենրիկ Իգիթյանի նախաձեռնությամբ, 1982թ: Մասնաճյուղի երկարամյա (32 տարի) տնօրենն էր նկարիչ Մարտին Զաքարյանը: Արամ Մաշուկյանը մասնաճյուղը ղեկավարում է 2014 թվականից: Կենտրոնի առանձնահատկություններից մեկն այն է, որ գերծ էր այն ժամանակների համար բնորոշ խիստ կանոնագրային կրթական ծրագրերից: Այն նախադրյալ ստեղծեց սաների Նոր հնարավորությունների, ազատ մտածելակերպի բացահայտման ու վերելքի համար:

Արվեստանոցային և կենցաղային պայմանների բարելավմանը զուգընթաց՝ մասնաճյուղում ներգրավվել են մեծ թվով նկարիչ-ուսուցիչներ, որոնց շարքը համալրել են Նաև Նախկին սաները: Այսօր մոտ 200 դպրոցահասակ երեխայի կերպարվեստի և կարպետագործության դասերն ուսուցանում են Արամ Մաշուկյանը, Սոնա Արզումանյանը, Լիլիա Լազրյանը, Մարիամ Արզումանյանը, Դիանա Եղիազարյանը, Հասմիկ Բադալյանը: Ուսուցիչները երեխաների մեջ սերմանում են սեր գեղեցիկի հանդեպ, խթանում Նրանց մեջ առկա ստեղծագործելու ջիղը, խրախուսում ազատ ստեղծագործելը, օգնում մասնագիտական կողմնորոշման հարցում:

Մասնաճյուղի սաներից Դիանա Յուլյանն ու Աշխեն Սկյանը դպրոցն ավարտելուց հետո նախընտրել են ուսումը շարունակել Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Այժմ Նրանք կերպարվեստի բաժնի 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողուհիներ են:

Գորիսից քարագործ վարպետ Կարենի և ուսուցչուհի Լիանայի դուստր, 17-ամյա Էննի Մելքոնյանը, ով հիմա արվեստանոցում ծովի փրփուրից ծնված սիրո աստվածուհի Աֆրոդիտեն է նկարում, թեև դպրոցում նախապիրած առարկաներ ունի՝ հայոց լեզուն և կենսաբանություն, բայց և Նրա որոշումը հաս-

տատ է. պետք է ուժերը փորձի այնտեղ, որտեղ իր երկու ընկերուհին են: Կենտրոնի ակտիվ սան դառնալուն օգնել են դպրոցի կերպարվեստի ուսուցիչներ Ռուզաննա Շահնազարյանն ու Նարինե Դյուլունցը:

- Նրանք իմ մեջ սերմանել են սեր արվեստի նկատմամբ: Նրանց դասավանդման ոճը յուրահատուկ է, մեթոդը՝ ուսուցանող, սեփական թաքնված հնարավորությունները բացահայտող, - ասում է Էննին: - Մեծ բավականություն է՝ բարձրաճաշակ դասական երաժշտության մեղմ հնչյունների ներքո ստեղծագործել կենտրոնում: Գեղարվեստի ակադեմիայի ուսանողուհի Դիանան ոչ միայն սրտացավ ընկերուհի է, այլև լավ խորհրդատու: Երբ ամռանը գալիս է Գորիս, Վարարակն գետի ափին միասին նկարում ենք բնապատկերներ: Հաճախ եմ հեռավար կապով Նրան ցուցադրում Նոր կտավիս լուսանկարը, որի շուրջ քննարկում ենք ծավալում: Ինքն էլ իր ստեղծագործությունների թեմաներն է ներկայացնում ինձ: Նոր մտքեր են ի հայտ գալիս, Նոր մտահղացումներ են ծնվում: Ամեն ինչ շատ լավ է ընթանում:

Մարիամ Տեր-Մկրտչյանն արվեստանոցում մատիտով գունդ է գծանկարում...

- Ընդամենը մի քանի օր է, ինչ հաճախում եմ արվեստանոց: Ավելի բարդ գործեր ստեղծելու ճանապարհին սա կարելի է սկզբնական աշխատանք համարել: Յուրաքանչյուր պարապմունքից հետո ձեռքերս ավելի վարժ և հստակ են գործում, և գունդը, ինչպես տեսնում եք, կամաց-կամաց ստանում է ավարտուն տեսք, - ասում է Նա:

Հայկ Շեգունցն ընդգծված կերպար-բնավորություն խորհրդանշող դիմաքանդակ է նկարում: 12-րդ դասարանի աշակերտի համար, իմ բնորոշմամբ, ապագա անհատական ցուցահանդեսին պատշաճող գործ է ստեղծվում: Այն շատ նման է նկարչական դպրոցում իմ ուսուցանած տարիների նույնանման քանդակին. կարծես իսկը պատճենը լինի:

- Հայկ, ու՞մ ես նկարում:

- Սովորաբար է: Կամ Սովորաբար, - կարծես հույն փիլիսոփայի իր նկարած կերպարի միմիկայի շարունակությամբ, փիլիսոփայորեն պատասխանում է Հայկը: - Ուզում էի նկարիչ դառնալ, բայց ... 44-օրյա պատերազմից հետո արմատապես փոխեցի որոշումս. ճարտարապետ: Այո, պիտի ճարտարապետ դառնամ: Գիտե՞՞ք ինչու: Արցախն անչափ սիրում եմ, Շուշիում բազմիցս եմ եղել: Հիանում եմ Սուրբ Ղազանչեցոց եկեղեցիով: Թուրքերն այն ավերեցին ու պղծեցին: Իրենց անմարդկայնության համար Նրանք անշուշտ, պատասխան կտան, - ինքնավստահ ասում է Հայկը: - Շուշին անպայման կազատագրվի:

«Նկարիչ-ազատամարտի՞կ»... Ինչպիսի՞ հրաշք սերունդ, - մտքիս մեջ՝ լուռ եմ: Փշաքաղվեցի:

Եվ ահա, արվեստանոցում իմ լսած վերջին նախադասությունը, որն ասաց Հայկը.

- Շուշիի ավերված Սուրբ Ղազանչեցոցը կվերականգնվի իմ նախագծով...

ՎԱՅԵ ՄԿՐՏՉՅԱՆ



Կապանի գեղարվեստի մանկական դպրոցում Նոր ժամանակներ են

ՍԿԻԶԲԸ՝ ԷՑ 29

պարի են հարթել դեպի արվեստի աշխարհ: Նաև մտաբերում էին, որ իրենց ուսանելու տարիներին դպրոցի շենքային պայմաններն անբավարար էին: Բայց այդ ամենով հանդերձ՝ առիթը բաց չէին թողնում մասնակցելու միջազգային և հանրապետական մրցույթների, ցուցահանդեսների, փառատոների:

Իսկ այժմ կրթօջախին ճանաչում են բերում այն սաները, որոնց ստեղծագործությունները քննություն են բռնում միջազգային փառատոն-ցուցահանդեսներում: Մասնավորապես, դպրոցի վեց աշակերտ մասնակցել է Լեհաստանի Տորուն քաղաքում անցկացված 22-րդ միջազգային մանկական նկարների ցուցահանդեսին: Նրանցից Շանթ Բադալյանի (13 տարեկան), Միկա Պապյանի (12 տարեկան), Սյունե Առաքելյանի (11 տարեկան) աշխատանքներն արժանացել են դիպլոմների, Նրանց դասատու Ռաֆայել Առաքելյանը ևս արժանացել է դիպլոմի: Ի դեպ, տասը տարի անընդ-



մեջ մասնակցելով Տորուն քաղաքում կազմակերպված փառատոնին և դիպլոմներ չահելով՝ դպրոցի սաներն արժանացել են հորեյանական հատուկ մեդալի:

2021 թվականի չեխական Լիդիցե քաղաքում տեղի ունեցած հորեյանական 50-րդ մրցույթ-փառատոնին (թեման՝ թանգարան) մասնակցում էին 70 երկրի պատանի ստեղծագործողներ, ներկայացված էր 14527 աշխատանք: Կապանի մանկական գեղարվեստի դպրոցը ցուցահանդեսին մասնակցում էր ութ սաների աշխատանքներով, վերջերս լուր ստացվեց, որ երկուսի՝ Անժելա Հովհաննիսյանի և Ռաֆայել Արյանի աշխատանքները արժանացել են դիպլոմների: Նրանց դասատու Ռաֆայել Առաքելյանը ևս պարգևատրվել է դիպլոմով:

Հիշարժան է՝ Նաև 2019 թ. հունիսին դպրոցի չորս սանի մասնակցությունը համահայկական պատանեկան 9-րդ մրցույթ-փառատոնին՝ «Իմ Սարյանը» թեմայով Դավթյան Աննայի (Նատյուրմորտ), Վահան Մակարյանի (գծանկար), Սարգսյան Նարեի (Նատյուրմորտ), Ջուլիետա Խաչատրյանի (գծանկար) աշխատանքների համադրումով ստացվել էր Մարտիրոս Սարյանի դիմանկարը: Միացյալ աշխատանքն արժանացավ մրցույթ-փառատոնի հիմնական մրցանակին:

... Երկու տարի է, ինչ Կապանի գեղարվեստի մանկական դպրոցի կյանքում Նոր էջ է բացվել: Կասկած չկա, որ բարենորոգ կրթօջախում երեխաներն ավելի ոգևորությամբ հասու կլինեն արվեստի զարմանահրաշ աշխարհի գաղտնիքներին, ավելի հետաքրքրական թեմատիկ աշխատանքներով իրենց քաղաքն ու հանրապետությունը կներկայացնեն միջազգային մրցույթ-փառատոներում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ. ԿՐԹՕՋԱԽՆԵՐ

Ներսես Շնորհալի, հանելուկներ



Մեզինց ավելի քան 800 տարի առաջ ապրել և ստեղծագործել է մեծ մտածող, բանաստեղծ ու երգահան Ներսես Շնորհալին (1098-1173), որ նշանավոր Պահլավունի տոհմից էր։ Նա մանուկների համար բազմաթիվ գործեր է գրել, որոնցով կարելի էր ազատ ժամանակը հաճելի դարձնել և անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել։ Այդպիսիներից առանձնապես արժեքավոր են նրա երեք հարյուրի հասնող հանելուկները։

Ճոխ ու բազմաբովանդակ հայոց հին գրականությունը հարուստ է Նաև հանելուկներով։ Բավական է հիշել, որ V դարի բանաստեղծ Դավիթ Քերթովից մինչև XVIII հարյուրամյակը հանելուկ են գրել շուրջ չորս տասնյակ հեղինակներ։ Այդ մեծ, անչափելի հարստության

մեջ կարևորագույն տեղ ունեն Շնորհալու հանելուկները։ Որոշակի ծրագրով ստեղծված սրամիտ, գողտրիկ այդ բանաստեղծություններում նա պատմում է կենդանական ու բուսական աշխարհի, բնական երևույթների, կենցաղային ու արհեստագործական առարկաների, գրականության ու մշակույթի, առասպելական ու պատմական դեմքերի (Տորք մնգեղ, Տրդատ և Վարազդատ թագավորներ, Մովսես Խորենացի և Դավիթ Անհաղթ Փիլիսոփա) մասին։ Եթե նախորդ շրջանում հանելուկ գրում էին ազատ ոտանավորով, տարբեր չափ ու կշռությամբ, ապա Ներսես Շնորհալին ստեղծեց դրա դասական տիպը, որ այնուհետև դարձավ ընդօրինակման առարկա։ Եվ մեծ բանաստեղծի հանելուկների կաղա-

պարով ուրիշները հանելուկ էին գրում նաև նրա՝ մասին։ Ահա դրանցից մեկը, որ հնարավորություն կտա պատկերացնելու, թե բնագրով ինչպես են հնչում հանելուկները.

*Տնտես մի կայր խիստ պատուական,
Ճաշեր կազմէր յոյժ զանազան,
Մանկունքս ուտեն և զուարճանան
Եւ գիտութեամբ փարթամանան։*

Ներսես Շնորհալու հանելուկները գրված են ժամանակի խոսակցական լեզվով, որը հետագայում դարձավ հայ քնարերգության լեզուն և այսօր հայտնի է «միջին հայերեն» անունով։ Մանուկների մատչելի դարձնելու նպատակով մի շարք հանելուկներ հրատարակվել են աշխարհաբար։

Մսկում է ու մեծանում,
Հենց Նույն օրն էլ՝ մահանում,
Հետո Նորից կյանք առած
Պայծառ շորեր է հագնում:
ԴՍԻ

Սմբողջ օրը տանը մնում,
Բեհեզ բարձի վրա քնում,
Հենց որ մուկ է տեսնում հանկարծ,
Բազեի պես որս է անում:
ՆԱՏՈՒԿ

Հողն է մտնում, մահանում,
Հետո Նորից կյանք առնում,
Աչքը հառած երկնքին,
Տարածվում է, շատանում:
ՂԵՍՆԵ

Չորս ոտը ունի, բայց շուն չի,
Ձու է ածում, թռչուն չի,
Խոտ է ուտում կովի պես,
Պատյան ունի, բայց տուն չի:
ՌՍԻՍԻ

Տուն է սպիտակ, լայնատարած,
Սև հավիկներ մեջը թառած,
Խոսում են ու գրույց անում
Մարդու նման լեզու առած:
ՃԱՎԵ

Սմբողջ օրը քուն չունի,
Լայն դաշտերում տուն չունի,
Ծաղկից ծաղիկ է թռչում,
Փեթակ ունի, բուն չունի:
ՆԱՆՁԻ

Սրբա չունեն, սակայն արագ
Կազմում են մեծ, ահեղ բանակ,
Հենց մտնում են արտը հասած՝
Բերքն են հնձում առանց դանակ:
ՂԵՍՆԵ

Գիշերով է նա լույս տալիս,
Եվ ապրում է ճիշտ մեկ ամիս,
Կիսովում է նախ և Նորանում,
Կլոր դեմքով՝ աշխարհ գալիս:
ՂՎՈՒՄԻ

Տեսա իմ հոգու հոգին
Հողում թաղվեց, մահացավ,
Շատ չարչարվեց ու կրկին
Ծիլ արձակեց, բարձրացավ,

Սրի բերան նա ընկավ,
Քարով ճգնվեց, փշրվեց,
Հետո բոցում այրվեց,
Նոր կյանք առած՝ ետ եկավ:
ՂԵՍՆԵ

Հսկայական փռում թխված
Մի գաթա կա սիրուն, գլոր,
Թխողն ինչքան ծայրից պոկում,
Նորից է նա դառնում կլոր:
ՂՎՈՒՄԻ

Մի տախտակ կա քառանկյուն,
Առանց դրա չկա տուն,
Մինչև ամուր չփակեն՝
Դու չես մտնի հանգիստ քուն:
ՄՆԱԿ

Հագին շորեր՝ կրակ ու բոց,
Գլխին ունի ոսկե սողց,
Ձայնով հզոր՝ մոլեղվուսին
Արթնացնում է տուն ու փողոց:
ՆԱՏՈՒԿ

Նա որսորդ է չար ու անգութ,
Հագին մուշտակ՝ սիրուն, պուտ-պուտ,
Ժանիքը սուր, ագին բարակ,
Եվ աչքերն են մի-մի ճրագ:
ԽՈՒՍԱՅ

Ճարտարագետ և իմաստուն,
Ծաղկի փողոց շինում է տուն,
Լեզուն՝ քաղցր, ինքը՝ բարի,
Չունի դադար, հանգիստ ու քուն:
ՆԱՆՁԻ

Մի օձ կա մեծ, գույնը՝ կապույտ,
Հա՛ գնում է պտույտ-պտույտ,
Նրանով են սնվում անվերջ
Ծառ ու ծաղիկ, խոտ ու առվույտ:
ՍՈՑԵ

Մանուկն եկավ՝ պայծառ, անգին,
Կանաչ շորեր ունի հագին,
Թողեց հետքեր նա ամենուր,
Ծաղկով լցրեց դաշտն ու այգին:
ՂՆԱՄՈՒՑ

ՈՒՐ բուրաստան ու պարտեզ,
Ուր ծաղիկներ, կանաչ սեզ,
Շրջում է նա օրնիբուն
Պոչը՝ գույն-գույն, ինքը՝ հեզ:
ԽՈՒՍԱՅ

Նա ապրում է շարժուն տան մեջ,
Ծտի նման խայտում անվերջ,
Առավոտից մինչ իրիկուն
Չունի հանգիստ ու չունի քուն:
ԻՄԱՑԵ

Երեկ տեսա մի քարավան
Ճամփա ելած՝ գնում էր Վան,
Պոչ-պոչ բռնած, շարքով կարգին,
Մի-մի հատիկ առած մեջքին:
ՂՆԱՄՈՒՑ

Մի թռչուն կա շատ իմաստուն,
Բարեկամ է նա միշտ մարդուն,
Աղվում է, ծայրերը կանչում,
Երբ որ գող է մտնում իր տուն:

ԽՈՒՍԱՅ

Կա մի գմբեթ՝ բարձր ու լայն,
Կանգնած անայուն ու անգերան,
Մեջը կանթեղ՝ պայծառ լույսով,
Կախված ջահեր, առանց պարան:
ՃՂՎԻՍԿ

Խոսում է նա, լեզու չունի,
Շրջում է նա, ոտքեր չունի,
Բայց մտնում է ամեն մի տուն,
Ուրախ լուրեր բերում մարդուն:
ԻՄՈՒՄՈՒՐ

Կյանք է տալիս, բայց ինքն՝ անկյանք,
Հյուր է գալիս, աշխարհի մտնում,
Պարզեցում է լույս ու բերկրանք,
Երբ գնում է, օրն է մթնում:
ՂՎՈՒՄԻ

Թռչուն անթև ու անփետուր,
Բայց շրջում է նա ամենուր,
Նրա համար սահման չկա
Ոչ գետ ու ծով, ոչ լեռ, բլուր:
ՃՂՎԻՍԿ

Հողից շինեցին,
Բոցում թրծեցին,
Կախեցին այունից,
Տարան, բերեցին:
ՎՃԱՂՂԻ

Մի բան գիտեմ զարմանալի,
Նա մագիկներ ունի հավի,
Մութ անտառն է իրար տալիս,
Հարթում սիրուն ու ետ գալիս:
ՍՈՑԵ

Մխիթար Գոշ, առակներ



Մխիթար Գոշը (1120-ականներ-1213 թթ.) միջնադարի հայ մշակույթի նշանավոր գործիչներից է, մտավորական, գիտնական, գրող, մանկավարժ, օրենսդիր: Ծնվել է Գանձակ քաղաքում, որտեղ էլ ստացել է նախնական կրթություն: Դառնալով չափահաս՝ ծեռնադրվել է կուսակրոն քահանա: Գիտելիքներ ձեռք բերելու նպատակով աշակերտել է Հովհաննես Տավուշեցուն և ուրիշ գիտնականների, ստացել վարդապետի կոչում: Սակայն դա չի բավարարել պատանուն: Թաքցնելով վարդապետական կոչումը՝ Արևելյան Հայաստանից հասել է Կիլիկիա և վերստին ուսանել Սև (Ամանոսյան) լեռների երևելի գիտնական վարդապետների մոտ: Վերադառնալով հայրենիք՝ բնակվել է իր ծննդավայր Գանձակում, ապա տեղափոխվել Գետիկ վանքը:

Մխիթար Գոշի իմաստության համբավը տարածվել է ամենուրեք, շատերը նույնիսկ հեռավոր վայրերից գալիս էին նրան աշակերտելու: Շատ վարդապետներ, ծածկելով իրենց կոչումը, աշակերտել են նրան և կրկին ստացել վարդապետի աստիճան:

Մխիթար Գոշը մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում ոչ միայն հոգևորականների, այլև իր ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում: Նա եղել է Չաքարե երկայնաբազուկ իշխանի խոստովանահայրն ու խորհրդատուն:

Մեծ գիտնականի գրչին են պատկանում շուրջ մեկ տասնյակ աշխատություններ, որոնցից հատկապես կարևոր են նրա կազմած օրենքների ժողովածուն՝ «Դատաստանագիրքը» և բարոյախրատական առակները:

Միջնադարյան գրականության մեծարժեք հուշարձան է Գոշի առակների ժողովածուն, որը հայ գրականության առաջին արձակ ստեղծագործությունն է, ուստի Մխիթար Գոշը գեղարվեստական արձակի հիմնադիրն է հայ գրականության մեջ: Ժողովածուն պարունակում է 190 առակ, որոնց հերոսները երկնային մարմիններ են՝ ծառեր, խոտեր, ծաղիկներ, գետեր, կենդանիներ, թռչուններ կամ մարդիկ: Առակներն ունեն դաստիարակչական նշանակություն: Իր այլաբանական հերոսների միջոցով Մխիթար Գոշը դրվատում է մարդկային առաքինությունները, ծաղրում է հիմարությունը, տգիտությունն ու վախկոտությունը, խարազանում է առիթը:

Մխիթար Գոշի առակների ժողովածուն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ:



Մի անգամ աստղերը հավաքվեցին, և նրանցից ամենածերերն ասացին.
- Մենք բազում ենք ու շատ: Ուրեմն ինչո՞ւ չենք կարողանում լուսավորել ցերեկն ու գիշերը արեգակի ու լուսնի նման:
- Որովհետև միաբան չենք, - պատասխանեց մեկը:
Եվ որոշեցին նախ հավածել ու փախցնել արեգակին, բայց երբ լուսինը ծագեց, հաղթվելով նրանից՝ աստղերն ասացին.
- Եթե մենք լուսնի լույսից այսպես աղուտացանք, ապա ի՞նչ կլինենք, երբ արևը ծագի:
Չղջացին աստղերը և խոստովանեցին իրենց պարտությունը:



Ուռյուծի ոտքը կոտրվեց. նա սկսեց տրտնջալ բոլոր կենդանիների վրա և ասաց.
- Դուք իմ հպատակներն եք, որովհետև կենդանիների իշխանն եմ ես, ինչո՞ւ ինձ համար զոհաբերություններ չեք անում, որ առողջանամ:
Կենդանիները պատասխանեցին.
- Այն պատճառով, որ մենք քեզից պաշտպանություն չտեսանք ո՛չ արջի, ո՛չ գայլի և ո՛չ էլ ուրիշ գազանների ձեռքից և մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ:
Մենք Աստծուն պիտի զոհաբերություն անենք, որ այդպիսի փորձանքի բերեց քեզ:



2 կներին մեղադրեց իրենց թա-

գավորը՝ ասելով.
- Ինչո՞ւ եք ուտում ձեզնից մանր ձկներին:
Ձկները համարձակություն ստացան ու պատասխանեցին.
- Քեզնից ենք սովորում, որովհետև շատերը գալիս են քեզ երկրպագելու, իսկ դու կու՛յ ես տալիս նրանց ու կերակուր դարձնում: Ուստի և մենք, քեզնից սովորելով, հանդգնում ենք:
Առակս ուսուցանում է, որ ոչ թե խոսքով, այլ գործով պետք է խրատող լինել:



Փիղն իր որդուն հանձնեց Պլատոնին, որ իմաստավորություն սովորի: Պլատոնը նախ սկսեց սովորեցնել նրան լսարանում ծնկի իջնել, բայց նա չէր կարողանում: Ապա ասաց, որ գլուխը խոնարհի, բայց դա էլ չկարողացավ:
Պլատոնը վերադարձրեց նրան հորը և ասաց.
- Որդիդ արժանի է թագավորի պալատում լինելու՝ միշտ ոտքի վրա կանգնած, այլ ոչ մի լսարանում, որովհետև ո՛չ նստել է կարող, ո՛չ գլուխ խոնարհել:



Ոիրամարգն իր գեղեցկությունն ամենքին ցուցադրելով՝ գովեստի էր արժանանում և մի օր էլ մտածեց թագավոր դառնալ: Իմաստուններից ոմանք խրատեցին չխաբվել, ասելով, թե ազգով պետք է թագավոր լինել: Բայց սիրամարգը չէր ուզում լսել նրանց և ցանկանում էր անպատճառ հասնել իր նպատակին: Թռչունների թագավորը, լսելով այդ մասին, եկավ ու կոտորեց նրա ձագերին ու ազգատոհմը: Շատերն էլ, թևերն ու փետուրները դուրս քաշելով, մերկացրին նրան: Այսպիսով, սիրամարգը ոչ միայն թագավոր չդարձավ, այլև զրկվեց իր գեղեցկությունից:

Այդպես էլ նրանք, ովքեր հրապուրելով ցանկանում են հասնել անկարելիին, ոչ միայն ձեռք չեն բերում այն, այլև կորցնում են իրենց ունեցածը:



Ոսկին թագավորելիս պահանջում էր, որ բոլոր նյութերը գան իրեն երկրպագելու: Նա իրեն թագավոր էր կոչում, որովհետև թագավորի պատկեր կար վրան ու դրանով գոռոզանում էր արծաթագործների և ուրիշների վրա ևս:
Բոլորը եկան ոսկուն երկրպագելու, չեկավ միայն ցորենը, ասելով.
- Թո՛ղ նախ ոսկին գա ինձ երկրպագելու:



Ոսկի ծառի մերձակայքում երկրագործները ոռոգում էին բամբակի արտը: Նրանք պատվիրում էին միմյանց զգուշանալ բամբակենու ծառերը ոտնատակ տալուց: Սոսին բարկացավ, որ ծառ են կոչում բամբակենուն և ասաց.
- Ինչպե՞ս կարող է դա ծառ կոչվել և համանուն լինել ինձ, որ հաստ եմ այսքան ու բարձր, նաև շատ տեղ եմ գրավում:
Բամբակենին պատասխանեց.
- Դու բարձր ես, արդարև, ու հաստ, սակայն անօգուտ. ո՛չ շինության համար ես պիտանի և ո՛չ պտղաբերությամբ՝ գովելի, այրելու համար էլ անպետք ես: Միայն թանձր ստվեր ունես, որի համար ավելի շատ պարսավում են քեզ, քան թե գովում: Իսկ ես թեև փոքր եմ ու տկար, բայց բազմաշահ եմ և օգտակար բոլորի համար և՛ պահպանելու, և՛ քաղելու, և՛ գործելու ժամանակ: Վերջում էլ դառնում եմ հագուստ, ինչպես ոչխարների բուր-

դը, կտավատի թելը և շերամի մետաքսը: Մինչդեռ դու դրանցից ոչ մեկը չունես, այլ ունես միայն խոզակաղին:



Ովագակը մի քահանայի բռնելով՝ կամենում էր սպանել նրան: Քահանան ուժ առավ, հաղթահարեց ավագակին և, ինչպես հարկն է, սկսեց տանջել:
Ավագակն աղաչում էր և ասում.
- Չե՞ որ քահանա ես դու և միշտ ասում ես «հաղաղություն ամենեցուն» ու սրա նման շատ բաներ, ուրեմն ինչո՞ւ ես տանջում ու չարչարում ինձ:
- Ո՛վ դու չարագործ, - պատասխանեց քահանան, - ես հենց խաղաղության համար եմ տանջում քեզ, որովհետև դու չես սիրում խաղաղությունը:



Երկրում կար շատ բարձր և անմատչելի մի լեռ: Մարդիկ կամեցան բնակություն հաստատել նրա վրա, որովհետև լի էր նա ամենայն բարիքներով: Սակայն շատ դժվարին էր նրա վրա բարձրանալը, թեպետև ուներ բազում ճանապարհներ: Նրանք, ովքեր նրա վրա բարձրանալու ժամանակ կանգ առան հանգստանալու, սայթաքեցին և ցած գլորվելով հասան մինչև հատակը, իսկ ովքեր չուզեցին դադար առնել, այլ գավազանի օգնությամբ աշխատելով՝ շարունակեցին վերելքը, բարձրացան լեռան վրա և հանգիստ կյանք վայելեցին:
Այսպես թուլակազմ անարիները մնում են կես ճանապարհին ու կորչում, իսկ հաստատակամները, համբերությունն իրենց նեցուկ ունենալով, վեր են բարձրանում ու հասնում նպատակին:



Վարդան Այգեկցի, առակներ



Վարդան Այգեկցին (12-րդ դարի վերջ - մոտ 1250 թ.) միջնադարի հայ գրականության ակնառու ներկայացուցիչներից է։ Նրա ստեղծած առակները միջնադարյան հայ գրականության լավագույն նմուշներից են։

Այգեկցին ծնվել է 12-րդ դարի վերջին Հայոց Միջագետքի (Եդեսիա կենտրոնով) Դյուզ գավառի Մարաթա գյուղում, որն այժմ գտնվում է Սիրիայում։ Ինքն իրեն անվանել է Վարդան Մարաթացի։ Սովորել է ծննդավայրում, ապա՝ Կիլիկիայի Սև լեռների (Ամանոսյան լեռներ) Արքակաղին վանքում։ Վարդապետ ձեռնարկվելուց հետո զբաղվել է քարոզչությամբ։ Որպես քարոզիչ շրջել է հա-

յաբնակ շրջաններում, մտերմացել իշխանների հետ, որոնցից մեկը խաչակիրների թագավորազն իշխան Պաղտիկն (Բալդուին) էր։ 1198 թվականին մասնակցել է Կիլիկիայի Լևոն Բ Մեծ արքայի թագադրության հանդեսին։ Ինչ-ինչ պատճառներով հալածվել և 1208 թվականին հարկադրված հեռացել է վանքից։

Երկու տարի թափառելուց հետո, 1210 թվականին, հաստատվել է Սև լեռների Այգեկ վանքում, ուր ապրել է մինչև կյանքի վերջը (այստեղից էլ՝ նրա Այգեկցի մականունը)։

Վարդան Այգեկցին ոչ միայն եռանդուն քարոզիչ ու օժտված հռետոր է եղել, այլև իր գործերն ինքն արտագրել ու տարածել է։ Իր ճառերն ու քարոզներն ազդեցիկ և ժողովրդի համար ընկալելի դարձնելու համար համեմել է առակներով։ Խրատական ճառերում վերամշակել և օգտագործել է Եզոպոսի և հայ ժողովրդական առակներ, ժողովրդի կյանքն ու կենցաղը պատկերող բանավոր գրույցներ, որոնք փոքրիկ մանրապատումներ են, զվարճալի ու խրատական պատմություններ։ Դրանով նա հայ գրականության մեջ ստեղծել է

Նոր ժանր՝ առակավոր ճառ։

Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի գործունեության շնորհիվ առակը և գրույցը միջնադարում դարձել են գրական ժանրեր։ Այդ առակներից մի քանիսը հայ ժողովուրդն այնքան է սիրել, որ պահպանել է ժողովրդական բանահյուսության մեջ՝ հեքիաթների ու մանրապատումների տեսքով։

Վարդան Այգեկցու մշակած կամ ստեղծած առակները մոտ երեսունն են։ Նրա առակներից շատերի գլխավոր գործող անձն աղվեսն է, այդ իսկ պատճառով Այգեկցու առակների ժողովածուները կոչվել են «Աղվեսագիրք»։ Այդ գրքերը հետագայում շարունակ բազմացվել են՝ ընդգրկելով նորանոր գրույցներ, հետաքրքրաշարժ պատմություններ, երևան են եկել մի քանի հարյուրի հասնող առակներ պարունակող ժողովածուներ, որոնք նույնպես անվանվել են «Աղվեսագիրք»։ Մեզ հասած ամենածավալուն «Աղվեսագիրքը» պարունակում է մոտ 500 առակ։ Տպագիր առաջին «Աղվեսագիրքը» լույս է տեսել 1668 թվականին, Ամստերդամում։



Աղվեսը և թղթատար գայլը

Աղվեսը մի գրած թուղթ գտավ, տարավ գայլին ու ասաց.

- Այսքան ժամանակ աշխատեցի, բարեխոս մարդիկ մեջ գցեցի և իշխանից քեզ համար թուղթ հանեցի, որ ամեն գյուղ՝ ուր հանդիպես, քեզ մի ոչխար պիտի տա։ Եվ ո՛չ շուն, ո՛չ մարդ քեզ չպիտի նեղեն։

Այդպես խաբեց գայլին, և միասին գնացին մի գյուղ։ Աղվեսը նստեց մի բլրի վրա և թուղթը տվեց գայլին։

Երբ գայլը գյուղի մեջ մտավ, վրա թափվեցին շներն ու մարդիկ, նրան զգեցին ու փայտերով ծեծեցին։ Արյունաթաթախ գայլը, հազիվ ազատվելով, հասավ աղվեսին։

Աղվեսն ասաց.

- Ինչո՞ւ թուղթը ցույց չտվիր։ Գայլն ասաց.

- Ցույց տվի, բայց գյուղում հազար շուն կար, որ գիր չգիտեր։

Առյուծը, գայլը և աղվեսը

Առյուծը, գայլը և աղվեսը եղբայրացան ու որսի ելան։ Գտան մի խոյ, մի մաքի ու մի գառ։ Ճաշի ժամին առյուծն ասաց գայլին, թե բաժանիր մեր մեջ այդ որսը։ Գայլն ասաց.

- Ո՛վ թագավոր, Աստված արդեն բաժանել է. խոյը՝ քեզ, մաքին՝ ինձ և գառն՝ աղվեսին։

Առյուծը բարկանալով ապտակեց գայլին։ Գայլի աչքերը դուրս թռան, և նա նստեց ու դառն լաց եղավ։ Առյուծն ասաց աղվեսին, թե բաժանիր ոչխարները մեր մեջ։ Աղվեսն ասաց.

- Ո՛վ թագավոր, Աստված արդեն բաժանել է. խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ նախընթերցին, գառը քեզ՝ ընթերցին։ Եվ առյուծն ասաց.

- Ո՛վ խորամանկ աղվես, քեզ ո՞վ սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել։

Աղվեսն ասաց.

- Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան։

Գարու հաշիվ

Մի մարդ կալից գրաստով գարի էր կրում տուն։ Եվ քուռակը մոր հետ գնում էր ու հետ դառնում։ Իսկ տանը, ուր կրում էին գարին, մի խոզ կար կապած, որին գիրացնում էին։ Գարին նրանից անպակաս էր, որպեսզի ուտի և գիրանա։

Քուռակը հարցրեց մորը.

- Ինչո՞ւ այն խոզն առանց աշխատանքի ուտում է գարին, որ մենք կրում ենք մեծ դժվարությամբ, իսկ մեզ, որ չարչարվում ենք, օրը մի անգամ են գարի տալիս։

Մայրը պատասխանեց.

- Որդյա՛կ, մի շաբաթ համբերիր, ես քեզ պատասխան կտամ ու քո աչքով կտեսնես։

Մի շաբաթ հետո էլը և քուռակը բեռով տուն էին գալիս։ Քուռակը մորից առաջ էր գնում և լսեց ուժեղ խռչոցի ձայն, որովհետև խոզը մորթում էին։ Քուռակը խրտեց ու հետ փախավ դեպի մայրը։ Մայրն ասաց.

- Ի՞նչ եղավ քեզ, որդյա՛կ, որ սոսկում ես։ Մի՛ վախենա խոզից, որովհետև նրանից զարու հաշիվ են պահանջում։

Դարձյալ եկան կալը՝ գարի կրելու։ Եվ երբ բարձված վերադարձան տուն, քուռակը բարձրացնելով ոտքի սմբակը՝ մորն ասաց.

- Մայրի՛կ, տե՛ս, թե ոտքիս չի՞ կպել գարու մի հատ, որ ինձնից էլ հաշիվ ուզեն, ինչպես խոզից։



Մարդը, ընկույզը և ձմերուկը

Մի մարդ ընկույզի ծառի տակ ձմերուկ էր ցանել։ Պտղի հասունացման ժամանակ եկավ ու տեսավ մեծ-մեծ ձմերուկները, ապա նայեց ծառին ու տեսավ, որ ընկույզը մանր է։ Եվ ասաց.

- Տե՛ր Աստված, ինչ որ ստեղծել ես՝ ամեն ինչ կարգին է։ Իսկ այս երկու պտուղն անկարգ են։

Նա ասում է, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին, իսկ ընկույզը՝ ձմերուկի թփի վրա։

Նա պառկեց ծառի տակ, նայեց ծառին։ Հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից, ընկավ նրա ճակատին։ Ճակատը պատռվեց և արյուն եկավ։ Մարդը վեր կացավ տեղից և աղաղակեց.

- Տե՛ր Աստված, ինչ որ ստեղծել ես, կարգին է ու կատարյալ, և ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը թող իմից լավ լինի, որովհետև եթե ընկույզի տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ։



Առյուծն ու աղվեսը

Մի առյուծ կորյուն ծնեց։ Հավաքվեցին կենդանիները կորյունին տեսնելու և ուրախանալու։ Աղվեսը եկավ և հանդեսի ժամանակ, բազմության մեջ, առյուծին նախատեց բարձրածայն ու անարգեց, թե ա՛յդ է քո գործությունը, որ ծնում ես միայն մի կորյուն և ոչ բազմաթիվ։

Առյուծը պատասխանեց.

- Այո՛, ես ծնում եմ մի կորյուն, բայց առյուծ եմ ծնում և ոչ քեզ նման աղվես։



Միամիտ գողերը

Երկու գող բարձրացան մի մեծատան կտուր և կամեցան երդիկով վայր իջնել ու գողություն անել։ Մեծատունն իմացավ, որ գողերը երդիկի մոտ են։ Կինը մարդուն հարցրեց, թե այս բոլոր գանձերը, ոսկին և կերպասը քեզ որտեղի՞ց։ Մեծատունն ասաց.

- Գնում էի գողության, մեծատուն մարդկանց երդիկով իջնում էի լուսնկա գիշերով, լուսնի շողերը երդիկից ներս էին ընկնում, ինչպես այժմ։ Ես գրկում էի շողերի սյունը, վայր էի իջնում և այնպիսի մի բան էի ասում, որ ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը, երևում էր ինձ։ Կապում էի լուսնի շողերին և վեր բարձրանում։ Այս ամենն այդպես եմ վաստակել։

Երբ գողերը լսեցին, խիստ ուրախացան և հավատացին այդ ցնորամիտ խոսքին և, լուսնի շողերը գրկելով, երդիկից վայր ընկան ու շարժվեցին։



Իշխանը և այրի կինը

Մի իշխան կար խիստ չար և անիրավ։ Նույն քաղաքում ապրում էր նաև մի այրի կին։ Իշխանը, հարկ պահանջելով, նեղում էր նրան, և այրի կինն աղոթում էր, որ իշխանը երկար ու խաղաղ կյանք ունենա։ Գնացին, ասացին իշխանին, թե քո չարության համար այրին աղոթում է։ Իշխանը եկավ ու հարցրեց.

- Ես քեզ բարիք չեմ արել, ո՞վ կին, դու ինձ համար ինչո՞ւ ես աղոթում։

Այրի կինն ասաց.

- Քո հայրը վատ մարդ էր. ես անիծեցի, և նա մեռավ։ Դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ չար։ Այժմ վախենում եմ, որ մեռնես, և քո որդին քեզնից ավելի չար լինի։

Իմաստուն զինվորը

Մի իմաստուն զինվոր, ով երկու ոտքով կաղ էր, պատերազմ էր գնում։ Եվ զինվորներից մեկը նրան ասաց.

- Ո՛վ ողորմելի, ո՞ր ես գնում։ Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող։

Իսկ նա պատասխանեց.

- Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու։



Աղվեսը և որսորդը

Որսորդը շներով հալածում և նեղում էր աղվեսին։ Աղվեսը դարձավ ու ասաց.

- Աղաչում եմ քեզ, ասա, թե ինչի՞ համար ես ինձ նեղում։

- Որպեսզի հանեմ քո մորթին, - պատասխանեց որսորդը։

Աղվեսը կանգնեց ու ասաց.

- Տե՛ր Աստված, փառքդ շատ, որ սրա ուզածն այդ է։ Իսկ ես կարծում էի, թե ինձ ուզում է նշանակել մեր գավառի հավաքած կամ թռչնանոցի վանահայր։

Կտակ գանձի մասին

Մի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծույլ որդիներ։ Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց.

- Ո՛վ զավակներ, իմ նախնիները շատ գանձ են թաղել մեր այգում, բայց ես ձեզ ցույց չեմ տա նրա տեղը։ Այդ գանձը կգտնի նա, ով շատ կաշխատի և խոր կփորի։

Հոր մահից հետո որդիները սկսեցին աշխատել մեծ եռանդով և խորն էին փորում, որովհետև յուրաքանչյուրն աշխատում էր, որ ինքը գտնի գանձը։

Եվ այգին սկսեց անել ու գորանալ, առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով։



Ուղտը, գայլն ու աղվեսը

Ուղտը, գայլն ու աղվեսը եղբայրացան և ճանապարհ ընկան։ Ճանապարհին գտան մի բոքոն հաց և միմյանց միջև պայման կապեցին, որ բոքոնն ուտի նա, ով ավելի տարեց է։ Եվ սկսեցին ասել իրենց տարիքը։ Աղվեսն ասաց.

- Ես այն աղվեսն եմ, որի անունը Ադամը դրեց։

Գայլն ասաց.

- Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ։

Ուղտը, տեսնելով, որ նրանք իրենից տարեց դուրս եկան և հացը պիտի ուտեն, հացը բերանն առավ և բարձրացնելով ասաց.

- Մի՞թե ես երեկվա տղան եմ, որ այսքան մեծացրել եմ իմ ոտքերը։

Եվ սկսեց հացն ուտել։ Իսկ աղվեսն ու գայլը, ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկարողացան անել և հեռացան։



Ակսել Բակունց. ինքը «Աղվեսագիրքը» փոխադրեց աշխարհաբարի



Ս ի քանի խոսք՝
այս հրատա-
րակության
մասին:

Արդեն ասացինք, վոր 1668 թ. Ամստերդամում լույս է տեսել առակների առաջին ժողովածուն «Աղվեսագիրք» վերնագրով, յերկրորդ անգամ տպագրվել է Մարսելում 1676-ին, յերրորդը՝ 1683 թ., դարձյալ Մարսելում և չորրորդը Լիվոռնոյում՝ 1698 թվին: Այսպիսով XVII դարի յերկրորդ կեսին չորս անգամ տպագրվել են առակների ժողովածուները: Ըստ Ն. Մառի բացատրության՝ առաջին հրատարակիչը ծանոթ լինելով յեվրոպական լեզուների, կամեցել է առակների ժողովածուն նմանեցնել այդ ազգերի նույնանուն գրքերին, որինակ «Fucsbuch»-ին և անվանել է «Աղվեսագիրք»: Ի դեպ, Ն. Մառը խորին ուսումնասիրությամբ հաստատել է, վոր արաբական «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերենից, Վարդանի առակների մի վորևէ ժողովածուից:

Ի նկատի ունենալով, վոր այս հրատարակության մեջ կան և բուն Վարդան Այգեցու առակներ, ինչպես և այլ առակներ ու մանրավեպեր, վոր կան Վարդանի կամ Վարդանին վերագրած առակների ձեռագիր և տպագիր ժողովածուների մեջ, մենք ևս պահպանեցինք արդեն ընդունված «Աղվեսագիրք» անունը:


Տեքստի, ինչպես և ծանոթությունների համար հիմք ընդունելով Ն. Մառի յեռահատոր աշխատությունը՝ «Ժողովածոյք առակաց Վարդանայ», վորն աննման կոթող է միջնադարյան հայ արձակի, մենք հաճախ գերադասել ենք առակների այն վարիանտները, վորոնք «գրեթե» հայերեն են և բովանդակությամբ ավելի հարուստ: Առակների մեկնությունները չենք բերել համարելով հնացած ավելորդաբանություն: Համարյա անփոփոխ են վերնագրերը: Բացի այդ, աշխատել ենք ըստ կարելույն պահել բնագրի վոճը, միաժամանակ նպատակ դնելով նյութը մատչելի դարձնել ընթերցողների լայն խավերին:

ՀԱՏԿԱԾ «ԱՂՎԵՍԱԳԻՐԷ» ԱՌԱՋԱԲԱՆԻՑ, ՀԵՐԵՆԱԿ՝ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ



«ԱՂՎԵՍԱԳԻՐԷ», «Աղվեսագիրք», հայկական միջնադարյան առակների ժողովածու, որը ձեռագրերում հայտնի է խմբագրական տարբերակներով: «Ա.» անվանումը տարածվել է XVII դարից, Ոսկան Երևանցու հրատարակությունից հետո («Գիրք աշխարհաց և առասպելաբանութանց, որ է Աղվեսագիրք», 1668 թ.): «Ա.» ունեցել է հայերեն ևս 3 հրատարակություն՝ 1683 թ.-ին, 1698 թ.-ին և 1827 թ.-ին: «Ա.» տարբերակները զանազանվում են ծավալով և նյութերի խմբավորմամբ: Նրանք պարունակում են ժող. բանահյուսությունից կամ գրավոր աղբյուրներից քաղված առակներ, գրույցներ, հետաքրքրաշարժ պատմություններ: «Ա.» սովորաբար վերագրվել է Վարդան Այգեցուն, իսկ ըստ Ն. Մառի այն «վարդանյան» առակախմբերի մի ուրույն խմբագրություն է: «Ա.» ուշ միջնադարում թարգմանվել է վրացերեն և արաբերեն:

Յիմար մարդը



Լ ինում է չի լինում, մի հարուստ մարդ է լինում. նա ունենում է 7 աղջիկ, բայց ոչ մի տղա: Մարդը կամաց-կամաց սկսում է ծերանալ: Նա իր յոթ աղջիկներին ամուսնացնում է և ունեցած-չունեցածը ծախելով ճանապարհ է ընկնում Աստծու մոտ գանգատվելու, թե ինչո՞ւ իրեն տղա զավակ չի պարգևել:

Ճանապարհին նա տեսնում է մի մարդու, որ տխուր ու տրտում, վիզը ծռած կանգնած էր իր արտի մոտ:

– Բարի օր, – ասում է մարդը:
– Աստծու բարին, – պատասխանում է արտատերը տխուր:
– Ինչո՞ւ ես տխուր, – հարցնում է մարդը:

– Ինչ անեմ, որ չտխրեմ. ամեն տարի արտումս 100 տոմար ցորեն եմ ցանում,

բայց որ գալիս է հնձելու ժամանակը, իսկույն ժանգը պատում է արտս: Չեմ իմանում ո՞ր մեղքիս համար է այդպես լինում:

– Ես գնում եմ Աստծու մոտ. եթե կուզես, քո դարդն էլ կպատմեմ:

– Շատ լավ կլինի, – ասում է արտատերը ուրախացած:

Մարդը շարունակում է իր ճանապարհը: Անցնում է շատ երկրներ, սարեր ու ձորեր, և մի խիտ անտառում պատահում է նրան մի գայլ, որ տխուր կանգնած էր ճանապարհի վրա:

– Բարի օր, – ասում է մարդը: – Բարով եկար, պատասխանում է գայլը տխուր:
– Ինչո՞ւ ես այդպես տխուր, գայլ աղբեր, հարցնում է մարդը, – թե մի դարդ ունես, ասա՛, ես գնում եմ Աստծու մոտ, քո դարդն էլ կպատմեմ նրան:

– Իմ դարդն այն է, – պատասխանում է գայլը ուրախացած, – որ ես ինչքան միս եմ ուտում, չեմ կշտանում. չեմ իմանում ինչո՞ւ: Խնդրում եմ խնդիրքս կատարես:

Մարդը շարունակում է իր ճանապարհը և վերջապես հասնում է Աստծու մոտ ու պատմում իր դարդը:

– Աստված պատասխանում է.

Քո վերջին օրերը շատ փառավոր կլինեն, եթե դու ցանկանաս, և քո դարդն էլ կմոռանաս: Կգնաս Մ... թագավորի մոտ, որը կին է, կհայտնես նրան այդ գաղտնիքը և դու փոխարենը կթագավորես:

– Բայց այն մարդու արտը ինչո՞ւ է այնպես փչանում:

– Որովհետև, – շարունակում է Աստված, նրա արտի մեջ գտնվում է յոթ կարաս ոսկի: Ամառ ժամանակ ոսկին տաքանում է, և արտը ժանգով է պատում:

– Իսկ գայլը ինչո՞ւ է այնպես քաղցած մնում:

– Նա կկշտանա, եթե մի հիմար մարդու միս ուտի:

Մարդը գնում է այն թագավորի մոտ և հայտնում նրան գաղտնիքը:

– Խնդրում եմ, – ասում է թագավորը, – դու հագիր շորերս և իմ փոխարեն թագավորիր: Ոչ ոք չի իմանա, բացի մեզից:

– Չէ՛, չեմ ուզում, – ասում է մարդը և հեռանում:

Հասնում է արտատերին, որը էլի կանգնել էր տխուր իր արտի մոտ:

– Էլ մի՛ տխրիր. Աստված ասել է, որ քո արտում գտնվում է յոթ կարաս ոսկի,

և դրանից է, որ քո արտը ժանգով է պատում:

– Խնդրում եմ, – ասում է արտատերը, – ոչ ոքի չասես, թե չէ կթափվեն, ոսկին կտանեն և արտս կկոխարտեն: Այս գիշեր չորս կարաս տանենք, իսկ մյուս գիշեր՝ երեքը:

Ասացին ու կատարեցին:

– Այժմ, – ասում է արտատերը, – կամ կեսը քեզ, կեսը ինձ, կամ, եթե ցանկանում ես, ինձ մոտ մնա և միև մի փառավոր ապրի՛ր:

– Չէ՛, չեմ ուզում, – ասում է մարդը և հեռանում:

Վերջապես նա պատահում է գայլին:

– Գայլ աղբեր, Աստված ասաց, որ եթե դու մի հիմար մարդու միս ուտես, կկշտանաս: – Եվ մարդը պատմեց իր գլխի անցածը՝ թագավորության, փառքի և ոսկու մասին:

Գայլը մտածում է.

– Այս մարդը ոչինչ չունի այլևս և բավականին ծեր է: Նրան առաջարկել են թագավորություն, փառք ու ոսկի, չի վերցրել, սրանից էլ հիմար մա՛րդ:

Միև այդ մարդը մի քիչ հեռացել էր:

– Եյ, մարդ աղբեր, – կանչում է գայլը և մոտենում, – ոտքիդ թելը բացվել է:

Մարդը կռանում է, որ կապի ոտքի թելը: Իսկ գայլը, հարմար համարելով և ցատկելով մարդու մեջքի վրա, հոշոտում է հիմար մարդուն:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Մարի Առաքելյան

Ծնվել է 1961-ին Սյունիքի մարզի Առաջածոր գյուղում, միջնակարգն ավարտել Կապանում: Սովորել է Էջմիածնի Ակումբագրադարանային տեխնիկումի ռեժիսորական բաժնում, հետագայում՝ ստացել նաև համալսարանական կրթություն:

Զբաղվել է նաև լրագրությամբ՝ թղթակցելով հանրապետության մի շարք թերթերի ու ամսագրերի...

Գրել է 12, տպագրվել 14 տարեկանից՝ և՛ արձակ, և՛ չափածո: 2006 թվականին լույս է տեսել առաջին գիրքը՝ «Վերջը քո մի բուռ հողին եմ» բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածուն: Գրում է նաև մանուկների համար:

Պատրաստ է նաև երրորդ՝ պատմվածքներ և իրապատումներ ամփոփող գիրքը: Կյանքի բոլոր խաղերի մեջ՝ տառապանքից խրախճանք, ես ընտրեցի ճամփան լույսի՝ արքայությունը հոգու, Ընթանում եմ՝ ջղաձգված իմ երգերով, խելառ դարին հաւընթաց, Ինձ չդատեք ընթացքի մեջ, հավերժությանն եմ միտված...



Ծիտիկը

Էս ի՞նչ սիրուն ծիտիկ է,
Պատիկ ու չալտիկ է,
Ճովողում է օրնիքուն,
Ցատկոտում է՝ քարկտիկ է:

Չէ՛, աղանձի հատիկ է,
Ախ, ինչ ուրախ ծիտիկ է,
Կերածն ի՞նչ է՝ հատիկ է,
Բայց անսահման ճարպիկ է:

Ի՛նչ բարալիկ ոտիկ է.
Իսկը ծտի տոտիկ է,
Հագին՝ փետրե շորտիկ է,
Ինքը՝ չալտիկ զատիկ է:

Չի վախենում ինձանից.
Պատուհանիս մոտիկ է,
Մեկ էլ տեսար՝ քիչ այն կողմ
Մեր լվացքի թոկին է:

Մեկ ելնում է մեր թթին,
Մեկ՝ մեր բահի կոթին է,
Մեկ՝ դեզ արած խոտին է,
Գիտե՞ք՝ ինչքան լոթին է:

Ա՛յ իմ փոքրիկ վերվարած,
Ծատ ցատկեցիր դու քաղցած,
Ա՛ռ քեզ հատիկ, փշուր հաց,
Միայն մոտս ընդմիշտ կաց...



Պապիս ճերմակ ձին

Ծերացել է, ճերմակել իմ Անթառամ տատիկը,
Հենց ուզում է ճաշ ուտի, դողդողում է թաթիկը,
Առաջվա պես չի քայլում՝ քարշ է տալիս ոտիկը,
Կռացել է, ձեռքն առել պապիկիս հին փայտիկը:

Բայց հենց տուն եմ մտնում ես,
Մեջքը՝ շտկում, ուղղում է իր գոտիկը.
- Եկա՞ր բալես, - ասում է ինձ, - բոյիդ մեռնի տատիկը.
Պապդ տեսներ՝ դարդ չէր լինի... երկա՛ր կապրեր պապիկդ...

- Ծատ մի տխրիր, տատի ջան,
Պապին չկա, ես հո՞ր կամ.
Դու չե՞ս ասել ինձ մի օր,
Որ ես նույնն եմ շնորհքով,
Որ քայլում եմ նրա պես,
Ասես լինենք երկու կես...

- Հա, ասել եմ, բայա ջան,
Բայց եղել եմ մտահան,
Մենակ էն եմ ես հիշում՝
Պապդ ոնց էր ձին քշում:
Ձին էլ նրա խելքին էր.
Հենց որ պապդ թամբում էր՝

Սլանում էր քամու պես՝
Հողմ ու մրրիկ էր ասես...

Հետո պապդ մահացավ,
Անտեր մնաց ճերմակ ձին.
Մենք էլ ստիպված տվեցինք
Կողքի գյուղի Վանեսին:
Հոգիս դուրս գար՝ չտալի.
Չէր հարմարվում նոր տիրոջ,
Հերստեղ էր և Վանին,
Ծատ էր ծեծում հայվանին...

Ձին ձեռքից ձեռք ծախեցինք,
Բայց նա էլի տուն եկավ
Պապիդ կարոտն էր քաշում
Հավատարիմ շան նման:
Հետո տարանք հանձնեցինք
Միս-մթերման գործարան,
Բայց այնտեղ էլ ասացին՝
- Ափսոս չի՞ էս տեսակ ձին -
Հրաշք ձի է՝ չի մորթվի...
Էնտեղից էլ՝ տերն առավ
Ու իրենց գեղը տարավ...

Քանի՛ ամիս անցկացավ.
Թե՛ մի տարի... չեմ հիշում.
Մեկ էլ մի օր, իրիկուն
Վրնջոցը լսեցի.
Նայեմ, տեսնեմ ճերմակ ձին
Վարգում է մեր դաշտի մեջ՝
Բաշք ցցա՛ծ, սլացի՛կ...
Մեռնեմ նրա փնչոցին,
Ճերմակ բաշին ու պոչին...

Էլ ի՞նչ կարող ես անել...
Ուրախացանք-լացեցինք
Ուրախացանք-լացեցինք
Ձին ետ՝ մեր տուն բերեցինք:
- Բա ո՞ր է, տատ, հիմա ձին:
- Երկնքում է, բայա ջան,
Գնաց հասավ պապիկիդ.
Ու իրար հետ ապրում են՝
Մեկը մեկով բախտավոր,
Երջանիկ ու փառավոր...

- Լավ է, որ այդպես եղավ -
Ուրախացավ թոռ Հովոն,
- Տա՛տ, ինձ համար, գիտես, չէ՞,
Վերջն ինչքա՛ն էր կարևոր...

Ուրիշ ի՞նչ է հարկավոր,
Երբ սիրով եմ տատ ու թոռ.
Տատը՝ հեքիաթների ծո՛վ,
Թոռն էլ՝ տատի ուզածով...



Անբան փիսոն

Չալտիկ փիսոն փափկամազ,
Օրոր-շորոր ման կուգաս,
Տատը չասա՞ց, որ գնաս,
Թուխս ու ճափն մոիկ տաս,
Իսկ դու մտել մառանը՝
Մուկ ես բռնել ու խաղում,
Քեզ պես դադայ, աներես
Չկա ամբողջ մեր թաղում:

Երբ մտնում ես մառանը,

Լպստում ես չորթանը,
Գողտու յիգում ամեն բան՝
Կաթի, մածնի ամանը,
Թե ո՞ւմ էր պետք մեր տանը
Պահել քեզ պես անբանը...

Տատն ի՞նչ անի, խեղճ տատի,
Ամբողջ օրը բանում է.
Տատը ցորեն է աղում,
Տատը այրուր է մաղում,



Տատը խմոր է շաղում,
Տատը թոնիր է վառում,
Հաց է թխում մեզ համար,
Նաև՝ քեզ պես անբանի,
Ճերմակ փրփուր-լավաշ հաց,
Որ կաթի մեջ փոփ անի,
Քեզ նմանն էլ՝ հո՛րի անի...

Ծառն ու քամին

- Ես եմ ուժեղ, - ասաց քամին
հսկա ծառին,
Հենց որ փչեմ՝ կխոնարհվես,
Ճյուղակտոր կանեմ ես քեզ,
Արմատախիլ կամ՝ երկու կես:

- Հերի՛ք ամբախ-գամբախ խոսես
Քոչվոր քամի թափառական,
Լավ բան արա, թե կարող ես,
Էնպիսի՛ բան, որ օրհնվես,
Թե չէ՝ փչում՝ ավերում ես,
Արածովդ հիանում ես...

- Իսկ դու տեղում լուռ ցցվել ես,
Հետո՞ ինչ, որ բերքատու ես,
Իսկ իմ մասին բան չգիտես,
Չիմանալով՝ խրատում ես:

Չէ՞ որ ես եմ փողոցների
Աղբն ու փոշին սրբում-տանում
Ու օդի մեջ պարեցնում -
Էլ գունավոր փայաս-փույրուս,
Է՛լ տոպրակներ հագարագույն
Ու տերևներ աշնան՝ պես-պես
Քո աչքի դեմ սարքում հանդես...

Իսկ դու՝ խոժոռ, դու՝ անհավես,
Դու մի գլուխ բողբոջում ես...

- Հա, Էդ հարցում «գորավոր» ես,
Բայց ամոթդ կորցրել ես.
Դու քեզ համար վերվարում ես՝
Դեռ մի բան էլ պարծենո՞ւմ ես:

Ճիշտ է, մեկ-մեկ աղբն ու փոշին
Ավրում, տանում, մեկտեղում ես,
Հետո կրկին հերստտում ես,
Ցրիվ տալիս՝ տարածում ես:

Դու քեզ համար թավալվում ես,
Դու քեզ համար ծավալվում ես -
Կապը կտրած բոշի նման՝
Չոլերում ու կալերում ես:

Մեկ՝ սարերում, մեկ՝ ձորում ես,
Մեկ ժայռերի ծերպերում ես...
Որքան կտրես բուք ու բորան,
Մեկ է, վերջում թուլանում ես,
Կորչում, գնում, անհետանում,
Խորշերի մեջ մրափում ես...

Իսկ ես ամեն գարնան գալում՝
Վերընձյուղվում՝ գորանում եմ,
Դարերի հետ՝ ամրանում եմ,
Որովհետև... իմ հողում եմ:

Էնպես որ՝ դու խելոք մնա,
Քոչվոր քամի՛ թափառական,
Արածդ ի՞նչ է, փչելը չէ՞՝
Մեր հարևան ցեղի նման...



Էդուարդ Չոհրաբյան

Ծնվել է Բարձրավան գյուղում, ապրել և ստեղծագործել է Գորիս քաղաքում: Արձակագիր, լրագրող: Մի շարք գրքերի հեղինակ: Կազմել է «Գորիսի հանրագիտարանը»: Գրել է նաև մանուկների համար:




Մթնաձոր

Մթնաձորը, սիրելի երեխաներ, հնում միշտ էլ եղել է լուսավոր, արևի ճառագայթները, ճեղքելով կուսական անտառի խիտ սաղարթները, հասել են նույնիսկ նրա հսկա ծառերի արմատներին, լույս ու ջերմություն սփռել ամենուր:

Բայց մի օր, երբ մայր եղևիկը խաղաղ զբոսնում էր իր ծագուկի հետ, երկու որսորդուհու եկան նրանց դեմ-հանդիպման: Որսորդները նրանց ուղղեցին մահաբեր նետերը: Մայր եղևիկը, զգալով անխուսափելի մահը, աղաչեց.

- Զագուկիս մի՛ խփեք, նա էլ աստծո արարվածն է, թողեք դեռ վայելի լույսը:



Որսորդները հռչակեցին և արձակեցին նետերը: Մայրը մարմնով փակեց ծագուկին՝ իր փայլվուն մարմնին ընդունելով նետը: Եվ երբ նա թուլացած տապալվեց, և արյունը հորդաց ու ծծվեց հողը, դեղնաճերմակ ծագուկն ակնա-

թարթորեն սևացավ: Սևացան նաև անտառի ծառերը, և անթափանց խավարը տիրեց շրջապատում: Մարեց որսորդների աչքերի լույսը, որոնք ճանապարհ չգտնելով՝ խճճվեցին անտառում:

Այդ օրվանից ծորը կոչվեց Մթնաձոր:



Դավիթ Բեկի ծիու սմբակահետքը

Հալիծորի բերդի ավերակների քարերին կա սմբակածև բնական մի հորինվածք: Լեզենդը վկայում է, որ այն զորավար Դավիթ Բեկի ծիու սմբակի հետքն է: Երբ թշամու մեծաքանակ զորքը նեղում է Չորավարի զինվորներին և պիտի նրանց լցներ անդունդը, Դավիթ Բեկի ծին ուժգին վրնջում է, ծառս լինում և հենվելով ետևի ոտքերի վրա, թռչում է ծորի վրայով:

Նրա սմբակներից հյուսվում է ամուր ճուպան, ձգվում ծորից-ծոր, որի միջոցով էլ Չորավարի զինվորները բարեհաջող անցնում են անդունդի հակադիր ափը, այնտեղից հարվածում թշամուն: Զիու թռչելու պահից քարերին դաշվել է Դավիթ Բեկի ծիու սմբակի հետքը:



Չքնաղ Շաքեի ջրվեժը

Գեղեցիկ է Սիսական աշխարհը:

Այս երկրում էր ապրում գեղեցկուհի Շաքեն՝ աղքատ ծնողների զավակ, երկար ոսկեգույն հյուսքերով, երկնի կապույտի պես խորունկ ու փայլվուն աչքերով:

Ամեն անգամ, երբ սարերի թևկունքից ելնում էր արևը և խմում դաշտերի վաղորդյան ցողը, Շաքեն դուրս էր գալիս իրենց խրճիթից, գնում մարգագետինները՝ ծաղկեպսակ հյուսելու: Շաքեն չունեց իր ընտրյալը: Բայց մի տղա իր բարձր սարի լանջից միշտ հետևում էր նրան: Շաքեն երկար ունկնդրում էր հովվի սրնգի քաղցր մեղեդիները:

Բայց արևոտ մի օր, երբ հովիվը երագում էր հովի պես շոյել Շաքեի ոսկե վարսերը, հորիզոնում ամպերն իրարով անցան, ճայթեց ամպրոպը, հոտը ցաքուցրիվ եղավ: Ասես հորիզոնից, սև հեծյալներ ծնվեցին, սև ձիերով, իրենց ճանապարհին սրբեցին տարան ամեն ինչ, խուժեցին Սիսական երկիր: Նրանք կոտորեցին կանանց ու երեխաներին, ծերերին, ավերեցին գյուղերն ու վանքերը...

Շաքեն վազեց դեպի հովվի սարայանջը: Հովիվն էլ ընդառաջ վազեց Շաքեին: Բայց դեռ չէին հասել իրար, երբ սև հեծելազորը կանեց հովվին, և կտրվեց սրնգի մեղեդին: Շաքեն սլացավ ուրիշ ուղղությամբ, ուրիշ դաշտ ու ծորով փախավ չափ գցված ձիերի առջևից:

Շաքեն վազելուց հոգնել էր, շնչառեղծ էր լինում, սակայն շարունակում էր սլանալ ու հեծկտանքի միջից կանչում էր.

- Ինձ ձեր գիրկն առեք, սարեր, ծորեր, ագատեք ձեր Շաքեին:

Բայց ծորերն ու սարերը լուռ էին, չէին արձագանքում Շաքեին, չնայած նրա ծայրը ալիք-ալիք տարածվում էր մինչև երկինք...

Սև ձիերի սև հեծյալներն արդեն շրջապատում էին աղջկան և արդեն պիտի հոշոտեին նրա մարմինը: Այլևս փախչելու տեղ չկար: Իսկ դիմացին խոր, սրածայր ժայռերով քարափն էր: Շաքեն մի պահ կանգ առավ, վերջին անգամ նայեց շուրջը, հայացքով ընդգրկեց ծաղկառատ բնությունն ու բարձր քարափից իրեն նետեց անդունդը:

Ձիերը խրխնջալով ծառս ընկան ու ետ-ետ գնացին: Իսկ Շաքեն մինչ ընկնում էր անդունդի երախը, ցորևագույն մագերն ալիք-ալիք կախվեցին քարափից ու դարձան փրփրաբաշ ջուր...


Սակայն Շաքեն չզգարվեց քարերին ու չփշրվեց: Երբ նրա վարսերը ջրալիքներ դարձան, իջան ու պիտի իրենց գիրկն առնեին աղջկա մարմինն ու տանեին, հովվի սրինգը, որ դարձել էր ահագին գերանի չափ, մեղեդիներ հնչեցնելով՝ հայտնվեց օդեղեն օվկիանոսում, վերցրեց Շաքեին ու տարավ նրան դեպի երկինք...

Ասում են, որ մինչև այժմ էլ երկնքի աստղերի համաստեղության մեջ կան Շաքեն ու հովիվը, որոնք շարունակում են իրենց հավերժական սերը՝ լույս ու ջերմություն ցանելով գարնան մայրաքաղաք բնության վրա:

Այժմ Սիսական աշխարհում կա նաև Շաքեի ջրվեժը, որ դարձել է լույսի աղբյուր ու հագեցնում է հողը պապակ: Կա նաև աղջկա անունով Շաքի գյուղ, որտեղ սերնդեսերունդ հիշում են գեղեցիկ Շաքեին և ջրվեժ դարձած նրա շքեղ վարսերը:

Մերո Խանգադյան

Մեծանուն արձակագիրը գրել է նաև մանուկների, պատանիների համար: Դրանք հիմնականում ժողովրդի մեջ թափառող հետաքրքրական սյուժեներից ու պատմություններից առնված կյուբեր ու նկարագրություններ են, որտեղ մի անգամ ևս համոզվում ենք, որ ականավոր գրողը սիրելի ու ճանաչելի է երեխաների աշխարհը: Խանգադյանի հարուստ գրական ժառանգության մեջ տեղ են գտել ժողովրդական գրույցների, հեքիաթների և գանազան պատմությունների գրառումներ, որոնք հեղինակի վարպետ գրչի գործությամբ վերածվել, դարձել են գեղարվեստական բարձրաճաշակ ստեղծագործություններ: Այդ շարքի գործերը Խանգադյանը հիմնականում ամփոփել է «Ավանդատուն» չափազանց ուշագրավ գրքի մեջ, որից էլ ներկայացնում ենք մի քանի փոքրիկ նմուշ:



Ճուտիկը քնել է



Արթուրիկին քաղաքից բերել էին գյուղ: Նա երեք տարեկան էր: Երբեք գյուղում չէր եղել: Անվերջ վազվզում էր բակում, պարտեզում, ծառերի տակ: Պարտեզում մի փոքր առու կար: Մայրը Արթուրիկին մերկացնում էր, դնում առվի մեջ, լողացնում:

– Շոգ է, Արթուրիկ, դնեմ ջրում, որ զովանաս: Լա՞վ: Այնպես լավ էր ջրի մեջ: Լավ զովանում էր, հետո էլ մի ձու ուտում, մի բաժակ կաթ խմում ու լավ քնում: Տատիկը թուխա ուներ՝ փոփոլ-փոփոլ ճուտիկներով: Այնպես լավն էին ճուտիկները:

Այդ օրը մայրիկն ու տատիկը լվացք էին անում: Արթուրիկը պարտեզում վազվզում էր թիթեռնիկների ետևից: Չէր կարողանում մեկը բռնի, որ տանի մայրիկին ցույց տա: Մոռված կախում էր.

– Ինչ փի՛սն եք:
Ճուտիկները ման էին գալիս ծառի տակ, առվի եզրին.

– Ծիվ, ծիվ:
Նրանք փոքրիկ, փոքրիկ էին: Արթուրիկը խղճաց նրանց: Ախր շատ է շոգ: Նա վերցրեց ճուտիկներից մեկին ու գցեց ջրի մեջ:

Դե թող մի լավ զովանա ճուտիկը: Մայրիկն էլ է եսպես զովացնում իրեն: Ճուտիկին այնքան պահեց ջրի մեջ, որ ձեռքը սառեց:

Ճուտիկին հանեց, դրեց կանաչի վրա: Փոքրիկը քնե՛ց, քնեց: Արթուրիկը գնաց մի ճուռ էլ բռնելու: Թխսամայրը այս անգամ թռավ նրա երեսին: Արթուրիկը ճչալով փախավ տուն:

– Մա՛, են ճուտի մայրիկն ինձ վախեցրեց:
– Ինչի՞, – անհանգստացավ մայրը:
– Ես ճուտիկին բռնեցի, դրի ջրում, որ զովանա...

Հետո ուզեցի մի ճուռ էլ լողացնեմ, էդ թուխա մայրիկը այնպես բարկացավ:

Տատիկն ու մայրիկը վազեցին պարտեզ: Կանաչի վրա քնել էր ճուտիկը:

Մայրն ուզեց քաշի Արթուրիկի ականջը, բայց տատիկը չթողեց: Միայն այդ օրը Արթուրիկն իմացավ, որ հավի ճտին լողացնել չի կարելի:

Աքաղաղը



Արևոտ օր էր: Մերոնք գնացել էին դաշտ: Ես դպրոցից նոր էի եկել ու մեր պատշգամբում նստած մածնաբրդոչ էի ուտում: Մեր հավերը իրենց համար քուջուջ էին անում բակում: Թուփսը ճտերը հավաքած խաղաղ կրթկրթում էր ցանկապատի տակ, իսկ մեր աժդահա աքաղաղը հպարտ-հպարտ սիրաբանում էր հավերի հետ, գլուխը խիզախորեն բարձրացնում, տիրական նայում հավերին ու ճտերին և ոգևորիչ ծայներ հանում: Կարծես ասում էր. «Ձեզ համար հանգիստ քուջուջ արեք, ես այստեղ եմ, ո՞վ կարող է ձեր քեֆին դիպչե՞լ»:

Հանկարծ հավերն իրար անցան: Մի քանիսը կելչալով փախան իրենց բույնը, մյուսները շտապեցին թաքնվել ով որտեղ կարող էր: Թուփսը տագնապալի աղմուկ բարձրացրեց, կանչեց ճտերին: Ցրված ճտերը վազեցին իրենց մոր մոտ: Աքաղաղը, որ թխսամոր հետ էր, ճղճաց ու նայեց վերև...

Հենց այդ պահին օդում թևաբախման ծայն լսվեց: Ապա ծղոտալով, գնդակի պես ցած սլացավ մի գորշ բազե: Թխսամերը զարհուրելի ճիչ արձակեց: Ես վեր թռա տեղիցս՝ հաստատ համոզված, որ մեր աքաղաղը հիմա բազեի բմբուկները շաղ կտա: Բայց մեր կարմիր աքաղաղն

այնպես լեղապատառ ծայն հանեց, այնպես արագ փախավ, մտավ հավաքունը, որ ես զարմանքից քարացա:

Չփախավ միայն թխսամերը: Նա թևերն ուռեցրեց, վիզը ձգեց ու համարձակ կանգնեց իր ճտերի գլխավերևը: Իսկ այն պահին, երբ բազեն փորձեց ճանկել մեկին, նա քաջաբար նետվեց առաջ ու ետ մղեց թշնամուն:

Բազեն նահանջեց, բայց նորից նետվեց դեպի ճտերը: Թխսամերը օրհասական կոփվ սկսեց նրա դեմ:

Ես, որ մեր աքաղաղի անսպասելի արարքից շշմել էի, իսկույն ուշքի եկա ու բաիդ վերցնելով՝ վազեցի թխսամորն օգնելու:

Բազեն հեռացավ: Հավերը մեկ-մեկ դուրս եկան: Բնից դուրս չեկավ միայն աքաղաղը:

– Ես որձակին ի՞նչ է պատահել, – անհանգստացավ տատս:

– Լեղաճաք է եղել, – ասացի ես ու պատմեցի եղելությունը:

– Բոյին նայեք, բոյի՛ն... Մի շան բոյ ունի, բայց հավի սիրտ էլ չկա մեջը, – ասաց տատս զայրացած:

Փոքրիկ խորամանկները



Մի գյուղացի տղա իր համար կոշիկներ էր գնել քաղաքում: Գնել էր, հագել ու գնում էր դեպի իրենց գյուղը: Հանապարհի եգրին, կեռասենու տակ հավաքվել էին մի խումբ քաղաքացի տղաներ՝ կեռաս ուտելու: Բայց նրանցից ոչ ոք չէր կարողանում ծառ բարձրանալ: Տեսնելով գյուղացի տղային՝ նրանք վճռում են նրան խաբել, կեռաս քաղել տալ իրենց համար, դեռ նրա կոշիկներն էլ խլել: Քաղաքային ձևերով նրանք խոնարհ բարևում են գյուղացուն ու խոնարհ ասում.

– Տղա ջան, մենք կեռաս ենք ուզում ուտել, բայց ծառ բարձրանալ չգիտենք: Բարի եղիր, բարձրացիր ծառը, համ դու կեռաս կեր, համ էլ մեզ համար քաղիր:

Գյուղացի պատանին համաձայնվում է:

Նա կոշիկները հանում, խրում է գոտու արանքը ու բարձրանում ծառը: Բարձրանում է, կուշտ-կուշտ կեռաս ուտում, մեկ-մեկ էլ փնջեր անում ցած գցում քաղաքացիների համար: Սրանք ներքևից ասում են.

– Տղա ջան, կոշիկներդ ցած գցիր պահենք: Նրանք քեզ խանգարում են: Երբ իջնես, կհագնես ու կգնաս:

– Չէ, – պատասխանում է գյուղացին, – ես հենց այստեղից եմ գնալու: Այս ծառի ծերից կանցնեմ մյուս ծառը ու այդպես կգնամ մինչև մեր գյուղը:

Ասում է ու մտքում ծիծաղում նրանց վրա:

Սրամիտը



Իրեն խիստ սրամիտ համարող մի մարդ մի օր վեր է կենում դուրս գալիս իրենց տնից, գնում դեպի հարևան գյուղը: Գնում է ամեն տարի այնտեղ հավաքվող սրամիտների մրցույթանը՝ մրցանակ շահելու հույսով:

Գնում է, գնում, հասնում հարևան գյուղի ծայրը: Մի տասը-տասնմեկ տարեկան տղայի է հանդիպում: Տղան քարի վրա նստած, ոչխարի բրդից թել էր ոլորում տրիստաններ գործում տրեխների կապերի համար: Մարդը բարևում է տղային ու ասում.

– Տղա ջան, քո էլ նոր տրիստանները տուր ինձ տրեխներս կապեմ, մտնեմ գյուղ: Իմը հին են, ամոթ է: Վերադարձին քոնը էլի քեզ կտամ, վրան էլ տասը վեգ:

– Շատ լավ, – համաձայնում է տղան: – Դու մի անգամ ոչխարի պես «բա՛» արա, ես տրիսե-

տաններս քեզ տամ:

Մարդը նայում է չորս կողմը, տեսնում է իրեն լսող չկա, ձեռները դնում է ականջներին, կռանում դեպի տղան ու ոչխարի պես

մայրում:

– Բա՛...

Տղան ծիծաղից թուվանում է:

– Դե, էդ է ոչխար ես, էլի՛, ախպեր: Ուրեմն, էլ ինչի՞ ես ինձնից բուրդ ուզում, երբ ոչխար ես, ոչխա՛ր...

Մարդը շշմում, շշկվում է: Էլ ինչպես գնա սրամիտների մրցույթանը, երբ պարտվեց փոքրիկ տղայից: Նա շրջվում է դեպի իրենց գյուղը ու փախչում: Առանց ետ նայելու:

Տղան քրքջում է նրա ետևից:

– Ապե՛ր, բա՛...



Սյունյաց երկիր մշակութային

Հիմնադիր եւ շրջանային «ՍՅՈՒՆՅԱՆ
ՆՇՈՒՆՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2021Թ. ՄԱՐՏԻ 30-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ,
ք. Կապան, Շահումյան
20/32:

(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru

Թղթակցությունները չեն
գրախոսվում եւ հեղինակներին չեն
վերադարձվում: Խմբագրության եւ
հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել: Նյութերը ներկայացնել
մեքենագիր վիճակում:

www.syuniacyerkir.am

Հղումը «Սյունյաց երկիր.
մշակութային» պարբերականին
պարտադիր է:
Հրատարակվում է ՀՀ կրթության,
գիտության, մշակույթի եւ սպորտի
նախարարության աջակցությամբ:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
իրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 10 տպագրական մամուլ:
Տպարանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
10.03.2023թ.:


Օխտն օրորոցի լեգենդը

Ըստ մնդրանիկ Բաղդասարյանի՝ «Քարահունջ գյուղի հյուսիսային մասում, հսկա ժայռերի տակ, ապրելիս է եղել նահապետական բազմանդամ մի ընտանիք: Նույն հարկի տակ սիրով ու հարգանքով ապրելիս են եղել ընտանիքի պատկառելի հայրը, մայրը, յոթ քույրեր, յոթ եղբայրներ, յոթ հարսներ՝ յոթ օրորոցով, թռռներ, ծոռներ, թվով՝ քառասուն հոգի:

Լինում է ահեղ երկրաշարժ: Տան վերելում գտնվող լեռնաշարքից մի ժայռաբեկոր պոկվել, գլորվել ու իր տակն է առել բնակարանը: Այդ դեպքից հետո չարաբաստիկ ժայռաբեկորը կոչվել է «Օխտն օրորոց», ու սերնդեսերունդ պատմությունը հասել է մեզ:

... ժայռաբեկորի տակից շինարարական աշխատանքների ընթացքում դուրս են գալիս կավե ամաններ, սափորներ, տնային գործածության այլ իրեր, որոնք գտնվում են դայրոցի հնագիտական թանգարանում: Հանածոների այդ շարքը հաստատում է այդ լեգենդի ստույգ լինելը:

«Օխտն օրորոց»-ն ունի պատմական նշանակություն, ժայռաբեկորի լայն ողորկ երեսի վրա փորված են հայերեն տառերով արձանագրություններ, արեւի ժամացույց, մարդկանց, կենդանիների պատկերներ:



1935 թ. այստեղ ժամանեց գիտական մի արշավախումբ եւ վերծանեց արձանագրությունները:

Պարզվեց՝ փորագրությունները վերաբերում են 14-րդ դարին:

Հայաստան արձանագրության բովանդակությունը հետեւյալն է՝ «Այս եկեղեցին շինեցի իմ եւ ծնողացս պատվին»:

Եկեղեցու հետքերն այժմ չկան...

Ժայռաբեկորի վերին ծախ կողմում փորագրված են ծիավորներ եւ... հետիոտն մարդկանց գծապատկերներ...

«Օխտն օրորոց»-ն իր մեջ շատ

թաքնված գաղտնիքներ ունի եւ կարոտ է հիմնավոր գիտական վերծանման»:

մնդրանիկ Բաղդասարյանի ուշագրավ այս գրառումի հետ, անշուշտ, համաձայն ենք:

Սակայն չի կարելի չնկատել, որ ժայռաբեկորի վրա իծագրեր են, ինչպիսին տեսել ենք Սիսիանի տարածաշրջանի Ուխտասարում:

Հնարավոր է, որ այդ վայրում ուխտատեղի է շինվել 14-րդ դարում, բայց իծագրերը, անտարակույս, վեց-տասը հազար տարվա վաղեմություն ունեն:

Ինը մանուկ աղբյուրը



հավասար կռվում են գյուղի ազատագրման համար:

Կռվի ընթացքում զոհվում է ինը երեխաների մայր, այդի Սոնան: Նրա հայրը՝ որմնադիր-վարպետ Օհանը, գյուղի նշանավոր թաղամասում՝ Պիծի ծորում, ուր հսկա ընկուզենու ժայռաշղախ արմատների արանքներից ջուր է ցայտում, զարդանախշ կամարով ու կլոր թասով մի աղբյուր է կառուցում՝ իր աղջկա՝ Սոնայի հիշատակին:

Աղբյուրի թասը (գուռը) կնոջ կուրծք է հիշեցնում, որից ջուր խմել հնարավոր է միայն երկու ձեռքով հենվելով գետնին: Ուխտա Օհանն ավարտում է աղբյուրի կառուցումը, առաջինն ինքն է խմում աղբյուրից, նայում դեպի երկինք ու դիմում սրբին. «Այ սուրբ աղբյուր, աղաչանք եմ անում, թող աղբյուրի ջուրը դառնա մեր Սոնայի կրծքի կաթը եւ պահպանի որբացած թռռներին»:

ԱՐԿԱԴԻ ՇԱՏՈՒՐՅԱՆ

Հին Խնձորեսկի յուրաքանչյուր թաղամաս ունեցել է իր նշանավոր կենտրոնական աղբյուրը: Այդ աղբյուրներից շատերը, մարդկանց խմելու ջրի պահանջը բավարարելուց բացի, եղել են նաեւ յուրատեսակ սրբատեղի-հավաքատեղիներ:

Այդպիսի սրբատեղի-հավաքատեղի է եղել նաեւ Ներքին թաղի նշանավոր աղբյուրներից մեկը՝ Ինը մանուկը:

Ժողովուրդն այսպիսի մի լեգենդանման պատմություն է հորինել այս նշանավոր սրբավայր-աղբյուրի մասին:

Թշնամիները հերթական հարձակումն են գործում Խնձորեսկի վրա: Կանայք ու աղջիկներն էլ տղամարդկանց հետ

